

491-99-8

7-29

4183

N 1079

4

2010

1  
3

684

84









**ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:**

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи, представлено было въ  
Кавказскій Ценсурный Комитетъ узаконенное число  
экземпляровъ. Тифлисъ. Декабря 22 дня 1855 года.

**Ценсоръ И. Кайтмазовъ.**



78277-111

1933-87



# ՄԼՍՆ ԼՌԼԶԻՆ

## ՄԼՆԿԼԿԼՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

1.

Մաւոտը, ինչպէս որ զարթում եմ, ես շուտով վեր եմ կենում տեղիցս, շուտով երեսս լուանում եմ իտակի Երես լուանալու ժամանակը քինթս և ականջներս էլ իստակում եմ և մազերս թրչում եմ : Ես իսկի տաք ջրով երեսս չեմ լուանում, այլ միշտ սառը ջրով Էնդուր համար, որ տաք ջուրը մխաս է, այլ սառը ջուրը օգուտ է և զուարթացնող : Երեսս լուանալից յետոյ՝ երեսս, ականջներս և ձեռերս իտակ սրբում եմ, գլուխս սանդրում եմ և շորերս հագնում եմ : Յետոյ դնում եմ պատկերքի առաջևը երեսս խաչ եմ հանում, երեք ծունր եմ դնում և աղօթք եմ անում : Աղօթքները ինձ սովրեցնում են իմ հայրս կամ իմ վարժապետս : Աղօթք անելու ժամանակը ես կանգնում եմ ահով և ջերմեռանդութիւնով : Էնդուր համար, որ աղօթք անել նշանակում է Աստրծու հետ խօսել : Երբ որ մարդ Աստրծու հետ խօսում է և Կրանից բան է խնդրում, պէտք է ահով և երկիւղով և մեծ ջերմեռանդութիւնով խնդրի : Ուրիշ վատ մանկունք աղօթքի ժամանակը համեստ և ջերմեռանդ չ'են կենում : Երբ շատ վատ բան է և Աստուած էտուր համար կրքարկանայ : Աղօթքի ժամանակը պէտք է հանդարտ կանգնել, ոչ ծիծաղել, ոչ շարժիլ և ոչ ձեռքով կամ ոտքով խաղալ : պէտք է միայն պատկերին մտիկ տալ և միաքբ Աստրծու մօտ ունենալ : Աղօթքի ժամանակը խրնդրում եմ Աստծանից իմ հօրս և մօրս, եղբօրներինս, քուրերինս և բոլոր մարդկանց համար կեանք, առողջութիւն և բաղդաւորութիւն :

Մաւոտեան աղօթքից յետոյ դնում եմ իմ հօրս և մօրս ձեռքը խոնարհութիւնով համբուրում եմ և ասում

եմ Բարի լոյս: Յետոյ իմ եղբօրներիս և քուրերիս ատում  
 եմ Բարի լոյս: Մինչև որ ինձ իմ ծնողքս Թէյ ( Գր չայ )  
 կամ հաց կամ ուրիշ բան չբտան , ես չեմ պահանջում  
 և հանդարտ նստում եմ և սպասում եմ : Երբ որ ինձ մէկ  
 բան են տալի , ես հանդարտ ուտում եմ կամ խմում եմ .  
 ոչինչ չեմ Թախում վրէս կամ նստած տեղս և ուտելու  
 կամ խմելու ժամանակը զգոյշ եմ լինում , որ ոչինչ չը-  
 կտորեմ : Եմանապէս ուտելու կամ խմելու ժամանակը չեմ  
 խաղում : Երբ որ չայքս կամ նախաճաշս աւարտում եմ ,  
 ես իմ հօրս ձեռքը համբուրելով շնորհակալութիւն եմ  
 անում : Յետոյ , եթէ դաս ունեմ , նստում եմ կարգալու-  
 իսկ եթէ ուսումնարանի աշակերտ եմ , դնում եմ ու-  
 սումնարան :

2.

Ուսումնարան դնալու ժամանակը ես շուտով հաւա-  
 քում եմ իմ դրբերս , Թղթերս , դրիչս և ուրիշ ինչ որ  
 հարկաւոր է , կապում եմ աղու խիս մէջ կամ դնում եմ  
 ասպրակիս մէջ , որ տանելու ժամանակը չհորցնեմ — :  
 Տնից դուրս գալու ժամանակը , առաջ երեսս խաչ եմ հա-  
 նում , և յետոյ սկսում եմ հանդարտ գնալ : Ճանապարհին  
 չեմ վազում և ոչ որի հետ չեմ խաղում : Ուրիշ վատ  
 աղբքք ճանապարհին փողոցումը ( քուչեքումը ) վազում են ,  
 խաղ են անում , քար են դձում և ուրիշ անկարդ բաներ են  
 անում : Երանց վրա ամէն պատուելի մարդիք բարկանում  
 են կամ ծիծաղում են և ամաչեցնում են : Եթէ նրանք  
 չեն ամաչիլ , են ժամանակը իրանց ծնողքը կամ վարժա-  
 պետները կ'իմանան կամ կրտսենեն կամ կրլսեն և նրանց կը  
 պատժեն : Ես ամաչում եմ ամէն պատուելի մարդից և  
 ուզում եմ որ նրանք ինձ դովեն և սիրեն : Ենդուր հա-  
 մար պէտք է լաւ կենամ և քուչեքումը և տանը ինձ քա-  
 ղաքավարութիւնով և սրբկեշտ պահեմ , որ ամէնքը ինձ  
 դովեն :

Ճանապարհին եթէ ինձ պատահում են իմ ծնողացս  
 ճանաչ կամ բարեկամ մարդիք , ես քաղաքավարութիւնով



գրակն հանում եմ և համեատութիւնով գլուխ եմ տալի նրանց: Աթէ ինձ բան են հարցնում, ես առաջ պէտք է լաւ հասկանամ հարցրածը, յետոյ պատասխան տամ: Պատասխան տալու ժամանակը բառերը պարզ պէտք է ասել, որ լսողը լաւ հասկանայ: Ինչպէս էլ կարդալու ժամանակը պէտք է բառերը պարզ և մէկ մէկ ասել, որ լսողը հասկանայ: Այլ որ ես խօսում եմ հայերէն, պէտք չէ՛ որ խօսքիս մէջը օտար լեզուի խօսքեր խառնեմ: Էնդուր համար որ խօսած լեզուս խառնած չը լինի, այլ խտակ լինի: Աթէ մէկ բանի անունը չ'եմ իմանում, պէտք է վարժապետիցս հարցնեմ և սովորեմ, որ լաւ խօսեմ: Այս փոքրիկ գրքիս մէջ որչափ բառեր կան, որոնց նշանակութիւնը չ'եմ հասկանում, պէտք է վարժապետիս հարցնեմ և լաւ մտքիս պահեմ: Խոնարհութիւնով կ'աղաչեմ իմ պատուելի վարժապետիս, որ ինձ ամէն բառերը հասկացնի: Այս շատ ուրախ եմ, որ սիսեցի կարդալ այս նոր և դեղեցիկ դիւրս: Սրանից ես կըսովրեմ լաւ կարդալ, և ուրիշ հարկաւոր բաներ և բոլոր կարդալուս և լսածս մտքումս կըպահեմ:

3.

Իմ սիրելի հայրս, մայրս և սրտուելի վարժապետս տառեմ են ինձ, որ ես դպուշտութիւնով միան դամ և չըգաղեմ, որ վէր չ'ընկնեմ: Աթէ նրանց խօսքը չը լսեմ և վազեմ, կարելի է, որ վէր ընկնեմ և կամ ոտս կտորեմ, կամ ձեռս, կամ գլուխս, կամ երեսս ջարդեմ և կամ ինձ ուրիշ փորձանք պատահի: Արանք ինձ ասում են, որ ես դանակով կամ ջանկալով կամ մկրատով երբէք չը խաղամ: Աթէ նրանց խօսքը չը լսեմ, կարելի է, որ դանակով ձեռս կամ ուրիշ տեղս կտորեմ. կամ ջանկալով մէկ տեղս ծակեմ, կամ մկրատով մէկ վնաս ստանամ կամ աչքս հանեմ և կամ ուրիշ փորձանք պատահի: Այս շատ սիրում եմ իմ հօրս, մօրս և վարժապետիս և միշտ նրանց խօսքը լսում եմ և հնազանդում եմ, քի, ինչ որ նրանք հրամայում են, ամէն բանը կատարում եմ:

Ով որ իրա ծնողացը կամ վարժապետի խօսքին հնա-

զանդ չը լինիլ, նա շատ վատ տղայ կը լինի և նրան Մատուած չի սիրիլ և կը պատժի: Այս միշտ պատիւ եմ տալի իմ ծնողացս և իմ վարժապետիս: Ենպէս էլ պատիւ եմ տալի սմէն մարդու, ով որ ինձանից մեծ է: Իմ սիրելի հայրս սմէն առաւօտ գնում է իրա գործին, աշխատում է, որ փող ստանայ և իրա տան հոգսը քաշի: Այս անհոգ գնում եմ ուսումնարան, որ բան սովորեմ: Իմ հայրս իմ ասրբուստիս և իմ հագնելու հոգսն է քաշում: Այս պէտք է շատ շնորհակալ լինեմ նրանից: Երբ որ հայրս տուն է գալի, ես ուրախութիւնով գնում եմ առաջ, ձեռքը համբուրում եմ և իմ սովրած բաներս պատմում եմ: Այս շատ ուրախանում է, գովում է ինձ և միշտ ասում է՝ «սմէն Բանը յեռս ինչո՞ւ կորդ է գնալ, Բայց ուսուսուց երբեք ղեկանից ո՛չ ով չի կորդ խել:

4.

Պատուհանի (սկոշկի) մօտ կամ հայելիի մօտ և կամ ուրիշ շուշեղէն բաների մօտ ես չեմ խաղում, Էնդուր համար որ խաղալու ժամանակս կարելի է որ մէկ բան կտրեմ և կտրելու համար իմ ծնողքս կամ վարժապետս բարկանան և ինձ պատժեն: Պատերի վրա ես գիծ կամ խաղ չեմ քաշում, Էնդուր համար, որ եթէ խաղ քաշեմ, պատը խարաբ կը լինի և իմ ծնողքս կամ վարժապետներս կը բարկանան. որովհետեւ նրանք կամենում են, որ տան սմէն աեղը խտակ լինի: Այս չեմ կարող էն բանը անել, ինչ որ իմ հայրս կամ մայրս կամ վարժապետս ինձ չեն հրամայում. և եթէ նրանց խօսքից ես դուրս դամ կամ նրանց հրամանը չը կատարեմ, էն ժամանակը ես կը լինեմ անհնազանդ որդի. և էդ շատ վատ կը լինի ինձ համար, Էնդուր որ Մատուած ինձ կը պատժի: Մատուած հրամայել է որ որդին իրա հօրը և մօրը պատիւ տայ, և ասել է՝ եթէ որդին իրա հօրը և մօրը պատիւ կը տայ, շատ կ'ապրի և բախտաւոր կը լինի: Իսկ եթէ որդին իրա ծնողաց անհնազանդ կը լինի, Մատուած ասել է, թէ անհնազանդ զաւակը կը կորչի: Իմ հնազանդութիւնը էն կը լինի, երբ որ ես նրանց խօսքը կը լսեմ և նրանց հրամանը հնազանդութիւնով կը



կատարեմ, և միշտ պատիւ կրտամ: Իմ ծնողքս և իմ վարժապետս ինձ միշտ հրամայում են շորերս, երեսս, գլուխս և ձեռերս խտակ պահել, և իմ սիրելի մայրս ամէն առաւօտ տունը սրբել է տալի և ամէն բանը կարգով իրանց տեղն է դարսում: Ես էլ պէտք է ամէն բանը կարգով պահեմ և իրա տեղիցը վերջ առնեմ և ուրիշ տեղ չըթողնեմ: այլ եթէ մէկ բան վեր առնեմ, կրկին պէտք է իրա տեղը դնեմ: Երբ շորերս երբ որ հագնեմ, պէտք է խտակ պահեմ, կեղտոտ ձեռերս վրէս չըքսեմ և հողի վրա կամ ուրիշ կեղտոտ տեղ չընստեմ: Երբ որ նոր շորերս հանեմ, պէտք է ծալեմ և իրանց տեղը դնեմ կարգով: Ինչպէս էլ ամէնօրեայ շորերս պէտք է խտակ պահեմ և գիշերը հանելս պէտք է մէկ տեղ հաւաքեմ, որ առաւօտը կարգով հագնեմ: Ինչպէս շորերս, երեսս, գլուխս, ձեռերս, էնպէս էլ գրքերս, թղթերս և ուրիշ բաներս պէտք է խտակ պահեմ:

5.

Երբ որ հասնում եմ ուսումնարան, ես հանդարտ և համեստութիւնով մտում եմ ներս: Եթէ վարժապետը էն տեղ է լինում, ես խոնարհութիւնով գլուխ եմ տալի և գնում եմ իմ տեղը: Կարդալու ժամանակը պէտք չէ որ գիրքը շատ մօտ բռնեմ աչքերիս, որ աչքիս վրաս չըլինի: Եմէն բանից աւելի ես պէտք է պահպանեմ աչքերս, որ չըքոռանամ: Եւշակերտների հետ ես խօսում եմ քաղաքավարութիւնով: Նրանց հետ երբէք կռիւ չեմ անում և ամենեին ոչովի յիշոց (ուշուց) չեմ տալի: Ով որ յիշոց կրտայ, նա լաւ տղայ չէ: Լաւ տղան պէտք է բերանից վատ խօսք չըհանի, և ով որ վատ խօսք ասի, նրա վրա Եստուած էլ կը բարկանայ և ամէն մարդ էլ կընախատի և ոչ որ չի սիրել նրան: Ես երբէք սուտ չեմ խօսում: Սուտ խօսելը մեղք է և շատ վատ սովորութիւն կըդառնայ: Սուտ խօսողին ոչ որ չի սիրել: Երբ որ ինձանից իմ ծնողքս կամ վարժապետս մէկ բան են հարցնում, ես պէտք է ճշմարիտը ասեմ: Եթէ ես մէկ վատ բան եմ արել, չէ պէտք սուտ ասեմ և խա-

բեմ . Էնդուր համար որ իմ սուտ խօսելովն ես պատիժս  
կ'աւելացնեմ . իսկ եթէ ճշմարտօր ասեմ և ներողութիւն  
խնդրեմ , ինձ կրներին և ես կրխօտանամ միտանդամ  
չ'անել , և պէտք է կրկին չ'անեմ Էն վատ բանը : Իսկ եթէ  
միտանդամ անեմ , Էն ժամանակը էլ իմ խօտանալուն չ'են  
հաւատալ և ինձ շատ կըպատժեն : Մանապէս մեղք է եր-  
դուելը (երդում ուտելը) . Էնդուր որ Մտաւած չէ հրամայել :

6

Ինչ դաս որ ինձ վարժապետս տալիս է , ես պէտք է  
առաջ լաւ հասկանամ , մէկ քանի անգամ միտք անելով  
կարդամ , և եթէ հրամայած է անդիլ սերտել , պէտք է  
լաւ անսխալ սերտեմ : Պատս սերտելու կամ դիլը կարդա-  
լու ժամանակը ես պէտք է բոլոր միտքս հաւաքեմ կարդա-  
ցած բանի վրայ , և ուրիշ բաների վրայ միտք չ'անեմ : Եթէ  
միտքս ուրիշ բաների վրայ տանեմ , չ'եմ կարող շու-  
տով հասկանալ և սերտել և Էնդուր համար վարժապետս  
կրբարկանայ : Վարդալու կամ դաս սերտելու ժամանակը ես  
պէտք չէ ձեռքով կամ ոտքով խաղամ . դիլքս պէտք է լաւ  
պահեմ , որ չըհեղատուի . այլ պէտք է հանդարտ կանգնեմ  
կամ նստեմ և մտադրութիւնով կարդամ : Վարդալու ժա-  
մանակը պէտք չէ ուրիշ բաների վրայ միտք անել , այլ մի-  
այն կարդացած բանի վրայ : Վարժապետիս և ամէն պա-  
տուար որ մարդկանց հետ խօսելու ժամանակը ես նստած  
չ'եմ խօսում , այլ ոտքի վրայ եմ կանգնում . Էնդուր հա-  
մար որ նստած խօսելը անբողբալիւթութիւն է :

Եթէ ես դասս լաւ չըսերտեմ , վարժապետս կը բար-  
կանայ և ինձ կըպատժի , և ես էլ բան չ'եմ սովորել և իմ  
անունս կ'ասեն ծոյլ ( Թամբալ ) : Երբեք արեւը որ չէ  
սիրում և նրանք ոչ ինչ չ'են սովորում : Աս ուզում եմ  
աշխատասէր լինիմ , որ բան սովորիմ , և լաւ դիտուն մարդ  
դառնամ : Ին ժամանակը ինձ ամէն մարդ կըսերի , իմ ծը-  
նողքս ինձ համար լաւ շորեր կըկտրեն և ինձ պարզեներ  
կրտան և վարժապետս միշտ կըգովի : Պատից յետոյ երբ  
որ հրաման կրտան խաղալու , ես պէտք է հանդարտութիւնով  
խաղամ : Իմ ընկերներիս մէջնց ես պէտք է կնպէս տղերքի



հետ խօսեմ և խաղամ, որոնք բերանից վատ խօսքեր չեն  
 հանում, և միշտ պարկեշտ են. խի կնայիսի տղերքի հետ,  
 որոնք վատ խօսքեր են խօսում կամ չարութիւն են անում,  
 ես չեմ խաղալ և չեմ խօսիլ. կնգուր համար որ վատ  
 ընկերից ես էլ վատ բաներ կըսովրեմ և ինքս էլ վատ կը  
 լինիմ: Աս չեմ ուզում վատ աշակերտ լինիլ, այլ միշտ  
 հետեւում եմ լաւ, խելօք, հնազանդ և ուսումնասէր ա-  
 շակերտ լինիլ, որ ամէնքը ինձ սիրեն և գովեն:

7.

Արք որ ուսումնարանից արձակեն, ես հանդարտ պէտք  
 է հաւաքեմ իմ գրքերս, թղթերս և ուրիշ բաներս և կա-  
 պեմ աղյուսիս մէջ, որ չբարոյնեմ ճանապարհուով:

Յետոյ պէտք է խմարհութիւնով գլուխ տամ վար-  
 ժապետիս և գնամ տուն: Ճանապարհուով պէտք է հա-  
 մեստ և պարկեշտ գնամ, ինչպէս որ վերը գրած էր: Ասք  
 որ հասնեմ տուն, պէտք է հօրս և մօրս ձեռքը համրու-  
 րեմ. յետոյ գրքերս պահեմ իրանց տեղը և ոչ թէ ուրիշ  
 վատ տղերքի նման վեր դնեմ ինչ տեղ հասնի: Աթէ կար-  
 գով իրանց տեղը չըպահեմ, գրքերը խարաք կը լինին, կը  
 պատռուին և կը կորչեն: Աթէ ես գրքերս կեղտոտեմ կամ  
 կորցնեմ, իմ ծնողքս և վարժապետներս կը բարկանան: Աս  
 չեմ ուզում, որ նրանք ինձ վրա բարկանան: Տանը ես  
 պէտք է խաղամ շատ համեստութիւնով և պարկեշտու-  
 թիւնով: Քուչեքուով խաղալ ամօթ է. ես կարող եմ  
 խաղալ տան մէջ կամ մեր բակուով: Աս պէտք է խաղամ  
 իմ եղբօրներիս կամ քուրերիս հետ:

Աս իմ եղբօրներիս և քուրերիս շատ սիրում եմ. եր-  
 բէք նրանց հետ կախիլ չեմ անում, ինչ որ ունենում եմ  
 մենակ չեմ ուտում, այլ նրանց հետ բաժանում եմ: Աթէ  
 ես իմ եղբօրներիս և քուրերիս չըսիրեմ, ինձ էլ իմ ծը-  
 նողքս չեն սիրիլ և ես վատ տղայ կը լինիմ: Աթէ ես իմ  
 եղբօրներիս կամ քուրերիս հետ կախեմ և կամ նրանց ծե-  
 ծեմ, Աստուած ինձ վրա կը բարկանայ: Աս նրանց պէտք  
 է շատ սիրեմ, կնգուր համար, որ նրանք ինձ են, մէկ

մօրից եհք ծնած և աշխարհչբումը նրանցից աւելի մօտիկ ոչ որ չ'ունիմ : Ինչպէս տանը, էնպէս էլ ամէն տեղ և ամէնքի հետ ես պէտք է սիրով կենամ, որ Աստուած ինձ սիրի և խելօք մարդիքը գովեն :

Եթէ դրացիների երեխերը լաւ տղերք են և վատ խօսքեր չ'են խօսում, ես կարող եմ նրանց հետ էլ խաղալ : Բայց ծառաների հետ երբէք չ'եմ խաղալ : Խաղալու ժամանակը պէտք չէ բարձր ձէնով կանչեմ և գռամ, կամ անկարգ վագեմ և շորերս պատռտեմ և կեղտոտեմ : այլ պէտք է էնպիսի խաղ խաղամ, որ ոչինչ վնաս չբերի ոչ ինձ և ոչ ուրիշին :

Ես գիտեմ որ իողով խաղալը շատ վատ բան է և իմ հայրս շատ աստիկ արգելել է ինձ : Մանապէս չէ պէտք որ քար գձեմ կամ փէտով խաղամ : Ինդուր համար որ քարով կամ փէտով կարելի է որ մէկին վնաս հասնի կամ բան կտորուի : Ես պէտք է էնպիսի խաղ խաղամ, ինչ որ հրաման տան ինձ իմ ծնողքս կամ վարժապետս : Մէկ, երկու սհաթ խաղալուց յետոյ պէտք է նստեմ և միտքս հաւարած դասերս սերտեմ, որ վարժապետիս մօտ գնամ : Եթէ դասերս տանը չբսերտեմ, ուսումնարանումը վարժապետս կը բարկանայ :

8.

Երբ որ ճաշի սեղանը պատրաստ լինի և ինձ կանչեն հաց ուտելու, ես առաջ պէտք է երեսս խաչ հանեմ յոնտան հօր ասելով և յետոյ նստեմ : Սեղանի վրա շատ բաներ կան, որոնց անունները ես գիտեմ և թէ ինչն համար են գործ ածուում : Գդալը, դանակը, չանկալը (պատառաքաղը) դրած են, որ ձեռով չըկարեմ և չ'ուտեմ կերակուրները : Գ կնճակը (տալիետը) դրած է որ բերանս սրբեմ և ուտելու ժամանակը ծնկանս վրա գձեմ : Աղամանը դրած է, որ եթէ կերակուրիս մէջի արը պակաս լինի, դանակի ծայրով վեր առնեմ իողը ար և կերակուրիս մէջ խառնեմ : Սաքսանը (բաժակը) դրած է, որ նրա մէջ ինձ համար ջուր կամ իողը գինի ածեմ և նրանով խմեմ : Ես



սեղանի մօտ ճաշի ժամանակը նստում եմ հանդարտ, ուղեղ և առանց խօսելոյ : Մինչև ինձ մօտ չ'են բերում կերակուրը, ես ուրիշ վատ տղերքի նման չ'եմ պահանջում : Երբ որ բերում են, ես պարկեշտութիւնով վեր եմ առնում և փոքր ինչ ածում եմ իմ առաջիս դրած ամանի մէջ : Եթէ շատ վեր առնեմ և չը կարանամ ուտելու, ամօթ է : Շատ վեր առնելը նշանակում է ագահութիւն : Դս հնքան պէտք է ուտեմ, ինչքան ինձ տան իմ ծնողքը կամ ինձանից մեծերը :

Եթէ սեղանի վրա ինձ բան են հարցնում, ես համեստ և պարկեշտ պատասխան եմ տալի : Բայց երբ որ մեծերը խօսում են, ես հանդարտ նստած լսում եմ և ինքս չ'եմ խօսում մինչև որ ինձ բան հարցնեն : Սեղանի վրա պէտք է զգուշութիւնով ուտել և խմել չափաւոր, որ չը լինի թէ կերակուրը թափեմ սեղանի ծածկոցի (սուֆրայի) վրա, կամ սեղանի վրայից դդայը կամ չանկայը կամ դանակը և կամ ուրիշ բան վեր գծեմ : Ուտելու ժամանակը պէտք է զգոյշ լինիմ, որ կերակուրը վրէս չը թափեմ և շորերս չը կեղատտեմ : Պէտք է հանդարտ ուտեմ և խմեմ առանց շտապելու և ագահութիւնի, բայց հնպէս որ ուրիշները ինձ չը սպասեն : Երբ որ սեղանից վեր կենամ ես պէտք է երես խաչ հանեմ յանրան հըք ասելով և յետոյ հօրս և մօրս ձեռքը համբուրեմ, շնորհակալութիւն անեմ, եթէ մեր տանն եմ : Իսկ եթէ ուրիշն տանն եմ հրաւիրած, պէտք է սեղանից վեր կենալուց և երեսս խաչ հանելուց յետոյ, տան տիկնոջ ձեռքը համբուրեմ և տան տիրոջը գլուխ տամ :

9.

Ինձանից մեծերի և պատուելի մարդկանց հետ խօսելու ժամանակը ես պէտք է շատ քաղաքավարութիւնով խօսեմ : Եթէ իմ անուռնս տան, ես պէտք է ասեմ կրօնք կամ Բողոք կրօնք : Դէ պէտք ասեմ կա՛, այլ պէտք է ասեմ կրօնքե՛ք : Է՛ պէտք ասեմ չէ՛, այլ պէտք է ասեմ ո՛չ : Է՛ պէտք է ասեմ դո՛ւ, այլ՝ դո՛ւք : Դս պէտք է մտիկ անեմ, թէ պատուելի և քաղաքավար մարդիկը ինչպէս են խօ-

սում, նստում և ման դալի, և աշխատեմ նրանց նմանել :  
Արբ որ մէկի տուն գնամ, պէտք է քաղաքավարութիւնով  
դիւրստամ տանտերներին և միւս հիւրերին (ղօնաղներին) :

Ուրիշ տանը եթէ էնպէս բան տեսնեմ, որ մեր տանը չը  
կայ, պէտք չէ որ շատ զարմանամ և կամ խնդրեմ, որ  
ինձ տան, այլ պէտք է միայն մտիկ անեմ և կամ գովեմ :  
Եթէ ինձ բան բնծայեն, ես պէտք է շնորհակալութիւնով  
վեր առնեմ : Բայց ամէն բանը ես վեր առնել չեմ կա-  
րող մինչև որ իմ հոյրս կամ մայրս չըհրամայէ : Աս ամենեւին  
չեմ կարող ոչ մեր տանը և ոչ ուրիշ տանը Թարուն կամ  
առանց հրամանի ուրիշ բանը վեր առնել : Ո՛վ որ ուրիշ  
բանը առանց հրամանի կամ Թարուն վեր առնի, նա գող է :  
Գող անունը շատ վատ անուն է, և Մատուած գողին չե  
սիրել և կըպատժի : Գողին ամէն մարդ էլ չի սիրել և ես  
տեսել եմ, ինչպէս գողերին ձեռերը և ստերը կապած տա-  
նում էին պատժելու :

Աս պէտք է կերակի օրը և ամենայն մեծ տօների օրերը  
գնամ եկեղեցի աղօթք անելու : Եկեղեցին հասարակ տեղ  
չէ, այլ Աստուծու տունն է. էնդուր համար, պէտք է ե-  
կեղեցի մանել մեծ ահով և պարկեշտութիւնով : Արբ որ ե-  
կեղեցիի դրանը մօտենամ, պէտք է դռակս հանեմ և հան-  
դարա մանեմ երես խաչ հանելով : Արբ որ համնեմ իմ  
կանգնելու տեղս, պէտք է առաջ երեք անգամ երես խաչ  
հանեմ ցանոն հօր ասելով և երեք ծունր դնեմ. յետոյ պէտք  
է կանգնեմ և հանդարտ ցած ձենով իմ աղօթքներս  
ասեմ : Եկեղեցումը պէտք է կանգնել համեստ, պարկեշտ  
և մեծ երկիւղով : Պէտք չէ էս կողմը էն կողմը մտիկ անել  
ժողովուրդին, ոչ խօսիլ, ոչ ծիծաղել և ոչ ման դալ : Արբ  
որ տէրտէրները չըբում են, պէտք է ես էլ չըբեմ : Ինչ որ ե-  
կեղեցումը կարդում են և երգում են ես պէտք է ահանջ դնեմ,  
և եթէ դիտենամ, ինքս էլ ցած ձենով նրանց հետ հան-  
դարտ ասեմ. բայց իմ ձենս պէտք է էնպէս հանեմ, որ  
միայն ինքս լսեմ :



Ես տեսել եմ որ ուրիշ վատ տղերքը եկեղեցու մը խօսում են, ծիծաղում են, խաղում են, վազում են և ուրիշ անկարգ բաներ են անում: Այդ շատ վատ բան է. Աստուած էտուր վրայ կրբարկանայ. տէրտէրները էնպիսի տղերքին եկեղեցից դուրս կ'անեն, և նրանց ծնողքը նրանց կրպատեն:

Ով որ եկեղեցու մը համեստ չ'ի կանգնիլ և աղօթք չ'ի անիլ, նա լաւ տղայ չ'ի դառնալ և Աստուած նրան չ'ի սիրիլ:

Երբ որ ժամերգութիւնը կ'աւարտուի, ես պէտք է երեք ծուներ դնեմ և համբուրեմ՝ սուրբ խաչը կամ սուրբ աւետարանը և կամ սուրբ պատկերները, համեստ դուրս դամ եկեղեցից և գնամ տուն: Ճանապարհումը, եթէ ճանաչմարդ պատահի, պէտք է ասեմ որդո՛ք Աստուած. խսկ եթէ ինձ ասեն այդ բանը, ես պէտք է պատասխան տամ՝ որդո՛ք ծնողաց: Վճանապէս պէտք է ասեմ, երբ որ տուն մտնեմ:

Ինչ կարդ որ սովբեցայ էս գրքից առաւօտուայ չայի և ճաշի ժամանակի համար, էն կարգն էլ պէտք է պահեմ իրիկուան չայի և իրիկնահացի ժամանակը: Երբ իմ քնելու ժամանակը դայ, պէտք է առաւօտուայ նման գնամ պատկերքի առաջին երեք անգամ՝ երեսս խաչ հանեմ յանտան հօր ասելով և երեք ծուներ դնեմ, և աղօթքներս ասեմ: Առաւօտուայ աղօթքի ժամանակը պէտք է Աստծանից շնորհակալ լինիմ, որ նա ինձ և իմ ծնողացը, եղբօրներես և քուրբրիս առողջ դարձեցրուց և արժանի արաւ էս օրին, և խնդրեմ, որ էն բոլոր օրը և միշտ պահի ինձ իրա սղարմութիւնով և իրա շնորհքը ինձ պարգևի: Իսկ գիշերը պէտք է շնորհակալ լինիմ Աստծանից, որ նա ինձ, իմ ծնողացը, եղբօրներես և քուրբրիս առողջութիւնով պահեց բոլոր էն օրը, և հասցրուց գիշերի: Վճանապէս պէտք է խնդրեմ, որ էն գիշերն էլ պահի մեզ առողջութիւնով և արժանի անի առաւօտին: Աղօթքից յետոյ ես պէտք է խոնարհութիւնով հօրս և մօրս ձեռքը համբուրեմ և ասեմ նրանց Բարի գիշեր: Յետոյ պէտք է շորերս հանեմ և մէկ տեղ կարգով դնեմ:

որ սուսուօտը առանց դժուարութիւնի գտնեմ, և ապա պառկեմ քնելու :

12.

Ես գիտեմ, որ ինձ ստեղծել է Մտուած : Մտուած ստեղծել է էս բոլոր աշխարհքը և նա է էս ամէն բանի տէրը և պահողը :

Մանց Մտործու կամքին սննդ չի լինիլ, մինչև ծառի տերևն էլ չի շարժիլ : Ես շատ շնորհակալ եմ Մտածանից, որ նա ինձ ստեղծել է և պահում է : Մանապէս շնորհակալ եմ իմ հօրից և մօրից, որ նրանք ինձ ծնել են և իմ մանկութիւնի ժամանակս պահել են և մեծացրել են և մինչև էս օր էլ պահում են, կերակրում են և հագցնում են : Նրանք ինձ համար շատ նեղութիւններ են քաշել և միշտ էլ քաշում են : Իմ հիւանդութիւնի ժամանակը նրանք շատ գիշեր անքուն են մնացել, ինձ համար բժշկի են բերել, դեղեր են առել, և ինչքան ես ցաւից նեղացել եմ, նրանց սիրտը իմ ցաւից աւելի ինձ համար ցաւել է : Ես պարտական եմ իմ ծնողացը շատ պատիւ տալ, հնազանդ լինել, նրանց խօսքից դուրս չըզալ : Ո՛վ որ իրա ծրնողաց երախտիքը, աշխատանքը և բարեարութիւնը կրմուռանայ, նրան Մտուած չի սիրիլ և բախտաւորութիւն չի տալ : Մանապէս պարտաւոր եմ շնորհակալ լինիլ իմ վարժապետներից և նրանց պատիւ տալ, որ նրանք ինձ լաւ բաներ են սովորեցնում : Ենպէս էլ պէտք է պատիւ տամ ամէն պատուաւոր և ծեր մարդկանց :

Երբ որ ես մեծանամ և իմ ծնողքս ծերանան, ես պէտք է նրանց աւելի պատուեմ և նրանց իմ աշխատանքով պահեմ և նրանց ծերութիւնի ժամանակը իմ հնազանդութիւնով քողորացնեմ : Իսկ եթէ նրանց մէկ կերպով կրնեղացնեմ և նրանց սիրտը կըզառնացնեմ, Մտուած ինձ վրա կըբարկանայ և ինձ կըպատժէ : Ես իսկի մէկ ժամանակ չի պէտք մոռանամ իմ հօր և մօր աշխատանքը և նրանց երախտիքը : Երբ որ նրանք մեռնեն, ես պէտք է նրանց հողուց համար աղօթք անեմ և էնդրով իմ



որդիական պարտաւորութիւններս հատուցանեմ: Ամանապէս պէտք է իմ հօր և մօր անունը պատուի և յարգանքով յիշեմ և իմ բարի վարքովս հետեւեմ, որ նրանց անունին պակասութիւն չըլնի, այլ նրանց անունը պատուով պահեմ:

Մեր տան մէջ և ուրիշ տեղերքումը ես շատ բաներ եմ տեսնում, և լսում, և ամէն տեսած և լսած բանս ուզում եմ իմանալ, թէ անունը ի՞նչ է, ինչի՞ համար է և ի՞նչպէս է շինած և կամ ի՞նչպէս պէտք է գործածուի: (\*)

13.

Ես դեռ ես մանուկ եմ: Մանկունք շատ բան չ'են իմանում և էնդուր համար մանկանց ուսում են տալի, որ սովորեն, և մանկունք պէտք է ուսում առնեն: Ինձ ուսում են տալի ուսումնարանումը, և քանի որ ես ուսում եմ առնում, ես աշակերտ եմ: Եւ աշակերտը լսող կը լինի և ականջ կը դնի միայն էն բանին, ինչ որ ուսուցիչը ասում է: Եւ աշակերտը պէտք է մտք անի էն բան վրա, ինչ որ պէտք է անի հասկանայ, և մտքին պահի: Եւ աշակերտը յօժարութիւնով է գնում ուսումնարան, միշտ աշխատասէր է, կարգին է, խտակ, պարկեշտ և խողասէր: Եւ իսկի մին ժամանակ ուշ չի գնում ուսումնարան, անկարգութիւն չի անում ուսումնարանից դուրս գալու ժամանակը, և առանց բանի մողոցներումը չի ման գալի, ոյլ ուղղակի տուն է գնում: Ես ուզում եմ լաւ աշակերտ լինիլ:

Եւ յս գիւրքը, որ ես կարդում եմ, գրած է իմ ուսումի համար: Ինձ համար շատ օգուտ է, երբ որ ես կարդում եմ մտք անելով և հասկանալով: Ես կը հետեւեմ հասկանալ ամէն բանը, ինչ որ կարգամ: Իսկ եթէ մէկ բան չը հասկանամ,

(\*) Ես օգուտեալ կը լինի, եւէ մերոյ գրեալ Բարեկեցութեանի Կանոնները աշակերտները եւ մանկանոց սերտն ՚ի Բերան, ինչ ծոպչը եւ մար ծառայութիւնը պատուան իւրով Տէրեան հարեաւոր գրեւելիք:

կընդդրեմ իմ վարժապետից, որ ինձ հասկացնի: Ես գիտեմ  
էս գրքի անունը: Ես գրած է էս գրքի առաջը երեսին: Ին  
երեսունը նմանապէս գրած է, թէ որ քաղաքումն է  
տպած սա և որ թուին: Իմ գիրքս ունի կաղմ: Ին տունը,  
որ տեղ գիրք են տպում, ասում են տպարան: Ես տե  
սել եմ շատ ուրիշ տպած գրքեր: Ես գիտեմ էն գրքի  
անունը, որ ամենից առաջ սկսեցի կարդալ: — Գիրք չե  
նողը առաջ գրում է թղթի վրայ, յետոյ տալիս է տպե  
լու: Մէկ գիրքը որ տպում են, փոքր ժամանակումը շա  
տանում է քանի մին հազարի չափ:

Ա՛յն գրքի մէջ կան շատ թերթեր: Կազմարարը կա  
րում է այս թերթերը մէկմէկուհետ, որ նրանք չըթարուեն,  
չըկորչեն, կամ չըխառնուեն: Երբ որ ես կըմեծանամ, հիշ  
միւհանից աւելի խելօք կըլինիմ, եթէ հիմի ծուլութիւն  
չեմ անիլ և պարտապ չեմ ման գալ, այլ կ'աշխատեմ և  
ուսում կ'առնեմ: Պարտապ ման եկողը ոչինչ չի սովորիլ և  
ոչ որ նրան չի սիրիլ: Ուսումնարանումը ես պէտք է սով  
րեմ ոչ թէ մենակ վարժ կարդալը, այլ և խոտակ և պարզ  
գրելը և շուտով համարելը: Ո՛վ որ ինքը գրել չըգիտէ,  
և ուրիշն գրածը չի կարող կարդալ, նա աշխատհրքի մէջումը  
շատ ետ կըմնայ ուրիշներից: Ո՛վ որ համարել չըգիտէ, նրան  
շատ անգամ խտրում են և նա չի կարող ինքը իրան պատ  
քահան լինիլ: Ես շատ կըհետեւեմ, որ շուտ սովորեմ կար  
դալ, գրել և համարել: Ես սովորել եմ համարել՝ մէկ,  
երկու, երեք մինչև հարիւր կամ հազար: Իմ հայրս կամ  
վարժապետս ինձ զանազան դրամներ (փողեր) են ցոյց տալի  
և հասկացնում են, թէ ամէն մէկը ինչ աճի: Ինչ բան  
որ տեսնում եմ, ես ուզում եմ լաւ մտիկ անել և իմա  
նալ, և եթէ չեմ հասկանում, պէտք է հարցնեմ հօրս  
կամ վարժապետիս, կամ ուրիշ մեծ մարդու և խնդրեմ  
որ ինձ հասկացնի:

Երբ որ ես մէկ տարեկան էի, չէի կարանում ոչ ման  
գալ, ոչ խօսել և ոչ ինչ չէի հասկանում: Երկու տա



բեկան ժամանակըս ես սովորեցայ խօսել և ման դալ. բայց  
ամէն բանը չի՛ն հատկանում, ինչ որ ինձ ասում էին: Իմ  
անունս է —, ազգանունս է —, ես գիտեմ քանի տարեկան  
եմ:

Ես գիտեմ, թէ ժամանակը ինչպէս է բաժանւում.  
Շարաթը եօթը օր ունի: Օրերի անուններն էլ գիտեմ.  
առաջին օրը կիրակի, երկրորդը երկուշաբթի, երրորդը երե-  
շաբթի, չորրորդը չորեշաբթի, հինգերորդը կինգշաբթի, վեց-  
երրորդը ուրբաթ, և եօթներորդը շաբթի: Չորս շաբաթը  
երբ որ անց կենան, կը լինի մէկ ամիս: Միտը ունի կամ  
30 կամ 31 օր, բայց ՚ի մէկ ամսից, որի անունը փետրւար է:  
Ես փետրվար ամիսը կամ 28 կամ 29 օր ունի: Ես գի-  
տեմ ամիսների անունները: 1. յունվար, 2. փետրվար, 3.  
մարտ, 4. ապրիլ, 5. մայիս, 6. յունիս, 7. յուլիս, 8.  
օգոստոս, 9. սեպտեմբեր, 10. հոկտեմբեր, 11. նոյեմբեր, և  
12. դեկտեմբեր: Երբ որ այս տասներկու ամիսները անց կե-  
նան, կը լինի մէկ տարի: Տարին ունի 52 շաբաթ, կամ 12  
ամիս, կամ 365 կամ 366 օր: Առաջին ամիս (յունվարի)  
առաջի օրը ասում են նոր դարի: Ինչ օրը ազգականները  
և բարեկամները մէկ մէկու շնորհակտորում են և ցանկանում  
են, որ տարին բողոտուր լինի: Բոլիստոնեաները տարիների  
համարքը սկսում են Բոլիստոսի ծնունդի օրից, և են օրից  
համարելով մինչև հիմի անց է կացել 1855 տարի.  
Հրեաները իրանց տարիների համարքը սկսում են աշխարհ-  
քի ստեղծելու օրից: Մահմետականները իրանց համարքը  
սկսում են Մահմետի Մեքքա քաղաքից Մեդինա քաղաք  
փախչելու օրից, որ նրանց լեզուով ասում են Հիջրէի:

Դեկտեմբեր, Յունվար և Փետրվար ամիսներին շատ  
ցուրտ է լինում, ձիւն է գալի և ջուրը սառում է: Ես  
ժամանակի անունն է չմտ: Մարտ, Ապրիլ և Մայիս ամի-  
սներին հնքան ցուրտ չէ, սառուցը հալւում է, ձիւնը քիչ է  
գալի. ծառերը ճլւում են, ծաղկում են և տերեւներ են  
դուրս տալի. ծիծեռնակները սկսում են թռչիլ և բաց.

լում են ծաղիկները : Իս գեղեցիկ ժամանակի անունն է  
Քարան : — Յունիս, Յուլիս և Օգոստոս ամիսներին արե-  
գակը այրում է և շք է լինում . մարդ շքում է , բայց  
շքը հարկաւոր է , էնգուր համար որ շքը հասցնում է  
շատ լաւ միջքեր և ստուղիներ . զորօրինակ՝ տանձր , խնձո-  
րը , դեղձը , սալորը : Իս ժամանակի անունն է ամառ :  
Սեպտեմբեր , Հոկտեմբեր և Նոյեմբեր ամիսներին հով է  
լինում . հաւաքում են և քաղում են միջքերը բուրաստան-  
ներումը , այգիներումը (բաղերումը) և տափերումը : Իս  
ժամանակի անունն է աշուն : Յուլիս և Օգոստոս ամիսնե-  
րին գեղացիքը հնձում են ցորեն մանգաղով (գերանդիով) .  
կապում են խօւրցեր և տանում են կայք և էնտեղ կալ-  
սում են : Յետոյ գեղացիքը հանում են գետնի տակիցը  
գետնախնձորը (կարասֆիլը) , գաղարը , և կտրում են կա-  
քամբը (քալամ , կապուստայ) : Ինչ որ իրանց համար բա-  
ւական է , պահում են ձմեռւայ համար . աւելացածը տա-  
նում են քաղաք ծախելու : Կալած ցորենը ածում են ան-  
բարը . յետոյ քիչ քիչ հանելով ածում են մեծ տոպրակ-  
ների մէջ և տանում են ջաղացքը աղալու համար , որ ալելը  
դառնայ : Ուրեմն տարին չորս եղանակ ունի : Ի՞նչպէս է նը-  
րանց անունները : Հիմիկ մեղանումը ի՞նչ եղանակ է :  
Երբ կրկերջանայ էս եղանակը : Սրանից յետոյ ո՞ր եղանակը  
կրգայ : Ո՞ր եղանակն է ողջից լաւը :

Չմեռւայ ժամանակը , Թէպէտ և շատ ցուրտ լինի ,  
ես պէտք է սիրով գնամ ուսումնարան : Իմ պատուելի վար-  
ժապետս ասում է , Թէ ցուրտը մարդու համար օգուտ է .  
Իմաստութիւն և դիտութիւն սիրող տղան ամէն դժուար-  
ութիւնները պէտք է յանձն առնի : Իւրօրից որ տոն  
մտնեմ , պէտք չէ խկոյն գնամ կրակի մօտ կամ վառարանի  
մօտ (փէչի մօտ) : Եթէ գնամ՝ շատ վնաս կրլինի : Գե-  
ղացիները մեզ շատ օգուտ են , եթէ նրանք չ'աշխատեն և մեզ  
համար ուտելու բաներ չըբերեն , մենք պէտք է ինքներս  
գնանք վար ու ցանքս անենք , որ մեզ համար շատ դժուար  
կրլինի : Դեղացիները պահում են և ծախում են՝ հաւ ,  
սագ (խազ) , բադ (օրգեկ) , աղաւնի , գաւն , ոչխար , այծ ,  
կով , եղ , ձի , և այլն :



Ո՛վ որ քաղցած է , ուզում է ուտել : Ո՛վ որ ծարուհ է , ուզում է խմել : Ո՛վ որ դադրած է , ուզում է հանգստանալ : Ո՛վ որ բարեկիրտ է , ուզում է ուրիշին օգնել : Ո՛վ որ կամակոր (իրասածի) է , ուզում է ամէն բանը իր կամքով անել : Ո՛վ որ կռվատէր է , չէ սիրում սիրով և խաղաղութիւնով կենալ ուրիշներէ հետ : Ո՛վ որ խաղաղատէր է , չէ ուզում ուրիշէ հետ կռվել : Ո՛վ որ հիւանդ է , ուզում է շուտով առողջանալ : Եւտով առողջանալու համար պէտք է որ հիւանդը բժիշկի հրամանները կատարի , և տուած դեղը խմի : Ո՛վ որ ուզում է առողջ լինիլ , պէտք է որ չափաւոր ուտի և խմի : Ո՛վ որ ուզում է բան սորվել պէտք է աշխատասէր լինի և մտքով հասկացող : Ո՛վ որ ուզում է գիշերը լաւ քնել , պէտք է ցերեկը աշխատի և չափաւոր ուտի և խմի : Ո՛վ որ ուզում է որ տանեցիքը իրան սիրեն , պէտք է կարգին պահի իրան , քաղաքավար լինի և խտակ սիրտ ունենայ : Ո՛վ որ ուզում է բան հասկանալ , պէտք է մտաբանի : Ո՛վ որ ուզում է որ իրան դովին , պէտք է իրան խելօք պահի և քաղաքավոր : Ո՛վ որ ուզում է իրա ծնողացը ուրախացնել , պէտք է ուսումնարանումը աշխատասէր լինի , տանք պարկեշտ և հնազանդ լինի , ուրիշ մարդկերանց հետ քաղաքավար լինի : Ո՛վ որ ուզում է իրա շրեքը երկար ժամանակ հագնել , պէտք է խտակ պահի : Ո՛վ որ շատ դրամ (փող) ունի , կարող է մսխել , բայց պէտք է չափաւոր մսխի և մնացածը պահի : Աթէ ինձ հայրս կամ մայրս փող բաշխեն , ես չեմ խարջիլ , և չեմ կորցնիլ . այլ կրպահեմ կամ մօրս կրտամ որ պահի ինձ համար : Աթէ բան ուզեմ առնելու , առաջ հրաման կ'առնեմ . էնդուր համար , որ ես դեռ մանուկ եմ և բաների գինը չեմ իմանում , Աթէ ես առանց հարցնելու առնեմ , ինձ կըխաբեն : Ո՛վ որ սորվել է մէկ արհեստ (վեշակ) , նա կարող է իրան կերակրել : Հիւանդը և տկարը չեն կարող իրանք իրանց կերակրել : Ո՛վ որ ուսումնարանումը աշխատասէր չէ , և ականջ դնող չէ , նա չէ կարող ոչինչ բան սովորել : Սեր տանք շատ սէնեակներ (օթովներ) կան՝ խահանդ (կուխնեայ) :



սառնատուն, նիուղ (սարդաի) և վերնատուն (չերդակ)։ Աս մեր գերդաստանի (ընտանիքի, օղլուշաղի) մէկն եմ . հայրս, մայրս, ես, եղբայրներս և քուրերս 'ի միասին մէկ գերդաստան ենք։ Անալու համար լաւ տուն էն է, որ կ'ունենայ լայս, լայն և ցամաք սենեակներ (օթախներ), լաւ սանդուխտներ, լաւ, ցամաք խահանոյ (կուխնեայ) և նիուղ (սարդաի)։ Աս ամէնը պէտք է դուրսից քամի անց կենալու տեղեր ունենան։ Աս կենում եմ էնպիսի տանը, որ շատ հարկեր (էտաճներ) ունի։ Ամէն մէկ հարկումը շատ սենեակներ (օթախներ) կան, որոնք դառազան անուններ ունին, զօ. առօջնասենեակ (պերեզնեայ), դահլիճ (զալա), հիւրանոց (գօտախնայեայ), սառնատուն, նիուղ (պօղրեր, սարդաի)։ Եւայն։ Մեծ տուներումը լինում է կենալու տեղ անասունների համար կամ ձիանոց (թաւիլայ)։ Չիանոցումը վառարան (փէչ) չէ լինում։ Մանապէս չէ լինում աթու, սեղան, պահարան (չիաֆ, դօլար)։ Բայց մէկ քանի ձիանոցումը ես տեսել եմ անկողնիք (կողնիք) . ում համար է։ Ում որ տունը կրպտականի, նրան ասում են պան փէր։ Ու որ իրա սեպհական (սախութար) տուն չ'ունի, նա պէտք է իրա համար կացարան (կենալու տեղ) վարձի (քրեհի) ուրիշի տանը, ց. ուրիշի տան մէջ կենալու համար նա տալիս է տան տիրօջը տարեկան գինը, ինչքան խօսած են, և էս տուած փողը ասում են պան վարձ (քրեհ)։

Ան տները, որոնց պատերը շինած են ախուսից կամ քարից, ասում են քարի պան, և շատ երկար ժամանակ դիմացող են։ Բարի տունը կարող է կենալ շատ հարկեր տալիներ, եթէ նրան ժամանակ առ ժամանակ լաւ կարկատեն կամ պահպանեն (զամին տան)։

Աս մարդ եմ, էնդուր համար որ կարողանում եմ միտք անել և հասկանալ և ինչ որ խելքս կտրում է, էնպէս անել։ Կարողանում եմ զգալ, կամիլ (ուղել) և խօսել։ Անասուններն էլ կարողանում են զգալ ուրախու-





Թիւն և ցաւ : Եւստի որ ուրախանում է, երբ որ տեսնում է  
երա տիրոջը : Այլ որ շանը խփում են, կամ ուրիշ շուն  
կծում է, նա տնքում է և բղաւում է : Իմ ուրախութիւնս  
կամ ցաւս ես կարող եմ խօսքով յայտնել կամ ասել .  
անասունը չի կարող խօսել : Աս ման եմ գալի ուղիղ, կա-  
րողանում եմ գլուխս բարձրացնել և ամէն կողմ դարձ-  
նել : Անասունները ման են գալի գլուխը կուցրած և չ'են  
կարող երկնքին մտիկ տալ : Աս կարող եմ տեսնել, լսել,  
շօշափել (ձեռքս քսել), համը տեսնել և հոտ քաշել : Ան-  
սուններն էլ կարող են էգ ամէնը անել : Արանք էլ,  
լինչպէս մարդը, ունին հինգ զգայարանք : Մէկ քանի անա-  
սուններ կան, որ մարդից աւելի լաւ են տեսնում և հոտ  
առնում : Աս գիտեմ որ Աստուած ինձ ոտքեր է տուել  
ման գալու համար, աչքեր է տուել տեսնելու համար, ա-  
կանջներ է տուել լսելու համար, լեզու է տուել համը  
խմանալու և խօսելու համար : Գիտեմ որ ամէն մարմինովս  
կարող եմ շօշափել (բանի դպչել) : Անասունն էլ թէպէտ  
էս ամէնքս անում է, բայց նա չի հասկանում : Աս կարող  
եմ հասկանալ, թէ ինչի համար են պէտք երկաթը, քա-  
րերը, կիրը, փայտը, և ուրիշ բաները . բայց անասունները  
չ'են կարող հասկանալ : Աս գիտեմ, թէ ինչի համար տու-  
նը ունի դռներ, պատահաններ (փէշքեր) և ծխնալոյղ  
(բոխեր) : Ինչի համար վառարանը (փէջը) շինում են կա-  
ւից (ցեխից) և ոչ փայտից : Ինչի համար պէտք է ծաղիկ-  
ներին ջուր տալ : Աս գիտեմ, թէ ինչի իմ կոշիկներս  
(չեքմէքս) կարած են կաշիից և ոչ փայտից, կամ երկա-  
թից կամ մահուտից . և թէ ինչի՞ համար սայլը պէտք է  
ունենայ չորս անիւ (ակը) :

Աս հասկանում եմ, թէ ինչի միշտ չ'եմ կարողանում  
էն անել, ինչ որ ուղում եմ . թէ ինչի՞ համար պէտք է  
էն անեմ, ինչ որ ուղում են իմ ծնողքս և վարժապետ-  
ներս : Աս կարող եմ հասկանալ, թէ ինչի համար ամէն  
բանը հնպէս պէտք է լինի, ինչպէս որ կայ . զԾ : Աս գի-  
տեմ թէ ինչի համար դուռը բարձր է, տանիքը (կտուրը)  
տափակ է . թէ ինչի՞ համար վառարանը (փէջը) և բալքը  
(քուրան) շինում են քարից և ոչ փայտից . գիտեմ թէ

ինչի համար են քարով շինում փողոցը (բուչէքը) : —  
Եւ հասկանում եմ, թէ ինչի համար կաթան (ղաղանք)  
պէտք ահանջներ, ինչի համար դանակի մէկ բերանը սուր է,  
իսկ միւսը դուրս. ինչի համար ես պէտք է շինիմ լսող, աշ-  
խատող և ախանջ դնող : Եւ տեսնում եմ, որ սեղանը  
(ստուլը) և աթուռը մէկ մէկու նման են, և գիտիմ, թէ  
ինչով են նման : Տեսնում եմ որ երկուսն էլ շինած են  
փայտից, երկուսն էլ այրում են կրակումը, երկուսն էլ  
սաքեր ունին : Բայց ես հասկանում եմ, որ էդ երկուսը  
մէկմէկու նման չեն. հնգուր համար որ տեսնում եմ հն-  
պէս բան, որ սեղանը ունի, բայց աթուռը չունի, զորօրե-  
նակ . . . . .

Սարգը նման է միխակին հնգուր համար որ երկուսն  
էլ ծաղիկ են, երկուսն էլ լաւ հոտ և լաւ գոյն (ուանկ) ու-  
նին. երկուսն էլ ունին արմատ, տերեւ և ոստ (ճիւղ) : Երկուսն  
էլ ծլում են, երկուսն էլ ծաղկում են քիչ ժամանակումը  
և յետոյ թառամում են (թափում են) : Բայց վարդը  
զանազանում է միխակից հնգրով, որ ուրիշ հոտ ունի :  
Սարդը ըստ մեծի մասին մէկ գոյն ունի, թէպէտ և պա-  
տահում են վարդեր սպիտակ, կարմիր և դեղին. իսկ մի-  
խակը լինում է սպիտակ և նաշխուն : Սարդի թերթերը լի-  
նում են բոլորակ և լայն, իսկ միխակինը նեղ և երկայն :  
Սարդը փուշ ունի, իսկ միխակը չունի : Եւ կարացայ հա-  
մեմատել վարդը միխակի հետ, իսկ անասունը չէր կարող  
համեմատել և հասկանալ. հնգուր համար որ բանականու-  
թիւն չունի : Արտերումը բունում են ցորեան, բրինձ,  
գարի, կանեփ, սագ, լոբի, սիսեռ, գեանախնձոր (կարտո-  
ֆիլ) : — Պարտէզներումը դուրս են գալի տանձ, խնձոր,  
սալոր, կեռաս, դեղձ, կաղին, մոր և այլն : Եւ ամէն  
պտուղները կարելի է ուտել, եթէ հասած լինին : Կրակ  
կամ չըհասած պտուղները կամ մրգեղէնը վնաս են, և շատ  
մրգեղէն միասին ուտելը կըհիւանդացնի :

Պատերը ոչ թէ միայն տալիս են մեզ լաւ պտուղներ,



այլ և գարնան ժամանակին ուրախացնում են սպիտակ , կարմիր և կանանչ տերևներով և ծաղիկներով : Իսկ ամառայ շրջ օրերին հովացնում են շուարով և ձմեռը տաքացնում են մեզ տալով մեզ փայտ : Լնտառներումը (մէշաներումը) շատ ծառեր կան, որ պտուղ չ'են տալի . էն ծառերը կտրտում են վառելու համար, կամ սղոցով բարակ բարակ կտրում են և տախտակներ են շինում : Ծառը կանգնած է պինդ և հաստատ . էնդուր համար , որ ունի պինդ արմատներ (տակուի), որը մտնում են խորը երկրի մէջ : Ծառը և իրա արմատները պատած են հասա կեղևով (կըճեպով), որ է իրեկ հագուստ ծառի : Ծառի վրա դուրս են գալի ոստերը (ճիւղերը), ոստերի վրա տերևները իրանց կոթերով : Պարնան սկզբին ծառի վրա չէ երևում ոչ տերև և ոչ պտուղ, բայց միայն երևում է ծիլը : Լն ծլածները փոքր փոքր բացում են և նրանցից դառնում են տերևներ և ծաղիկներ . յետոյ ծաղիկներից դուրս են գալի պտուղներ : Տերևները զարգարում են ծառը և պահպանում են պտուղներին արեգակի այրելից : Եթէ ծառի տերևները թափուին պտուղների հասնելուց առաջ, էն ժամանակը պտուղները կը չորանան : Եթէ ծառի կեղևը պլոկուի՝ ծառը կը հլուանդանայ և վերջը կը մեռնի (յի կը չորանայ) : Լնդուր համար շատ վատ են անում և մեծ պատիժի արժանի են էն տղերքը, որոնք պլոկում են կամ քերթում են ծառի կեղևը : Ես խկի չեմ պլոկիլ ծառի կեղևը, այլ կ'ուրախանամ մտիկ տալով առողջ և ծաղկած ծառի վրա : Չանած բաներն էլ առաջ ծլում են խոտի պէս, յետոյ էս խոտերը բարձրանում են և նրանց գլուխքներին դուրս է գալի ցորեն, կամ գարի, կամ ուրիշ պտուղ : Չանում են զանազան հունտեր կամ կանանչեղէն, զորօրինակ՝ կաղամբ (քալամ), աղցան (սալաթայ), սոխ, սխտոր, վարունգ (խիար), ձմերուկ, սեխ, դդում, կանանչ լոբի, կարմիր լոբի, բադրիճան, սիսեռ, և այլն : Պարտիզպանները շատ աշխատանք ունին պարտիզի մէջ, նրանք ծառերը պահպանում են որդուհից . եթէ թոյլ են, փայտերով հաստատում են . եթէ ճիւղերը պտուղների ծանրութիւնից կառնում են, տակը փայտ են կանգնեցնում . հասած պտուղները քաղում

են, ամօր ջրում են, հողը դրսում են, սրբում են, և այլն :

Ըմէն անասունները մէկ տեսակ չ'են, շատ մեծ զանա-  
զանութիւն կայ շան մէջ և կատուի մէջ, ճ'նձիգուկի (ծախ)  
և ձկան մէջ, գորտի և սարգի (բուլի) մէջ : Եունք ունի  
չորս սորք և իրա լակտաներին ծիծ է տալի : Ճ'նձիգուկը եր-  
կու սորք ունի, ձու է ածում, և նրա մարմնը ծածկած է  
փետուրներով : Չուկը ոչ սորք ունի և ոչ թեք և մարմն-  
նը պատած է թեփերով : Մա չի կարող ման գալ շան նը-  
ման, ոչ թռչել ճ'նձիգուկի նման. այլ կարող է լողալ, քի  
ջրի մէջ շուտ շուտ փոխել իրա տեղը : Եսրպու ժամա-  
նակը նա շարժում է իրա տուտը (պոչը) և լողական փե-  
տուրները : Մա կարող է ապրիլ միայն ջրումը : Չկնորաները  
(ձուկը բռնողները) ուռկանով (թոռով) կամ կարթով  
(չանկալով) շատ ձկներ են բռնում ուտելու կամ ծախե-  
լու համար : Թեպէտ գորտը չորս սորք ունի, բայց ետեի  
սորքերը աւելի երկայն են, և նրանցով նա աւելի լաւ կա-  
րողանում է լողալ, քան թէ ման գալ : Մա չի կարողանում  
ման գալ, այլ թռչտում է. նա կարող է ապրիլ ջրումն  
էլ : Սորդը (բուլը) ունի ութն սորք. նրա արիւնը կացմիթ  
չէ և սորք չէ ուրիշների արիւնի պէս, այլ սառն է և սպի-  
տակ : Մրա մարմնի վրա շատ խաղեր (գիծեր) կան : Համա-  
րեան թէ ամենայն անասուն ձայն ունի : Չուկները, որ-  
դուկը և սողանը (ճ'իճունները) ձայն չ'ունին : Ողջեց լաւ  
ձայն ունի մարդը, Ես լսել եմ ի՞նչպէս է երգում սօխակը  
(բիւլբիւլը), ի՞նչպէս է հաչում և ոռնում շունը, ի՞նչ-  
պէս են ձայն հանում կովը, սիրամարդին (թաւուղը),  
ի՞նչպէս է խինջում ձին, ի՞նչպէս է մկիւմ այծը, և  
ի՞նչպէս է կռկռում գորտը :

Ըստուած անասուններին տուել է սորք հարուստ :  
Ոմանք վրէն ունին հաստ մաղ կամ մորթ, ոմանք փետուր-



ներ, ոմանք սակ (կաշտ մաղ), կամ սոխոռի կեղև, Մեծ-  
 սունները կերպարանքը շատ զանազան են: Արանցից մէկ  
 քանիսը ձեռքեր ունին, զ՞՞ կապիկները. մէկ քանիսը ոչ  
 ձեռք ունին, ոչ սաք և ոչ ուրիշ անդամ, որ կարողանան  
 շարժել, զ՞՞ օձերը և որդուները ոմանք երկու և ոմանք չորս  
 սաք ունին, ոմանք վեց կամ ութն: Վամի ճիճունս 14 սաք  
 ունի. կան էնպէսները, որ 100 սաք ունին, զ՞՞ բազմոտն:  
 Ոմանք թւքեր ունին, ոմանք լողալու փետուրներ, ոմանք  
 մկրատի պէս մատներ և բէխեր: Աս կարող եմ էնպիսի  
 անասունների անուններ տալ, որոնք ունին մատներ և բէխեր:

Մէկ քանի անասուններ շատ բարակ զգացմունք ու-  
 նին. ագռուները և շուները շատ բարակ հոտոտելք (հո-  
 տով իմանալ) ունին, իսկ արծիւր զարմանալի սրատեսու-  
 թիւն (սուր աչք) ունի: Մէկ քանի անասուններ չունին  
 ոչ ախանջ, ոչ աչք, ոչ քիթ, զ՞՞ անձրեւի որդը: Վա-  
 զանները, որք կենում են անտառներումը (մեշերումը,) և որք  
 մարդից փախչում են, իրանք են գտնում իրանց կե-  
 րակուրը: Ոմանք սպանում են ուրիշ անասուններին և նրանց  
 միսը ուտում են, և էնդուր համար նրանց անունն է գիշակը  
 (լեշ տառ) անասուն: Ոմանք ուտում են սատկած անա-  
 սուններին: Տնային անասուններին կերակրում է մարդը:  
 Արանց ուտելքը շատ զանազան են: Ոմանք ուտում են  
 կանանչ խոտ, ոմանք բոյսեր, ոմանք արմատներ, տերե-  
 ներ, ծառեր, ծաղիկներ մէջն ջուրը, հատեր և այլն:

Ազերը, կովերը, ոչխարները, ձիերը և այծերը ու-  
 տում են կանանչ խոտ և պարտիզների (բոստանի) բոյսեր:

Շունը և կատուն ուտում են միս, հաւերը, թռչուն-  
 քը և սաղերը ուտում են հատեր և դարի: Սեղունները  
 (մեղրի ձանձերը) ծծում են ծաղիկների միջն ջուրը. որ-  
 դուները ուտում են արմատներ: Որտորքը վեր է առնում  
 իրա հրացանը (թփր, թիւֆէսիկ) և մէկ լաւ վաղող շուն-  
 գնում է անտառը և էնտեղ անասուններ կամ թռչուններ  
 է սպանում ուտելու կամ ծախելու համար: Աթ է անասունը  
 կամ թռչունը թուփերի կամ ժայռերի մէջ թախ կացած  
 լինի, շունը վախեցնում է և դուրս է բշում, կամ եթէ  
 սպանածը վեր բնկնի թուփի մէջ, շունը գնում է բերում է:

Ագռաւները և շուները շատ բարակ հոտառութիւն ունին. արծիւը շատ սուր աչք ունի: Անձրեւի սրղունքը ոչ ականջ ունին, ոչ աչք և ոչ քիթ:

Երբ որ անասունը դադրում է՝ պառկում է քնելու. նրանցից մէկ քանիսը քնում են աչքերը բաց, զորօրինակ՝ նապաստակները: Ոմանք քնում են կանգնած, զորօրինակ՝ ձիերը. ոմանք քնում են միայն ցերեկը, էնդուր համար՝ որ գիշերը դուրս են գալի կերակուր դանելու, զորօրինակ՝ բու (բայդուշը). ոմանք քնում են սաղ ձմեռը, և զարթում են էն ժամանակը, երբ որ օդը սկսում է տաքանալ: Թռչունները կենում են օդի միջումը և ունին թեթև հագուստ փետուրներից. ուրիշ անասունները կենում են ջրի միջումը և ըստ մեծի մասին հագած են խլինքստ փետուր, զօ՛. շատ տեսակ ձկներ. ոմանք կենում են գետնի տակը, զօ՛. մուկը, որդները. սրանք ունին հագած կամ բուրդ կամ բարակ և ձգւող կաշի: Աթոթնակեր անասունների վրա շատ զանազան տեսակ հագուստներ է լինում. նրանց կաշիի վրա դուրս եկած է լինում կամ մազ, կամ բուրդ, կամ սաւ (կոշտ մազ), կամ փուշեր, կամ կեղև: Ամենայն անասունը իրա համար թշնամի ունի, որից վախենում է և իրան պահպանում է: Ամենայն անասուն գիտէ, թէ ինչպէս պէտք է իրան պահպանի, երբ իրա թշնամիին պատահի: Ոմանք պահպանում են իրանց մարմինը թշնամիին կծելով, ոմանք ծակելով, ոմանք թարջելով (թախկենալով), ոմանք քացի տալով (ացլի տալով), ոմանք պողահարելով (պողով խիելով), և այլ տեսակ հնարքներով իրանց գլուխը պահում են և թշնամիից ազատում են: Զրի անասուններից ոմանք թշնամիից ազատելու համար պղտորում են ջուրը, ոմանք դարչելի (վատ) հոտ են հանում, ոմանք սոււ մեռնում են կամ լալու ձայնով ուրիշներին օգնութիւն են կանչում:



Անասունները շատ մեծ հողացողութիւնով պահում են և կերակրում են իրանց ձագերին : Չագերի (բալէքի) ծնելուց առաջ պատրաստում են նրանց համար փափուկ, տաք և ապահով բուռն : Մէկ քանի անասուններ, զորօրէնակ շուները, կատունները, ձիերը, կովերը և այծերը ծնում են կենդանի ձագեր և ծիծ են տալի նրանց . հնդուր համար նրանց ասում են կաթնակեր կամ ծիծ ուտող : Ամէն անասուն, որը չորս ոտներ ունի, ասում են չորքոտանի : Թըրչունները և ձկները ձու են ամում . հն հաւկիթներից կամ ձուերից փոքր ժամանակից յետոյ տաքութիւնի զօրութիւնով ծնում են ձագեր : Յուրտ կողմերումը կամ երկիրներումը անասունները ունին շատ տաք հագուստ : Անասուններից ոմանք կենում են օդումը, ոմանք ջրի մէջ, ոմանք գետնի (երկրի) վրա, ոմանք գետնի տակը : Աթնակեր անասունները մարդի համար շատ հարկաւոր են : Մենք չէինք կարող ապրիլ առանց ոչխարների, եզների և կովերի . հնդուր համար, որ մենք ուտում ենք ոչխարի, կովի, եղջ, յորդի, եղջիւրի (մառալի) և այլ անասունների միսը : Ոչխարը մեզ տալիս է կաթը ուտելու համար, և բուրդ, որից մենք շինում ենք մեզ համար շորեր : Ազան միսը ամենից առողջարար կերակուրն է մեզ համար, իսկ նրա կաշին մեզ շատ հարկաւոր է, հնդուր համար, որ կօշիակարը (չէքմէք կարողը) կարում է մեզ համար չէքմէք (կոշիկներ) . շատ երկիրներումը եղջ հարկաւոր է գետինը վարելու համար : Այլը մեզ տալիս է կաթն, որից շինում են իւղ և պանիր . ձիերը մեզ շատ հարկաւոր են լծելու և հեծելու համար, նմանապէս գետինը վարելու համար : Աշներն էլ հարկաւոր են սարսա տեղեքումը, հնդուր համար որ նրանց վրա բարձում են ծանր բեռներ : Անչ որ մեզ համար անում են ձիերը և եղերը, շատ ցուրտ երկրներումը մի և նոյն ծառայութիւնը անում են եղջիւրները (մառալները) . իսկ տաք երկրներումը սղտերը :

Թառաւնները մեզ ուրախացնում են երգելով, գործ են ածւում կերակուրի համար, և օգուտ են բերում մեզ իրանց գրիչներով (փետուրներով), ձուով, երբեմն ևս էն գրով որ ուտում են սատկած անասուններին, ուտում են զանազան միասակար և տգեղ (գէշ) ճիճուններին, մանաւանդ օձերին, գորտերին և խլիզներին: Թառաւնները զանազան են լինում. ոմանք տնային են, զորօրինակ՝ հաւերը, ոմանք ջրային են, զորօրինակ՝ բադերը, ոմանք երգիչ են, զորօրինակ՝ սոխակը, ոմանք գիշակեր են (էշ ուտող), զորօրինակ՝ ուրուրը (չայլաղը):

Չուկը պէտք է մարդուն ուտելու համար: Ենպէս երկիրներ կան, որ բնակիչները սաղ տարի միայն ձուկն են ուտում: Չկան եղը և կաշին շատ բանի համար պէտքա-կան են լինում:

Պեռունները (գեանի ճիճունները) մեզ հարկաւոր են էն գրով, որ ուտում են միասակար խոտերը կամ նրանց սերմերը: Արանք ուտում են սատկած անասուններին, որք եթէ մնան, իրանց վատ հոտովը կ'ապակիանեն օդը: Սնդուն (մեղրաձանձը) մեզ տալիս է մեղը և մօմ (մեղրի մօմ, խտակ մօմ): — Սպունգը (ամպը), որ ջրումը թրչած բանեցնում ենք սրբելու համար, մէկ որդնի շինած բուն է: Տղրուկը (սուլուկը) շատ լաւ գեղ է: Մէկ քանի անասուններ լաւ ներկ են տալի: Խոպանիոյ ձանձերը լաւ գեղ են: Մէկ քանի անասունների կաշին, որի վրա դուրս է եկած փափուկ մազ, գործ է ածւում մուշտակի (քուրքի) համար: Ի՞նչ է էն մարդի անունը, որ մուշտակ է կարում: Իսկ եթէ բուրդը մեծ չէ, քերում են և նրանից շինում են գտակ:

Անասունները, որոնց միտը մենք ուտում ենք, են՝ եզր, յորդը, ոչխարը, գառը, խոզը, այծը, եղջերուն (մառալը), վայրենի այծը, հաւը, սագը, բադը, հնգու հաւը, աղաւնին, և այլն: Անասունները, որոնց կաշին մենք գործ ենք ածում, սրանք են՝ եզերը, յորդերը, ոչխարները, ձիերը, խոզերը, այծերը, եղջիւրները (մառալները), վայրե-



այծերը և էշերը, Փղը (Ֆիլը) կաշեից շինու՛մ են մազա-  
ղաթ թուղթը, որի վրա կարելի է գրել և գրածը ջնջել:

24

Մէկ քանի անասունների կաթը մարդիքը ուտում են  
և խմում են, զորօրինակ՝ կովը, ոչխարի, այծի: Չիու կա-  
թը նմանապէս խմում են մէկ քանի կողմերումը: Իշէ  
կաթը շատ օգտաւէտ է և երբեմն գործ է անւում դեղը հա-  
մար շատ հիւանդութիւնների մէջ: Մարդը ուտում է նմա-  
նապէս պտուղներ, որ հաւաքում է ծառերի և թուփերի  
վրայից. գետնախնձորի, շալտամի, գաղարի, մաղդանոսի ար-  
մատները, և կաղամբի, սպանաղի և եղէգի (սալաթի) տե-  
րէները: Մարդը ոչ թէ միայն ուտում է որ կշտանայ, այլ  
և ուզում է, որ կերածը լինի համալ: Էնդուր համար  
Մատուած, որ իրա սղորմութիւնովը ամէն բանի համար հո-  
գում է, էնպէս է կարգել, որ շատ բաներ կան, որով  
կարելի է կերակուրին լաւ համ տալ: Այսպիսի կերակուրի  
համեմէջները (համ տուողները) են՝ աղ, պղպեղ (իւրիւլ,  
բիբառ), մարեմ, կաքաւախոտ, քեմոն (ղերայ), սաւիթ  
(չլիթ), կարտոն, (քարտոն), մաղդանոս, սոխ, ծօթրին,  
քրքում (զաֆրան) իւղ ձիթապտղոյ (գեյթիւնի իւղ), մա-  
նանիխ (խարդալ), շաքար, կինամոն (դարիչին), բնկոյզ  
հնդկաց, բնկոյզ մշկահոտ (ջալլ), միխակ, կոճապղպեղ  
(գենջէֆիլ): Բացախը նմանապէս համեմէջ է, և լինում  
է կամ գինիից կամ զանազան պտուղներից: Հացի չիւած  
տեղը ամենից լաւ և էթանագին ուտելուն է գետնախն-  
ձորը (կարտօֆիլը): Արան ուտում են զանազան տեսակի  
ալիւր շինած և սաղ սաղ: Գետնախնձորը (կարտօֆիլը)  
հեշտ պահւում է փոսի մէջ կամ նկուղի (սարգաթի) մէջ  
սաղ ձմեռ: Տալիս են ուտելու անասուններին էլ: Օւ-  
նազան տեսակ հողեր կան՝ աւաղ, կաւ, կաւիճ (մէլ), կիր:  
Աւաղը խառնում են կրի հետ. աւաղը անում են գրած  
թղթի վրայ քանի որ թանաքը չի չորացել, որ գրածը  
չի ջնջուի: կաւով և ցեխով շինում են մառարաններ և  
տուներ, կաւից շինում են ախոռ, զանազան ամաններ և

բաժակներ. կաւիճը (մէլը) գործ են ածում գրելու և ներկելու համար. կիրը միայն շինութիւնի համար:

25.

Քարերը նմանապէս զանազան տեսակ օգուտներ ունին. երկանաքարը (Չաղայքի քարը) պէտք է ալեւը աղալու համար. ուրիշ քարեր կան, որ հարկաւոր են դանակ կամ ածելի կամ կացին սրելու համար. ուրիշ քարեր կան, որովքուէքը ծածկում են, որ ցեխ չլինի. կամ առնի և ուրիշ շինութիւնի համար են գործածում. կան քարեր, որ երբ կոկւում են կամ սրում են, պսպղում են, զորօրինակ՝ մարմարիօնը: Մէկ քանի թանկագին և շատ գեղեցիկ քարեր զարդարանքի համար են և աւելում են արհեստ և Լանկաֆին քար: Աւմարը ամենից թանկագին քարն է և օգուտ ունի էնդրով, որ շուշա ածողները նրանով շուշա են կտրում: Հրահանի քարը շատ հարկաւոր է մանաւանդ հրացանի (թիւֆինի) համար. նմանապէս նրանից շինում են շուշա, Թանկագին քարի անուններն են՝ անդամանդ (ալմաս), քաղկեդոն ակն, ակատ, յատպիս, կիճ՝ կարծրակուռ, ամբթովս (լէալ, լալ), յակինթ (եաղութ), զմրուխտ, տպաղիտն, շալիւլայ կամ սալիւրայ: Արկրի մէջից դտնում են ոսկի, արծաթ, սպիտակ ոսկի, պղինձ, երկաթ, կլայեկ, արձիճ, քարի ածուխ, քարի աղ (շուշայ աղ), թանկագին ակներ կամ քարեր: Ոսկուց, արծաթից, սպիտակ ոսկուց և պղնձից շինում են դրամ (փողեր): —

26.

Ամէն տէրութիւններումը կան քաղաքներ և գիւղեր: Գիւղերումը կենում են գեղացիքը, որ երկրագործութիւն են անում և անասուններ են պահում: Անասունների մէջ կենում են ածուխ (գործիլի) շինողները և որսորդները (որս անողները). գետերի և ծովերի մօտ կենում են ձկնորսները (ձուկ բռնողները): Քաղաքների և գիւղերի մէջ իրած տեղերումը կան դաշտեր, արտեր, մարգագետիններ (կանանց



տափեր), անտառներ (մշաներ), թուփեր, լեռներ (բարձր), ապառաժներ (քարեր), հովիտներ, լճակներ (գոլեր), լեռներ, գետեր, աղբիւրներ, և այլն: Ինչ որ քաղաքից կամ գիւղից դուրս է, ասում են արտ: Ինչ տափը, որ ինքն իրեն թաց է և ջրակէտ, և որի վրա դուրս է գալի խոտ, ասում են մարգագետին. իսկ եթէ մեծ տեղ է խոտաբոյս, ասում են արօտ (արածելու տեղ): Բայց ի՞նչ է անունը էն տեղի, որ պատած է որմով (պատով), հիւսուածով (չափառով), և մէջումը կան զանազան պողաբեր ծառեր և ծաղիկներ:

Մեծ տեղը, որի վրա կան շատ պինդ և բարձր ծառեր, առանց կարգի դուրս եկած մէկ մէկու մօտ, ասում է անտառ (մշա): Շատ տափերումը տեսնում ենք բարձր տեղեր կամ բարձրացած հողեր. Եթէ շատ բարձր են, ինչ էնքան, որ նրանց գլուխը հասնելու համար շատ ժամանակ է քաշում, էնպէսին ասում են լեռան (սար). իսկ եթէ սաղ քարից են, ասում են ապառաժ (քարափ): Ինչ տափերը, որի վրա սարեր չըկան, ասում են դաշտ (հաւասար տեղ): Արբեմն դաշտերումը լինում են մանր բլրակներ փորած հողից: Ինչ բլրակները շինում են գետնի մուկները, որք փորում են տափերը և էնդրով վրաս են տալի արտերին:

27.

Հաւասար լայն տեղը երկու կամ շատ սարերի մէջ ասում են հովիտ. իսկ եթէ այս տեղը էնքան նեղ է, որ դժուար կարելի է անց կենալ մէջից մէկ սայլով, ասում են փապար: Արբեմն սարերի մէջ լինում են փոսեր կամ մեծ ծակեր, էնպէս որ շատ մարդ կամ անասուն կարող են մէջումը կենալ, էսպիսի տեղը ասում են այր (մաղարայ). — Տափերումը արբեմն պատահում են ջրոտ տեղեր, և էնքան կակուղ, որ եթէ մարդ ուղենայ անց կենալ նրանց վրայից, մէջը կրկոււի. էսպիսի տեղը ասում են ճահիճ:

Փոքր ջուր հաւաքուած անձրևներից ցամաք տեղումը ասում են լճակ (գօլ). ճահիճներումը կենում են զանա-

զան թռչուններ, զորորինակ՝ արագիւններ (լէկլէկ), կըռունկ, չոլի սագ, և այլն: Ի իճ ասում են մեծ և խորը ջուրը, որ մէկ տեղ կանգնած է առանց գնալու չորս կողմը հող: Ի իճերումը կենում են զանազան թռչուններ, զորորինակ՝ կարասյներ, սագեր, բադեր, ձկնակուլ և այլն: Էնդուր համար որ այդ թռչունները ձուկներ են ուտում, և լիճերումը ձուկներ շատ է լինում: Ի իճերի, գետերի և ծովերի ակերքումը (եզերքումը կամ զրաղներումը) դուրս է գալի և զէգն (ղամիշ), որից շինում են սուրսուի (սեւիթ):

28.

Շատ տեղ ջուրը բղխում է ( դուրս է գալի) գետնի տակից: Էս նշանակում է, որ էնտեղ աղբիւր կայ: Շատ աղբիւրներ, որը վազելով միանում են, դառնում են փոքր գետ: Աղբիւրի ջուրը համարեալ թէ միշտ լինում է սառը, բայց էնպէս աղբիւրներ էլ կան, որոնց ջուրերը այնքան տաք են լինում, որ կարելի է մէջումը ելուել: Հիւանդների համար շատ օգուտ է լեղանալ այդպիսի տաք ջրումը, երբ որ նրանք փոքր սառացրած լինեն: Կան էնպէս աղբիւրներ, որ միշտ ջուր են հանում: Կան էնպէսներն էլ, որոնք ջուր են տալի երբեմն: Եթէ աղբիւրը էլ ջուր չէ տալի, ասում են ցամաքած:

Տարածութիւնը որ օւղեղ տանում է մէկ տեղից միւս տեղ, և որն որ կարելի է անց կենալ երկու սահաթումը, ասում են ճղն կամ եօթն ճրտո: Ի այն ճանապարհը, որի վրայից անց են կենում սայլեր, որն որ տափերի, արտերի, սարերի վրայից անց կենալով տանում է մէկ քաղաքից մինչև միւս քաղաք և չափով լինում է շատ մղոն, ասում են մեծ ճանապարհ փնաար, էնդուր որ նրա վրա կանգնեցրած են ամէն մէկ վերստի վրա մէկ մէկ սիւն: Իսկ ճանապարհը, որ երկու կողմից ունի ծառեր, ասում են ալլէա:

Եթէ ուղեմաս մէկ քաղաքից գնալ ուրիշ քաղաք կամ դիւղ, պէտք է կամ օտով (հետիոտս) գնաս կամ ձիով, կամ սայլով և կամ նաւով: Բնից էժանագին և արահով գնալը կըլինի փոստով: Փոստ կամ փոշտ ասում



են այն մանր սայլերը ամէն մէկը երեք ձիով, որ կարգած են ճանապարհումը տեղ տեղ, և էս տեղերին ասում են իջեան (ստանցիայ)։ Ամէն իջեանումը ինչպէս որ ցոյց տաս անցած թուղթը (պողորմոճենայ), էն սահածին կրտան ձիեր։ Անցած թուղթը (պողորմոճենան) է թագաւորական թուղթ, որի մէջ գրած է հրաման ձիեր տալու․ բայց այս թուղթը ասանալու համար պէտք է բոլոր մղոնների (վերստերի) ծախքը հասուցանել, քի ինչքան մղոն որ կը լինի բոլոր գնալուդ ճանապարհը, իւրաքանչիւր մղոնի համար կ'առնեն 2 կամ 3 կուպէկ ամէն մէկ ձիու համար։ Ով որ իրա կառքը (սայլը) կամ կարեական չ'ունի, նրան իջեանումը կրտան սայլ և ձիեր։ Աւելի հեշտ կարելի է ճանապարհ գնալ դիլիժանսով, քի մեծ կառքով, որի մէջ շատ նստելու տեղերը կան և ամէն մէկ տեղը մէկ մարդ է վարձում։ Ես կառքերը գնում են ամէն շաբաթ իրա նշանակած օրին և սահածին մէկ քաղաքից մինչև միւս քաղաք և միայն ճանապարհորդների համար են։ Եսպիսի կառքի մէջ նստած ինչացողէ անունը ասում են անցաւոր, էն մարդին, որ ձիերին կառք վարում է, ասում են կառքար (ձիբշող)․ իսկ էն մարդին, որ դիլիժանսի հետ գնում է կարգը պահպանելու համար, ասում են ուղեցոյց կամ ինսպեկտոր։

Ես մօտիկ ժամանակումըս համարեալ թէ բոլոր Եւրոպայումը մէկ տեղից միւս տեղ գնալը և ճանապարհորդութիւն անելը շատ հեշտացաւ երկաթի ճանապարհներ շինելից։ Երկաթի ճանապարհները ունին երկու, երեք կամ աւելի բել քի երկաթից շինած խաղ ինչքան պէտքն է լայն և հաստ, որոնք շարած են ուղիղ ճանապարհի վրա, և որոնց վրայով գլորում են կառքերը, որ քաշում է լոգոմոխիլը կամ օբոպարիլը։ Այս լոգոմոխիլը շարժւում է գոլորշեքով (բուղով) և մէկը, երկաթի ճանապարհի վրա, կարող է քաշել իրա ետեւից 15, 20 և աւելի կառքեր կամ սայլեր, որոնց ամէն մէկի մէջումը կարող են լինել 50 կամ 80 մարդ։ Երկաթի ճանապարհի վրա էսպիսի կառքերը անց են կենում մէկ սահածումը 30 մինչև 90 վերտ։ Երկաթի ճանապարհների վրա կան նմանապէս ուրիշ սայլեր կամ կառքեր զանազան ծանր բաներ տանելու համար,

զօ՛ւ ապրանքի , շինութիւնի բաների , անասունների և այլն ։  
 Այս դիւրեւանները ամենայն տեղ չըլան , բայց միայն Աւ-  
 րոպայի մեծ և երևելի քաղաքներումը ։ Աթէ ես իմ ծնողքիցս  
 հետու լինիմ կամ ուրիշ քաղաք դնամ , պէտք է նրանց  
 հետ խօսեմ գրով , նամակով ։ Այս նամակը ( գիրը )  
 պէտք է ծրարի մէջ դնեմ և կնքեմ ( մըհրեմ ) ։ յետոյ պէտք  
 է ծրարի վրա պարզ գրեմ , թէ ո՞ր քաղաք պէտք է հասնի  
 այս գիրը և ո՞ւմ ձեռքը ։ Այս ծրարի վրայի գրածը ասում  
 են հասցէ կամ ադրես ։ Յետոյ պէտք է տանեմ նամակը  
 փոստի տուն և տամ որ ուղարկեն . սալու ժամանակը պէտք  
 է ուղարկելու համար փող տամ . ինչքան ծրարը ծանր լինի ,  
 էնքան աւելի փող կ'առնեն ։ Ինչ Խանապարհորդութիւնը , որ  
 մէկ օր է քաշում , ասում են մէկ օրաց ճանապարհ ։ Ամէնից  
 մեծ Խանապարհորդութիւնը , որն որ մարդը արել է , երկրի  
 բոլորքը անց կենալն է ։ Ով որ ուզենայ անց կենալ , պէտք է  
 գտնեա 5400 մղն կամ 37,800 վերստ անց կենայ նաւով ։  
 Մեծ Խանապարհներումը , քաղաքներումը և գիւղերումը լե-  
 նում են էնպիսի տներ , որոնց մէջ Խանապարհորդները կա-  
 բող են իջանել ( վեր գալ ) և հանգստանալ ։ Այսպիսի  
 տները ասում են պանդոկ ( իջւան ) ։

Իս քաղաքը , որ տեղ ես կենում եմ , ասում են  
 . . . . . Այս քաղաքը ո՞ր Թաղաւորութիւնի քաղաքն  
 է ։ Ամէն մարդու համար իրա ծնած տեղը է նրա հայրենիք ։  
 Ես լսել եմ , որ Ռուսաստանի մէջ 600 քաղաքից աւել-  
 լի է , և նրանց մէջ կենում են շատ միլիոնատոր մարդիք ։  
 Ես գիտեմ Ռուսաստանի երևելի քաղաքների անուն-  
 ները՝ Սանկտպետերբուրգ , Մոսկուա , Ալեւ , ( Ռեասա , Ալա-  
 զան , Րիգա , և այլն ) իմ հայրենիքս շատ մեծ է , ունի շատ  
 քաղաքներ և գիւղեր , որոնց մէջ կենում են շատ հազար  
 մարդիկ ։ Ինչ մարդիկը , որք միասին կենում են մէկ տե-  
 րութիւնի մէջ և մէկ լեղումով են խօսում , մէկ ազգ են ։  
 Ռուսաց տէրութիւնը իրա հազարաւոր քաղաքներով և



դիւղերով Թեպէտ շատ մեծ է, բայց Աւրուպայի մէկ մասն է. Աւրուպան էլ բոլոր երկրի մէկ մասն է. Արկիրն էլ բոլոր աշխարհքի մէկ մասն է. Էն պատճառաւ որ աշխարհք ասելով պէտք է իմանանք բոլոր Մտծու ստեղծած բաները, քի երկիրքը, երկիրը, լուսնեակը, անհամար աստղերը, որ մենք տեսնում են երկիրքի վրա պարզ գիշերը, և արեգակը, որ մէնակ ինքը հազար անգամ աւելի մեծ է մեր երկիրքը:

Աթէ մենք մեր հայրենիքից դնանք և հասնենք էն սեղին, որ տեղ որ նա վերջանում է և սկսում է ուրիշ տէրութիւն, էն կընշանակի, Թէ մենք եկել ենք մեր հայրենիքի սահմանը. Մեծ քաղաքներումը կենում են՝ աշխուականներ, աստիճանաւորներ, արհեստաւորներ, վաճառականներ, ուսեալ մարդիկ, մշակներ, աղքատներ, հարուստներ, զինուորականներ (սպառաւորներ): Ինչ քաղաքը, որ տեղ կենում է կայսրը կամ Թագաւորը, ասում են մայրաքաղաք: Ռուսաց Տէրութիւնի մայրաքաղաքները երկու են Պետերբուրգ և Մոսկուա. Միստրիպուց տէրութիւնի մայրաքաղաքն է—Սկեննա. Պոլսացն — Բերլին. Շվեդացն—Ստոկհոլմ: Տաճկացն — Կոստանդնուպոլ: Ինչ տունը, որի մէջ կենում է կայսրը կամ Թագաւորը, ասում են Պալատ:

Ինչ քաղաքը, որ տեղ կենում են շատ վաճառականներ, և որ տեղ մեծ առուաւոր է լինում, ասում են շահաստան (առուաւորի) քաղաք: Այսպիսի քաղաքներ ըստ մեծի մասին մեծ գետերի կամ ծովերի մօտ են լինում. էնդուր համար, որ ծանր ապրանքները աւելի հեշտ է ջրով բերել կամ նաւով անց կացնել, ինչ որ վաճառականը ծախումը է՝ ասում են ապրանք: Մէն ապրանք մէկ տեսակ չի ծախւում. ոմանք չափով, ոմանք կշեռքով, ոմանք համարքով. փոյտը ծախում են կամ սոյլով կամ սաժեւով (ճ գալով). կտաւը, չուխան (մահաւոր), և ամէն բանբախկեղէն և արքեշուսեղէն բաները ծախում են կանդոււնով (գալով), ջրալի բաները, դրօրինակ կաթը, ձէթը, գինին, գարեջուրը, քացախը, օլին (արաղը) ծախում են շուշայով կամ չափով. իւղը, շաքարը, չայը, կայն, ծախում

են կշեռքով . կշեռքի մէկ թաթի վրա դնում են ծախելու ապրանքը , միւս թաթի վրա զանազան ծանրաչափներ , քի , փութանոց , ֆունտանոց , մախալանոց և այլն :

30.

Ինչ բանով որ մարդը պարապում է և հաց է ճարում , էն նրա արհեստն (վեշակն) է : Արհեստագործութիւնը , տաւար պահելը , պարտիզպանութիւնը (բաղուանչուութիւնը) և առուտուրը արհեստներ են : Ո՛վ որ վարուցանքս է առնում , ասում են երկրագործ , գեղացի , ո՛վ որ պարտեզ (բաղ) է պահում , ասում են պարտիզպան (բաղուանչի) . ժամացոյց շինողը (ասհատապարտ , ) պատկերահանը և քանդակիչը (քար փորողը) արհեստաւորներ են : Հիւսնը (գիւրգալը) , հաց թխողը , գարեջուր շինողը , սղիւսագործը և այլն , արհեստաւոր են : —

Ամէն տեղ , որ տեղ որ մարդիկ կենում են , Աստուած էնպէս առատութիւնով է կարգաւորել , որ փոքր աշխատանքով կարող են նրանք գտնել ամէն իրանց հարկաւոր բաները : Թէպէտ ամէն երկիր միատեսակ առատ չէ և ամէն բանը չի տալի , բայց առուտուրով ամէն մարդ կարող է ձուրել , ինչ որ իրան պէտք լինի :

Աթէ ես իսկեմ բերանս և քիթս , կրմեռնեմ : Ինչու որ համար որ մարդը պէտք է անդադար շունչ քաշի , այսինքն , բերանով և քիթով պէտք է օդ առնի և դուրս տայ , եթէ ուղում է ապրիլ : Աթէ մարդ ընկնի էնպէս տեղ որ չըկարանայ գտնել ո՛չ ուտելու և ո՛չ խմելու բան , կրմեռնի քաղցածութիւնից և ծարաւութիւնից : Աթէ շատ ցուրտ ձմեռ ժամանակը մարդ ճանապարհումը լինի և դուրս անի չըդիմանայ , կըստուչի և կըմեռնի , էնդուր համար որ մարդուս կեանքի համար պէտք է տաքութիւն : Աթէ նոր ծնած երեխին թողնեն չորումը և հոգս չ'անեն նրա համար ո՛չ ուտելուն , ոչ խմելուն , ո՛չ խտակութիւնին , ո՛չ տաքացնելուն , ոչ հագուստին՝ նա կըմեռնի , կամ եթէ չըմեռնի , հասկացողութիւն չի ունենալ , ո՛չ խօսիլ կըսովի , ո՛չ լաւ ման գալ . էնդուր համար որ երեխերը սովում



են խօսիլ և ման գալ լսելով մեծերի խօսելը և տեսնելով մեծերի ման գալը. և բան էլ հասկանում են մեծերի սորվեցնելով : — Ուրեմն օգր, տարութիւնը, կերակուրը, հագուստը, բնակարանը (կենալու տեղը), և իրան նմանների մօտ կենալը անպատճառ հարկաւոր են մարդուն որ կարողանայ ապրիլ : Այս ամէն բաները ասում են առաջին պիտոյք (հարկաւորութիւնք) մարդոյ : Մենք կարող ենք ապրիլ թէ և գինի չըխմենք, ճերմակ հաց չ'ուտենք և արբեշու մի շորեր չըհարենք : Ենդուր համար որ այսպիսի բաները առաջին հարկաւորութիւններ չ'են մարդու համար, այլ միայն ունեցողների հեշտութիւնն են ցոյց տալի :

31.

Ո՛ր որ դադարած է, հանդարտ է քնում չոր գետնի վրա էլ . բաց նա աւելի կ'ուղէր քնել փափուկ կողինքի վրա : Կոշտ աթոռի վրա շատ լաւ կարելի է նստել և հանգստանալ . բայց 'ի հարկէ, աւելի հանդիստ կըլինի նստել փափուկ գայհոյքի (կրեսլայի) վրա : Շատ հաստ մահուտից կարած շորերը շատ օգուտ է, էնդուր համար որ պահպանում է ցուրտից, քամիից և անձրևից, բայց 'ի հարկէ աւելի ախորժելի է ունենալ հագուստ բարակ մահուտից գեղեցիկ կոճակներով : Ուրեմն փափուկ կողինքը, փափուկ աթոռը և թանկագին հագուստը առաջին հարկաւորութիւններ չ'են մարդոյ համար, այլ նրա հեշտութիւնի և հանգստութիւնի համար են : Ինչի՞ համար են պէտք հայելին, ժամացոյցը (սահաթը) և քնարը (սաղը) : Եթէ մենք ունինք առողջարար և բաւական կերակուր կամ ուտելիք, խտակ շորեր և լաւ բնակութիւն, պէտք է բաւական լինենք և շորհակալ, թէ և չ'ունենանք շատ համով և թանկագին կերակուրներ, հագուստներ և այլն : Հագուստը պահպանում է իմ մարմինը ցուրտից, շոքից, քամիից, անձրևից և փոշիից (թոպից), և տարացնում է ինձ : Մէկ քանի հագուստներ կան, որ պէտք են մէկ քանի արհեստների համար, զտրորինակ՝ զինջազը (փեշտամարը) հաց թխողների համար, կաւազործների (աման շինողների) համար,

աղիւսագործերի և (գիւրգարներ) համար: Ի՞նչ պատճառի ... Ուրեմն շորերից կարելի է ճանաչել թէ ով ինչ արհեստի մարդ է, և ես կարող եմ զանազանել շորերով գեղացիին քաղաքացիից, քահանային (տէրտէրին), վաճառականից, հաց թխողին ծխնալոյղ (տրուբայ) սրբողից, զինուորին (սողատին) աշակերտից: Հագուստը ոչ թէ մէնակ մարմին պահպանելու և տաքացնելու համար է, այլ և զարդարանք է. եթէ գեղեցիկ է կարած և թանկագին բանիցն է, ասում են զարդ: Այնից լաւ դարձը մարդու համար է խառակ շորերը, որ իրա վրա յարմարացրած է:

32.

Ես իմ շորերիս անունները գիտեմ և կարող եմ ասել, թէ ո՞րը նրանցից շինած է կաշիից, ո՞րը բամբակից կամ ո՞րը բուրդից, կամ արբեշումից: Ես գիտեմ թէ ի՞նչ կ'ասեն էն մարդին, որ շինել է իմ դեպքը, և թէ ինչէնցն է շինել: Ո՞վ է շինել իմ շապիկիս համար քաթանը և ո՞վ է շինել կաշին իմ կոշիկներիս համար: — Ես իմ մարմնովս կարող եմ զանազան շարժմունքներ անել, որոնք անասունները չ'են կարող: Ես կարող եմ մանդալ, վաղել, թռչտակ, թռչտակով մէկ բանի մօտ հասնել, կռանալ, մարմնս ամէն կողմ դարձնել, կաքաւել (պար դալ, խաղալ), սայթաքիլ (սլալ), չոքել, պառկել, նստել, վերկենալ: Ես կարող եմ ուրիշներին յայանել իմ միտքս, կամքս, յանկուծիւնս, երեակայութիւնս և զգացմունքս բառերով, քի խօսելով. անասունները չ'են կարող խօսիլ: Ես կարողանում եմ տեսնել էնդուր համար որ ունիմ երկու առողջ աչք, կարող եմ լսել էնդուր համար որ ունիմ — երկու ի՞նչ ... Ես կարող եմ ամէն բանի համը իմանալ էնդուր համար, որ ունիմ լեզու և քիւր: Կարող եմ հոտ առնել, էնդուր համար որ ունիմ քիթ: Ես կարող եմ շոշափել բոլոր մարմնովս, բայց շոշափելու զօրութիւնը ես ունիմ աւելի մատներին ծայրերումը: Ես տեսնում եմ լուսնեակը, արեգակը և աստղերը, տեսնում եմ մարդիկ, անասուններ, ծառեր, բոյսեր, խոտեր, քարեր, սա-



բեր, բլուրներ, դաշտեր, դեպքեր, լիճեր, աղբիւրներ, քաղաքներ, գիւղեր :

( ) դուռնք ես տեսնում եմ Թռչուններ, ճանճեր, մոծակներ, Թիթեռներ: Գետնի մէջ որդունքներ, ջրի մէջ ձկներ, գորտեր և որդներ: Ես լսում եմ Թռչունների երգելը, որտուումը (ամալի դուռնք), զանգակի հնչելը (ձայնը), մարակի (մաթրախի) տրխկալը, ձիու խննջալը, սղբիւրի կարկաչելը, քնարի (սաղի) ձայնը և ծոյի ժամացուցի (սհաթի) հարուածքը (չիչկալը) : Հեռու տեղից ես կարող եմ զանազանել շան հաչելը, սըլարի ձայնը, զանգակի հնչելը և հրացանի (Թիւֆեհի) կամ Թնթանօղի (զարբաղանի) Թնդիւնը :

33.

Ես զգում եմ որ կրակը այրում է, իսկ սառը աղբիւրի ջուրը հովացնում է. արեգակի ճառագայթները տաքացնում են, քարը կոշտ է, բուրդը փափուկ է, սառուցք սառն է, հայելին ողորկ (կոկ) է : Ես զգում եմ շաքարի քաղցրութիւնը, քացախի Թթվութիւնը և նուշի դառնութիւնը : Օռարձութիւնով հոտ եմ առնում վարդը, միխակը, ռեհանը, և զգուելով հոտ եմ առնում սխտորը, կայն : — Ես միտս եմ բերում էն պատմութիւնը, որ կարդացել եմ կամ լսել եմ. էն ուրիշ երկրից եկած մարդուն, որ մէկ անգամ տեսայ, միտքս եմ բերում էն ցաւը, որ քաշեցի հիւանդութիւնիս ժամանակը, և էն, ինչ որ սուսմարանումը տրվել եմ : Ես կարող եմ երեւակայել մտքումս, Թի ի՞նչ ձև ունի նաւը, էնդուր համար, որ շատ անգամ տեսել եմ շինած կամ պատկերքի վրա քաշած նաւեր: Ես կարող եմ մտքումս տեսնել իմ հօր, մօր, եղբորներին և քուրբերիս կերպարանքը, Թէպէտ հիմի նրանք էստեղ չեն :

Ես կարող եմ միտքս բերել ամէն բանը, ինչ որ տեսել եմ, լսել եմ, կամ զգացել եմ. կամ ես կարող եմ նկարագրել մտքումս էս ամէնը առանց օգնութիւնի զլիսի, ձեռքիլիս, ոտներիս, սչքերիս, ակամ ջներիս և քթիս :

Եւն կարողութիւնները, որով ես մտածում եմ, միտքս եմ բերում, հասկանում եմ, ցանկանում եմ, կամենում եմ կամ պահանջում եմ — մարմինիս զօրութիւնները չ'են, այլ հոգիիս զօրութիւններն են. Իմ հոգիս իմ մէջս է. ես նրան չ'եմ տեսնում, բայց նրա զօրութիւնները իմանալով հասկանում եմ, որ ես հոգի ունիմ. Աւանց հոգիի մարդ մեռած է. եթէ ես հոգի չ'ունենայի, ոչ ինչ չ'էի կարող հասկանալ, ոչ ինչ սովբել. չ'էի կարող ոչ համարել, ոչ գրել, ոչ կարգալ, էնդուր համար որ երբ ես կարդում եմ կամ համարում եմ, էն ժամանակը միտք եմ անում. իսկ միտք անել կարող եմ միայն հոգւով. — Հոգւովս միտք եմ անում, երբ որ համարում եմ թիւերը, մէկ մէկու վրա աւելացնում եմ, մէկ մէկուց հանում եմ, բազմապատկում եմ կամ բաժանում եմ. Հոգւովս միտք եմ անում էն մարդկանց վրա, որոնց համար վարժապետս մէկ բան է պատմում կամ ինչ որ ես նրանց համար կարդում եմ գրքումը. Հոգւովս միտք եմ անում էն խաղերի վրա, որ պէտք է խաղամ, երբ որ դասերս կ'աւարտեմ. Հոգւովս միտք եմ անում էն պատիժների վրա, որ ուսուցիչս նշանակել է ծոյլ և չար աշակերանների համար:

34.

Ես ոչինչ խելօք բան չ'էի կարող ասել, եթէ հոգի չ'ունենայի և հոգւովս միտք չ'անէի. Ես խօսում եմ իմ վարժապետիս հետ, պատասխան եմ տալի նրա հարցմունքներին. Ես այս պատասխանները առաջ սերտած չ'էի, այլ առաջ միտք արեցի վարժապետիս հարցմունքի վրա, յետոյ պատասխան տուի. Ես չ'եմ ուզում իմ շրեբս փոխել աղքատի կտրոած շրեբի հետ, էնդուր համար որ համեմատելով իրարու հետ, ես տեսնում եմ, որ իմ շրեբս պատուած չ'են, մաշած չ'են, ուրեմն աղքատի շրեբից լաւ են. Ես շրեբի համեմատելումը և տեսնելումը, թէ իմը աղքատի շրեբից լաւ է, ես գործ եմ ածում հոգիս կամ խելքս: Ես կամենում եմ իմ հին շրեբը փոխել ճար



վրա և էստուր համար գործ եմ ածում իմ կամքը : Այս տե-  
սել եմ , թէ ի՞նչ է անում գեղացին , երբ որ կամե-  
նում է պատրաստել գետինը վարելու կամ ցանելու հա-  
մար : Այս լծում է եղները կամ ձիերը փոքրիկ սայլումը ,  
որ ասում են գութան : Այս գութանը ունի երկու անիւ  
(ակը) , ետեւը մէկ տախտակ , որի վրա հաստատած է խոփը  
(սուր երկաթը) , կամ անիւ չ՛ունի , միայն երկաթ ունի :  
Այս գութանով գեղացին ման է գալի տախտակը , խոփը  
(սուր երկաթը) խորը մտնում է գետնի մէջ , միւս երկա-  
թը , որ նրանից աւելի լայն է , ներքի հողը գձում է վեր և  
կտրած գետինը շուռ է տալի : Յետոյ վարած գետնի  
վրա ցանում է սերմերը՝ ցորենի , գարբի , բրնձի , եայլն , և  
այս սերմերը խառնում է հողի հետ սանդղի պէս փայտով ,  
որ ասում են փոցի : Այս ամէնը տեսնելով ես հասկա-  
նում եմ , թէ ի՞նչ է երկրագործութիւնը :

35.

Այլ որ մինչև այս դասը լաւ մտադրութիւնով կար-  
գացել է , նա հեշտ կարող է պատասխան տալ հետագայ  
հարցմունքներին : Ի՞նչ է ուզում քաղցածը , ի՞նչ է ու-  
զում ծարաւը . ի՞նչ է ուզում աշխատասէր աշակերտը ,  
ի՞նչ է ուզում ծոյրը . ի՞նչ է ուզում դագրած մարդը .  
ի՞նչ է ուզում հիւանդը . ի՞նչ է ուզում գողը . ի՞նչ  
կ'ասեն ամէն բանին , որ կարելի է ուտել : Ի՞նչ կ'ասեն  
ամէն բանին , որ կարելի է տեսնել . ինչ կ'ասեն ամէն բա-  
նին , որ շատ դրամ (փող) չ'աժի : Այլն անատուններին ,  
որոնք կաթնով են մեծացնում իրանց ձագերուն , ի՞նչ կ'ա-  
սեն : Այլն անասուններին , որք կարանում են թռչել , ի՞նչ  
կ'ասեն : Այլն ձեռքիս վրա ես ունիմ — . ամէն ստիս վե-  
րայ ունիմ — . ձեռքով կարող եմ ես — . ոտքով կարող  
եմ — . լեզուով կարող եմ — : Այն մանկանց , որոնք  
իրանց ծնողաց չ'են հնազանդում , ասում են — : Այն  
մանկանց , որ իրանց ծնողացը ուրախացնում են , ասում  
են — : Ի՞նչ պէտք է անի չ'իմացողը . ի՞նչ պէտք է անի  
հիւանդը . ի՞նչ պէտք է անի անբարարակարը . ի՞նչ կա-

ըող է անել Հարուստը . ի՞նչ կարող է անել Հզօր մարգր . ի՞նչ կարող է անել աւող ջր : Առանց մը անասունների չ'ի կարող մարդ կառավարուիլ երկրավարութիւնի ժամանակը : Ո՞ր անասունից պէտք է շարհակալ լինինը, որ մենք հանգիստ և փափուկ անկողինը ունինը : Ո՞ր թռչուններն են երգում : Ո՞ր թռչունները մարդու ձայնինը ման ձայն են հանում : Ո՞ր անասունները հարկաւոր են մարդու համար : Ո՞ր անասունները վնաս են տալի արտերին կամ բաղերին :

Կարող ես ինձ ասել, թէ էս տանը ի՞նչ կայ հիւսնի (գուրգարի) շինած կամ դարբինի շինած : Ի՞նչ է անունը այն բանի, որ ամէն տան մէջ պէտք է շինած լինի, թէպէտ և տարիի մեծ մասը չի դորձ ածուում : Ի՞նչ անթկամ աման անպատճառ պէտք է լինի խահանոցումը (կուխումը) :

36.

Ասա ինձ քո գլխի ամէն մասունքի անունները, ամէն քո հարկաւոր բաների անունները : Ա՞յն բաների անունները, ինչ որ բանացնում ես ուսումնարանումը : Ա՞յն անասունները, որոնց միտը դու կերել ես : Հիմի ասա ինձ մէկ քանի վայրենի անասունների անուններ և մէկ քանի թռչունների անուններ : Աս կարող եմ մէկ քանի ճակների անունները ասել և մէկ քանի թանկագին քարերի անուններ : Աս գիտեմ մէկ քանի վայրենի անասուններ, որոնց միտը կարելի է ուտել, և հնպէս անասուններ, որոնց մարթին թանկ է . կարող եմ հնպիսի անասունների անուններ ասել, որոնք կենում են դեանի տակը : Ասա ինձ հնպէս բաների անուններ, որոնք կանանչ դոյն ունին կամ սեւա գոյն ունին : Հիմի ասա հնպէս բաների անունները, որոնք շատ թեթեւ են, կամ շաա ծանր են : Ասա ինձ այբուբենի տասներորդ տառի անունը, տարւայ վեցերորդ ամսի անունը, ձմեռւայ ամիսների անունները, մէկ գարունքի ամսի անունը, և մէկ աշունքի ամսի անունը : Ո՞ր ամսին որ դու ծնել ես, նրա անունը ի՞նչ է : Ասա ինձ մէկ քանի



բաների անունները, որոնք ջրի մէջ մեծանում են և ծանրանում են, կամ որոնք ջրի մէջ հալուում են կամ լողում են : Այսինքն մէկ շատ քաղցր բանի անուն, մէկ շատ թթու բանի անուն, մէկ շատ դառն բանի անուն : Այսլե մատուցի անունները, դանակի, դրիչի, պատուհանի (փանջարի) և դռան : Աշուներին օդը լինում է — . ամառը լինում է — . աշուներին պտուղները ի՞նչ են լինում . դարունքին ծառերի վրա դուրս են գալի — : Չմեռը ջուրը լինում է շատ — . սիլ որ ձմեռը չի ուղում մտել, պէտք է — . ուլ որ չի ուղում աշխատել, այլ ուղում է պարպ ման գալ, նրա անունն է — : Ուլ որ ուսումնարանումը չի հետևում և չի ականջ դնում, չի կարող ոչ ինչ — և կրմայ — :

Աթէ ձմեռը շատ ձիւն գայ, մարդիկ ման են գալի — . ջրի վրա ման են գալի — , ջրումը կենում են — . օդումը կենում են — . գետնի մէջ կենում են — : Ամէն ծառ, որ պտուղ է տալի, ասում են — : Ին բաղը, որի մէջ այսպիսի ծառեր շատ են, ասում են — : Առին պտուղ չէ տալի, բայց նրա փայտը շատ — : Աղէինը և կաղինը պտուղ են տալի, բայց նրանք չեն — : Արած մեծ մեծ ծառերը սղոցով կարում են, որ նրանցից չենեն — : Տախտակները գործ են անում — համար : Գրիչը գործ են անում — համար : Ուկորները — . աչքերը — . սաները — . ականջները — . ձեռները — . ատամները — . ջուրը — , ուղկանը (թուր) — . հրացանը (թիւֆնիկը) — : Ի՞նչ է էն մարդի անունը, որ չի լուում, ի՞նչ է էն մարդի անունը, որ չի տեսնում . — որ չի կարողանում խօսել . — որ չի կարողանում ման գալ : Ուլ որ էդպիսի մարդկանց ծաղը (մասխարայ) կ'անի և նրանց վրս կրճիճաղի, նա արժան է — :

Աս ակորճանօք լուում եմ քաղցր երգը — . բայց զգուելի ձայնը — ես չեմ ուղում լսել : Դ՞նչուկը (ծիտը) չի կորոզ — , արլորը կարող է միտն — : Ետ անասուններ մի

այն ձայն են հանում, երբ որ քաղցած են, բարկացած են կամ ուրախ են: Խողերը — շունը — ոչխարը — ձին — եղը — մուկը — հարը —:

Ո՞ր արհեստաւորներն են, որ փայտից բաներ են շինում: Ո՞ր արհեստաւորները բուրդից են շինում կամ կանսիւից: Ո՞վ պէտք է գիշերը ջըքնի, որ քաղաքի բնակիչները հանգիստ քնեն: Ո՞վ պէտք է գիշերը աշխատի, որ ուրիշները ցերեկը ուտելու բան գտնեն: Ո՞ր մարդիկը իրանց արհեստից (փեշակից) էին կարող խտակ լինիլ: Այս քննի էնպիսի արհեստաւորների անուններ, որոնք շինում են բաներ մեր շարգարանքի կամ հանգստութիւնի համար: Այս էնպէս արհեստաւորների անուններ, որոնք իրանց շինած բաներով մեզ ուրախացնում են. կամ էնպէս արհեստաւորների, որոնք մեզ համար տուն են շինում: Ո՞վ պէտք է աշխատի չըքած: Ո՞վ պէտք է աշխատի գետնի տակում: Ո՞վ — ջրի մէջ և ջրի երեսին. ո՞վ — անտառի մէջ: Ո՞վ պէտք է միշտ ման գայ, որ ուտելու բան ձարէ: Ո՞վ պէտք է աշխատելու ժամանակը շատ շոքի դիմանայ: Ո՞վ պէտք է շատ ցրտի դիմանայ —:

Ո՞վ պէտք է իրա արհեստի համար միշտ ճանապարհ ման գայ: Ո՞վ պէտք է միշտ պատարաստ լինի իրա տրիւնը թափելու համար: Ո՞վ է թաղում մեռած մարդիկերքին: Ո՞վ է մկրտում երեխերքին: Ո՞վ է դեղ անում հիւանդներին: — Ո՞վ է եղում կերակուրը. ո՞վ է լուանում մեր շորերը:

38.

Ինչ որ չի կարելի պատահիլ, էն անկարելի է: Անկարելի է, որ աշակերտ բան սովորի, եթէ ինքը ականջ դրնող և աշխատասէր չըլինի: Անկարելի է որ էն մարդը առողջ լինի, ով որ անչտի կուտի և կըլտի: Անկարելի է, որ մեռած մարդը էլի կենդանի դառնայ. կամ խուլ մարդը ուրախանայ լաւ քնարի (սողի) ձայնից: Ի՞նչն է անկարելի կոյր (քոռ) մարդի համար: Ի՞նչն է անկարելի վից ամառական երեխայի համար. Ի՞նչն է անկարելի հիւանդի համար:



Ինչ որ պէտք է լինի, էն հարկաւոր է, Հարկաւոր է, որ մարդը անխլաս կերակուր ուտի. (ինչո՞ւ համար): Հարկաւոր է որ դարձած մշակը հանգստանայ և քնի. (ինչո՞ւ համար): Հարկաւոր է, որ հիւանդը դեղ խմի և հանգարտ մնայ: Հարկաւոր է, որ ամէն տուն տանիք (կտուր) ունենայ և դուռը. (ինչո՞ւ համար):— Ըմէն մարդ իրա ժամանակին պէտք է մեռնի. (ինչո՞ւ համար): Ըմէն մանկուք պէտք է ուսում առնեն. (ինչո՞ւ համար): Պէ՞տք է ամէն բան անել, ինչ որ ուրիշները անում են. (ինչո՞ւ համար): Հարկաւոր է որ ամէն սեղան (ստոլ) կարմիր ներկով ներկած լինի, կամ ամէն սայլ չորս անիւ ունենայ: Ի՞նչ սեղանը սեղան չի՞ լինիլ, եթէ սպիտակ ներկով ներկած լինի. կամ էն սայլը սայլ չի՞ լինիլ, եթէ երկու անիւ ունենայ: Պէ՞տք է ձիերուն լծել սայլի առաջից, որ առաջ քաշեն, թէ կարելի է սայլի ետեւիցն էլ լծել: Պէ՞տք է շանը տալ ուտելու միս, իսկ ձիուն խոտ, թէ կարելի է շանը խոտ տալ, իսկ ձիուն միս: — Ի՞նչ սեղանը սեղան կը լինի՞, որ փոխանակ քառանկիւնի (չորս քոշի) բոլորակ (կողը) լինի. կամ թէ փոխանակ մէկ պահարանի (եաչչիկի) երկու ունենայ. կամ թէ փոխանակ կարմիր ներկի, կանանչ լինի ներկած կամ խիլի չը լինի ներկած: Ըստպիսի բաները պատահական որպիսութիւններ են և մարդու կամքից են կախեալ: Բայց թէ սեղանը պէտք է ունենայ տափակ տախտակ և ոտներ, էդ հարկաւոր որպիսութիւններ են. (ինչո՞ւ համար):

39.

Թէ որ մէկ տան առաջին երեկոյին մէկ շուն ունայ, և եթէ էն տանը մէկ մարդ մեռնի, էդ պատահական բան է. էնդուր համար որ շատ անգամ շունը ունում է և ոչ ոք չի մեռնում: Եթէ մէկ մարդ վիճակ դձի և մէկ բան ստանայ, էդ պատահական բան է. էնդուր համար, որ շատ անգամ պատահում է, որ ոչ ինչ չի ստանում: Մէկ մարդ վեր է առել կարթը (չանկալը), գնացել է գետի մօտ, դձել է կարթը ջուրը և ուղքերը դրել է (մտիկ է անում)

ջրին. առանց պատճառի՞ է նա մտիկ անում. Չէ, նա էս  
հնարքով ուղում է ձուկը բռնել: Իս է պատճառը նրա  
արած բռնելի: Ուրիշ մէկ մարդ զնում է գետի մօտ, շո-  
րերը հանում է և աղբը մանում է ջրի մէջ: Սա՞ ինչ պատ-  
ճառով է անում, և ի՞նչ է սրա մտքի դիտաւորութիւնը:

Ի՞նչ ծնողքը ինձ ուղարկել են ուսումնարան, նրանք  
էդ անելով միտք ունին, որ ես — Պետրոսը գնաց սառուցի  
վրա, վեր ընկաւ և կուռը դուրս դձեց: Ի՞նչ մտքով գնաց  
Պետրոսը սառուցի վրա, որ վեր ընկնի և կուռը ցաւ տայ:  
Ուրեմն էդ չէր նրա դիտաւորութիւնը, այլ ի՞նչ էր. —  
Մէկ մարդ փորում է խորը փոս, կանգնեցնում է փոսի մէջ  
բարձր գերան, փոսը կրկին լքցնում է հողով գերանի չորս  
կողմը և ռաբով տախտափում է. յետոյ վեր է աճնում  
ուրիշ գերան և էլի հնդկս կանգնեցնում է միւսի մօտ. էս  
գերանների վրա կպցնում է միխերով (բեւեռներով) հաստ  
տախտակներ. ինչի՞ համար է անում. — ուրեմն նրա դի-  
տաւորութիւնը (միտքն) է տուն շինել: Բայց ինչի՞ հա-  
մար է շինում:

Մշակութան դրը շատ ուղում էր բարձր ծառի վրայից կրտ-  
րել հասած տանձ: Նա թափ տուտ ծառը, բայց տանձը  
վեր չ'ընկաւ, ուղեց ծառի վրա բարձրանալ, բայց չըկարաց:  
Յետոյ գնաց բերաւ երկայն բարակ փայտ, և հնքան խը-  
վեց ծառի ստին (Ճիւղքին), մինչև որ տանձը վեր ընկաւ:  
Ուրեմն երեք հնարքով ուղեց Մշակութան դրը իրա կամքը  
կատարել: Ինչ, ինչով հետեւում են իրանց կամքը (ուղածը)  
կատարել, ասում են հնարք, միջոց: Քանի՞ հնարք բա-  
նեցրուց Մշակութան դրը իրա կամքը կատարելու համար. ի՞նչ  
պիտի էին առաջին երկու հնարքը և ի՞նչպիտի էր վերջինը:

Ի՞նչ դիտաւորութիւն ունի հիւանդը, երբ որ գեղ է  
լանում: Ուրեմն նա ի՞նչ է համարում իրա համար գեղը:  
Ի՞նչ դիտաւորութիւն (միտք) ունի վարժապետը, երբ որ  
պատժում է ծոյլ աշակերտին: Ի՞նչ կարելի է ասել պա-  
տիժի անունը:



Ար հնարքն է լաւ իրա առողջութիւնը պահպանելու համար: Կամ պատիժի տակ չ'ընկնելու համար, կամ ուրախ մնալու համար:— Ի՞նչ լաւ հնարք կայ բան դանդաղելու համար, բան ստանալու համար, իրան տարաբախտութիւնից պահելու համար, իրան տաքացնելու համար, շորերը երկար ժամանակ պահելու համար, ախորժակը (իշտահը) բաց անելու համար, մէկ սեղանի երկայնութիւնը իմանալու համար, ուրիշներին իրան սիրել տալու համար, Ի՞նչ հնարքներ է բանեցնում գեղացին, որ գետինը վարուցանքով համար պատրաստի: Ի՞նչ հնարք են բանեցնում ծանր բանք բարձրացնելու համար. ծանր բանի քաշը իմանալու համար, իրա միտքը կամ ուղածը հեռու լինող մարդին իմաց տալու համար:— Հայրը հրամայեց իրա Կոստանդին որդուն խափանացից (կուխից) մէկ դանակ բերել, երբ որ մուժն էր: Հայրը ասաց նրան, Թէ ճրագ վեր առ, բայց Կոստանդինը կարծեց, Թէ մութը տեղումն էլ կարող է գանի դանակը, և առանց ճրագի վազեց: Եւ չըհացաւ մէկ բողբ (մինուտ) հայրը լսեց, որ մէկ բան վեր ընկաւ: Խոկոյն վազեց էն տեղ ճրագով: Կոստանդինը սար խփել էր մէկ մեծ փայտի, որ ընկած էր ճանապարհի վրա, վեր էր ընկել և երեսը խփել էր պատին: Յուից սաղ գիշեր լաց իլաւ Կոստանդինը և չըկարաց քնել: Ինչից պատահեցաւ որ Կոստանդինի գլխին եկաւ էս փորձանքը. հնգուրից չէ՛ր որ նա չ'ուզեց լսել իրա հօր խօսքը, կամ հնգուրից չէ՛ր, որ նա կամակոր (իրասածի) էր: Են բանը, ինչից որ մէկ բան լինում է կամ պատահում է, ասում են պատճառ. խի իլած բանը ասում են հետեանք: Ես տեղ ի՞նչն էր պատճառը և ի՞նչն էր հետեանքը:

Ծնողքը ուղարկեցին Պողոսին իրա մօրաբուեր մօտ մէկ բան ասելու: Մօրաբայրը տուաւ նրան մեծ կտոր շաքարի հաց և մէկ քանի հատ խնձոր: Պողոսը ճանապարհումը դալիս, կերաւ բոլոր շաքարի հացը և խնձորները: Միւս րը նրա փօրը սխառ շատ ցաւել: Ի՞նչ իլաւ պատճառը Պողոսի հիւանդութիւնին, և ի՞նչ բանի հետեանք

էր հեւանդութիւնը, Կատարինէն ունէր լաւ լաւ ծաղիկներ, բայց մէկ տաք (շոք) օր մտապաւ նրանց ջրել. հնդուրից ծաղիկները (Ժառամեցան և պառկեցան գետնի վրա. (ի՞նչ էր պատճառը, որ ծաղիկները (Ժառամեցուն): Նա վեր առաւ իստակ սառը ջուր և ջրեց (Ժառամած ծաղիկները. շատ շատով երեւցան լաւ հեռեանքը ջրելուն. ծաղիկները կրկին կանգնեցան և մէկ քանի օրից առաջւայ պէս զուարթացան: Մշակը դադրել է և քայցած է. ի՞նչ է պատճառը: Ուրեմն դադրելը (վաստակելը) և քայցածութիւնը են հեռեանք ինչի՞: Առաւօտը մութը անց է կենում և լուսանում է. ի՞նչ է պատճառը: Այս ինձ ինչի՞ համար է պէտք քնելը և ուտելը. ի՞նչ հեռեանք ունին աշխատատիրութիւնը, ծուլութիւնը, ցուրտը, շոքը, պարտապետութիւնը, արայը, սառը ջուրը և կրակը: Այս ինձ հրացանի դռալու և ամպի որոտալու պատճառը: Հեռեանքը նմանապէս կարող է պատճառից առաջ լինել. Վու ման ես գալի անտառումը. յանկարծ քեզ մօտ արձակում է հրացան. սաստիկ ճայթում է հեռեանք հրացանի արցակելուն. բայց միտօին պատճառ է էն բանին, որ դու վախացար և նապաստակը վեր բնկաւ մեռած: Ետեղ ի՞նչն է առաջ — պատճառը, թէ հեռեանքը: Տեղրանը գնաց իրա հօր հետ դաշտը և տեսաւ որ շատ ագռաւներ գնում են երկրագործի ետեւից, Ինչի՞ համար են գնում, հարցրուց Տեղրանը. Հայրը պատասխան տուաւ՝ էնդուր համար, որ ագռաւները կերակրում են որդուներով, որը կենում են գետնի մէջ. որովհետեւ գութանը փորում է գետինը, էնդուր որդուները դուրս են գալի. էստուր համար ագռաւները գնում են գութանի ետեւից. Ինժամանակը Տեղրանը էլ չէր զարմանում տեսածի վրա, էնդուր համար որ իմացու պատճառը: Այս գիտեմ պատճառը՝ թէ ինչի՞ համար ծիծեռնակը շինում է իրա բունը տան ծածկոցի տակը. ինչի՞ համար ձկնկուլ (Թռչունը) Թռչում է լեճերի մօտ. ինչի՞ համար հաւերին պահում են բակումը և ոչ թէ բաղումը. ինչի՞ համար ամէն գրեչ գրելու համար պէտք է ճեղք ունենայ, և թէ ինչի՞ համար ես պէտք է հիմի քնած չըլնիմ:



Այդեպանները (բաղուանչիքը) անկում են խաղողի որ-  
թեր, վաղներ . նրանցից դուրս է գալի խաղող : Չըհտաած  
կամ խակ խաղողը ստում են ժուռ , և երբեմն կերակուրի  
մէջ գործ են ածում : Արբ որ խաղողը հասնում է , քա-  
ղում են և քիչ քիչ ասնում են քաղաք ծախելու . մնա-  
ցած շատ մասը հնձանի մէջ քամում են և շինում են  
քաղցու (շիրայ) . էս քաղցուն լցնում են կարանների մէջ և  
մէկ քանի ամիս պահում են . էն ժամանակը նա գառնում  
է գինի : Աս գիտեմ , որ շատ գինի խմելը լու չէ : Ով որ  
շատ գինի կրկրմի , նա կըհարբի : Աս տեսել եմ հարբած մար-  
գէք և շատ նեղացել եմ նրանց համար . հարբած մարդի  
գլխից խելքը գնում է և իրա խօսածը ինքը չէ հասկանում .  
շատ վատ բաներ և մեղքեր է անում հարբածը . էնդուր  
համար ես չեմ ուզում հարբել և շատ քիչ գինի եմ խը-  
մում ջրախառը . շատ գինի խմելուց զանազան հիւանդու-  
թիւններ կըպատահին : Ուրիշ արհեստաւորներ էլ կան , որոնք  
մեզ համար զանազան բաներ են պատրաստում . գգակ  
կարողները մեզ համար գգակներ են կարում . մուշտակա-  
կարը (քիւրքշին) մեզ համար մուշտակ (քուրք) է կարում .  
մահուդ շինողը , կտաւ գործողը , կաշի շինողը , կաշկակարը ,  
և շատ ուրիշ արհեստաւորներ մեզ համար ամէն տեսակ բա-  
ներ են պատրաստում և էնդրով իրանք ապրուստ են ձա-  
րում : Սրանից երևում է , որ աշխարհքիս մէջ ամէն մարդ  
մէկ մէկ արհեստ ունի և էնդրով իրա ընտանիքի ապրուստն  
է հոգում : Աս էլ հիմի սկսել եմ կարգալ , գրել սովը-  
լու . և թէ հետեւիմ և օրէ օր առաջ երթամ ուսում առ-  
նելով , ես շատ գիտութիւններ կ'ուսննամ և ուսեալ մարդ  
կըդառնամ : Ուսեալ մարդը կարող է իրա համար ազնիւ  
ծառայութիւն գանել և էնդրով ապրիլ կամ թագաւո-  
րական ծառայութիւն մանել , կամ բժիշկ դասնալ , կամ  
վարժապետ դասնալ : Իսկ եթէ իմ հայրս կամենայ ինձ  
մէկ արհեստի տալ , էն ժամանակը ես կըհետեւիմ , որ սոր-  
ված բաներս չըմոռանամ և պարսպ ժամանակս գրքեր կար-  
դամ . գրքեր կարդալով մարդ շատ բաներ կըսովի : Իմ

վարժապետս առում է, թէ Եւրոպայի մէջ եղպէս են ա-  
նում և հնդուր համար հնանդ իմաստուն և գիտուն մար-  
դիք շատ կան. հնանդ տղիքը ամէնքը լաւ կարդալ և գը-  
րել գիտեն և միշտ զըբեր են կարդում:

45.

Պատերս սերտելուց յետոյ ես սխում եմ խաղալ .  
բայց երկար չեմ խաղում: Մէկ սահաթ խաղալուց յետոյ  
էլի նստում եմ կարդալու. հնդուր համար որ ամէն բանին  
ժամանակ կայ: Ես պարսպ չեմ կենում. պարսպ կենալը  
ամէն մեղքերի սկիզբն է: Ալ որ բան անել, աշխատել  
չի սիրում, նա արժանի չէ հաց ուտելու. հնդուր համար  
որ պարսպ անցկացած ժամանակը կորցրած է: Ժամանակը  
շատ հարկաւոր և թանկագին բան է. անցկացած ժամա-  
նակը էլ յետ չի գալ: Ես գիտեմ, թէ ժամանակը ի՞նչ  
պէս է բաժանած: Մէկ սահաթը ունի 60 բույէ (մինուտ).  
կէս սահաթը 30 բույէ. մէկ սահաթը ունի չորս քառորդ  
(չարէք). ամէն մէկ քառորդը ունի 15 բույէ: Մէկ օրը և  
մէկ գիշերը 24 սահաթ է. ուրեմն օրը ունի 12 սահաթ և  
գիշերը 12 սահաթ: Ես պղտկուց պէտք է սխեմ աշխա-  
տասէր լինել և հեռակիմ որ բան սովեմ: Ինչ որ ես հիմի  
կարող եմ սովել, էն ծերութիւնիս ժամանակը չեմ կա-  
րող սովել: Ինչ լաւ բան որ ես կարող եմ անել, էն  
պէտք չէ՛ կդոցվան դղել: Ես իմ դասերս երբէք եզուց-  
վան չեմ դձում. այլ պարսպ ժամանակս իսկոյն սեր-  
տում եմ. ինչ որ հիմի կրսովեմ, ծերութիւնի ժամա-  
նակս ինձ հարկաւոր կը լինի: Սարդու առողջութիւնը պշ-  
խառանքով աւելի կը պահուի: Առողջութիւնը աւելի լաւ է,  
քան թէ հարստութիւնը: Եթէ ես մէկ վատ բան անեմ  
կամ խօսեմ և ինձ մեծերը ասնն, թէ կը վատ բան է,  
ես պէտք է միւսանդամ էն բանը չանեմ: Ես մեր տան  
ծառանների վրա երբէք չեմ բարկանում, և նրանց հետ  
հանդարտ եմ խօսում. հնդուր համար որ լաւ տղան ամէն  
մարդու հետ սիրով կը վարուի և ոչ որի հետ կռիւ չի  
անիլ: Ինչպէս որ ես մեր ծառանների հետ վարեմ, էն



պէս էլ ինձ հետ ինձանկոյ մեծերը կամ իմ աղաները ,  
որոնց մօտ ես մէկ որ պէտք է ծառայեմ , կրկարեն . ըն-  
կերներու հետ էլ ես պէտք է սիրով վարեմ . կուող և  
չարասիրտ մարդու հետ ոչ որ բարեկամութիւն չի անիլ .  
Եթէ ինձ իմ ընկերները վատ բան կըսորլեցնեն կամ  
խորհուրդ կըտան հնապէս բան անել , որ ամօթ բան է կամ  
ծնողացս և վարժապետիս հրամանքից դուրս է՝ ես պէտք է  
չըլսեմ նրանց , և իրանցն էլ խորհուրդ տամ , որ վատ բան  
չ'անեն : Աղբատներին պէտք է ինչքան կարող եմ օգնու-  
թիւն անեմ , և եթէ կարող եմ պէտք է ողորմութիւն  
տամ . բայց եթէ չեմ կարող կամ ինքս չ'ունիմ , պէտք  
է քաղցը խօսքով ասեմ նրանց , թէ *Ապրտած արայ* : Եթէ  
ես մէկ մարդու սիրտը վերադրել եմ կամ բարկացրել եմ ,  
պէտք է նրանից ներսողութիւն ինդրեմ : Աս ոչ որի հա-  
մար չէ՛ պէտք չար ուղեմ կամ ցանկանամ ուրիշն տարա-  
բախտութիւնը , այլ եթէ կարող եմ՝ պէտք է ամենին  
լաւութիւն անեմ և ցանկանամ , որ ամէնքը լաւ և բախ-  
տաւոր լինին : Վարժապետս ինձ շատ անգամ ասել է *Քր-*  
*րիստոսի խօսքը թէ՛ ինչպէս կ'ուղէք* , որ ուրիշները ձեզ  
անեն , հնապէս էլ դուք նրանց արէք :

44.

Աս պարտական եմ ամէն մարդու սիրել հնդուր հա-  
մար , որ մենք ամէնքս մէկ հօր (Ագամայ) որդիք ենք : Բայց  
աւելե պէտք է սիրեմ իմ աղքատիաներին և բոլոր հայ աղ-  
քին , հնդուր համար որ հայերը իմ եղբայրներս են , մէկ  
հօրից (աղամայ) ենք ծնել և մէկ մօրից (որ է մեր եկե-  
ղեցին) , և մէկ աւագանի մէջ ենք մկրտուած : Աս շատ սի-  
րում եմ մեր եկեղեցիի ամենայն կանոնները , հանդէսները  
և ժամերգութիւնները : Մեր հայոց լեզուն էլ շատ սի-  
րում եմ և միշտ հետևում եմ որ լաւ սովորեմ : Աս դի-  
տեմ , որ մեր հայոց ազգի մէջ շատ լաւ հին սովորութիւն-  
ներ կան և հնապէս տօներ կան , որոնք յատուկ ցոյց են տալի  
մեր ազգի հնութիւնը : Մեր պատուարժան նախնիքը (մեր  
պապերը) առանց փոխելու պահել են մեր ամենայն հին

ոովորութիւնները և մեզ էլ պատուէր են տուել նոյնպէս պահել: Աս պարտական եմ, որ իմ ազգիս գովելի բաները ամէն չ'իմացող մարդու պատմեմ, և եթէ մէկը մեր ազգի վրա կամ մեր եկեղեցիի վրա անկարգ բան խօսի, ես պէտք է, որքան կարող եմ, նրա ասածները սուտ հանեմ և ցոյց տամ մեր ազգի լաւութիւնը: Ո՛ր որ իրա ազգին չեփրում կամ իրա ազգի վրա վատ բան է խօսում, նա արժանի չէ քն ազգի անունը վրէժն ունենալ, և նա ինքն էլ շատ վատ մարդ կը լինի և ամէն խելօք մարդ նրան կընախատի և չի սիրել: Եթէ մեր ազգի օգուտի համար մէկը կամենայ մէկ բան շինել, ես պարտական եմ ամէն կարողութիւնովս նրան օգնել: Ըմենայն մարդ իրա հայրենիքին պարտական է քն պէս, ինչպէս որդին իրա հօրը. և ամենայն մարդ պէտք է հետեւի իրա որդիական պարտքը, ինչքան կարող է, հատուցանել: Աս կըննդրեմ իմ վարժապետիս, որ երբեմն երբեմն ինձ պատմի իմ հայրենիքի պատմութիւնը, և երբ որ ես հայոց զբաբաւ լեզուն լաւ կըսովրեմ, քն ժամանակը կըկարդամ մեր Հայոց ազգի պատմութիւնը:





# ՄԼՍՆ ԵՐԿՐՈՐԳ :

## ՊԼՏՄՈՒԹՒՆՔ :

ա. Անկիրև Մանիրանի :

Ստեփանը և Արիստը, երբ որ ուսումնարանից դուրս էին գալի, սկսում էին անկարգ վազել քուչումը, բարձր ձենով կանչել և շատ անկարգ բաներ անել, երբոր տեսնում էին, թէ վարժապետը էն տեղ չէ, Ինչպէս ուսումնարանից դուրս էին գալի քուչա, էն սհաթին դիժ մարդու նման սկսում էին վազել, մէկ մէկու վրա քար և ցեխ գծել : Եթէ անձրև էր գալի, նրանք երբէք ցամաք տեղերից չէին անցկենում : այլ մտնում էին ցեխերու մէջ և մէկ մէկու վրա ցեխոտ ջուր էին ածում : Եթէ ճանապարհին պատահէր նրանց հաւ կամ բաղ կամ ուրիշ անասուն, նրանք սկսում էին քշելով տանել, քարեր էին դրում նրանց վրա և իրանք ուրախանում էին, որ ինչքան կարողացան, տանջեցին խեղճ անասունին :

Մէկ օր, երբ նրանք էսպէս վատ վատ բաներ էին անում քուչումը, մէկ ծեր մարդ էն տեղից անցկենալիս նրանց յանդիմանեց ( կռիւ տրաւ ) և ասաւ՝ ամօթ է ձեզ համար, ամաչեցէք : մեծ ամօթ է կդպէս վատ բաներ անել էն մանկանց, որոնք գնում են ուսումնարանից, որ տեղ նրանք շատ լաւ լաւ բաներ են լսել : Բայց էն վատ աղբըրը ամենեկին ծեր մարդի խօսքին ականջ չըդրին և գոռալով վազեցին :

Ինչ աղբըրի այսպիսի վատ վարքը շատ չըհաւանեց ծերը : և կարելի է որ խելօք մարդը հաւանի այսպիսի բանին : Ինչ որ խելօք մարդիքը չեն հաւանում, էն անվայելուչ է : Ես կըհետևիմ ինձ էնպէս պահել միշտ, որ խելօք մարդիքը ուրախութիւնով մտիկ տան իմ վարքին :

բ. Արտի ուղեւիտ :

Յովսէփը և Պետրոսը մէկ օր դուրս եկան իրանց անկից և գնացին մանդալու : Ղանապարհին անց էին կենում մէկ պարտիզը (բաղն) մօտից , որի դռները բաց էին : Այլ բանք մտան պարտիզը և տեսան որ մէկ քանի խնձորի ծառեր կ'ընան շատ խնձոր ունին, որ ծառի ճիւղքերը ծանրութիւնից կ'ապեղ են : Տես, Յովսէփի, ասաւ Պետրոսը , մենք էս տեղ կարող ենք խնջբան ուղեմանք ուտել . էստեղ ոչ որ չի երեւում . արի շուտով մէկ ճիւղքը կտարենք և փախչենք : Չէ, պատասխան տուաւ Յովսէփը, մենք էդ բանք չի պէտք անենք . խնձորները մերը չ'են , ուրիշներինն են , — Ի՛նչ, ի՛նչ կայ, ասաւ Պետրոսը . պարտիզի տերը խկի չի կարող խնայալ, թէ մենք մէկ քանի խնձորներ ենք կրարել . նա էնքան շատ ունի , որ չի կարելի համարել . — Ղշմարիտ է, ասաւ Յովսէփը , բայց էլի պէտք է չ'անենք էդ բանք , ենդուր համար, որ թարան վերառնելը ուրիշ բանք , թէ և շատ փարք բան լինի, գողութիւն կը լինի : Ան թէ մտացել էս, ինչ ասաւ մեր հայրը , երբօր պատմում էր էն գողի պատմութիւնը , որ մեր ասն տառից տանում էին շրթայով ( զինջելով ) կապած : — Ի՛նչ ասաւ , հարցրուց Պետրոսը . — Մա ասաւ , թէ փարքով սխալում է, մեծով վերջանում է : Պետրոսը սխալ խորը փարք անել և վերջը ասաց՝ դու Ղշմարիտ ես տուում , սիրելի՛ Յովսէփ . դնանք էս տեղաց : Պետրոսը ուզում էր վատ բան անել , քի ուզում էր ուրիշ խնձորները ուտել : Ինչպէս լաւ իլաւ, որ Յովսէփը չըթողեց նրան էդ բանք անել :

գ. Աստի սպիտակեցում :

Քանի որ Մակարը իրա ծնողաց մօտ էր , ամէն երեկոյ, խնայէս սխալում էր մ'ընիլ, գնում էր քնելու , կամ նստած տեղը քնում էր, և շատ դժուար էր լինում նրան զարթեցնել : Եւստ անգամ մայրը հարկադրեալ պատիկ տողի նման նրա շորերը հանում էր և տանում էր իրա տեղը պառկեցնելու, ենդուր համար, որ հնարք չ'էր լինում



նրան զարթեցնելու : 'Մա հնքան երկար էր քնում', մինչև որ առաւօտը անց էր կենում : Իսկ ամառը երբոր արեգակը լաւ բարձրացած էր լինում, նա դեռ տեղեցումը պատկած էր լինում : Մայրը շատ անգամ խրատում էր նրան, որ էդ սովորութիւնը թողնի, էն պատճառի որ միշտ չէ կարող էդ պէս կենալ : 'Մա խորհուրդ էր տալի նրան, իրիկունները, երբ որ սկսում է քունը տանել՝ ման դալ տան մէջ : Իսկ առաւօտը, երբ որ նրան զարթեցնում են, կամ երբոր ինքը զարթի՝ էն բոպէին վեր կենալ տեղից : Բայց Մակարը էդ խրատները չէր կատարում, և մնաց իրա վատ սովորութիւնի մէջ : Երբոր Մակարը 14 տարեկան դառաւ, ծնողքը նրան տուին աշակերտ հաց թխողի մօտ : Ընտ հաց թխողը հրամայեց Մակարին, որ իրիկունները մինչև 10 սրհամբը չըպառկի քնելու, և զանազան ծառայութիւններ տանի, իսկ առաւօտը, ինչպէս ամառը, էնպէս էլ ձմեռը՝ վեր կենայ 5 սահաթին : Բայց էս անկարելի բան էր վատ սովորած Մակարի համար. և որովհետև հինի հրամանն չ'ուներ վաղ պառկելու, էնդուր համար միշտ թմբում էր բան անելու ժամանակը, և շատ անգամ կանգնած տեղը վեր էր ընկնում և դուրսը ջարդում էր : Հաց թխողը շատ անգամ պատժում էր նրան հսպիսի ծռւլութիւնի համար, բայց ոչինչ չ'օգնեց : Մէկ ամօից յետոյ վարպետը, որին տուած էր նա արհեստ սովորելու, նրան յետ ուղարկեց տուն և ասաց, որ էլ նրան պահել չի կարող, էնդուր համար, որ նա ոչինչ բանի պէտքական չէ : Սերջն էլ Մակարը իսկի մէկ ժամանակ լաւ և ընդունակ արհեստաւոր չըգաւաւ : Ինչպէս դժուար է վատ սովորութիւնը թողնել :

դ. Փարսիի Գողեր :

Եղևայի որդիքը տեսան, որ իրանց գրածի (հարևանի) Ի հոնի բախումը երկու տանձի ծառեր կան լաւ լաւ պտուղներով : 'Նրանք վեր իրան պատի վրա և մէկ քանի տանձ կարեցին : (Իդ բանին ի՞նչ կ'ասեն) : Հարևանը իմացաւ նրանց արած դողութիւնը և մէկ երեկոյ թախ կացաւ բալուսը, որ գողին բռնի : Մէկ քանի բոպէից յետոյ անսաւ :

որ Աղեայի տղերքը վեր իլան պատի վրա, վախենալով չորս կողմը մտիկ արին և որովհետև ոչ ոքի չըտեսան, իսկոյն ներքև եկան, վաղեցին ծառերի մօտ, և կտրեցին տանձեր: Արքոր ուզում էին յետ դառնալ տանձերը ձեռքերին, | հոնը գուրս եկաւ: Ի՞նչ ամօթով և ի՞նչ վախով կանգնած մնացին փոքր գողերը | հոնի առաջին: Ի՞նչպէս խնդրում էին նրանք | հոնից, որ ների նրանց եղ վատ գործը, և իբանց հօրը դանգատ չ'անի: | հոնը ներեց նրանց հնգուր համար, որ նրանք խօստացան միւսանգամ էս բանը չ'անել: Բայց էս վատ տղերքը իրանց խօստմունքը չըկատարեցին: Մէկ քանի շաբաթ անցկացաւ, և | հոնը տեսաւ որ բոլոր իրա հասած խաղողները քաղած են: Ի՞նչ ժամանակը նա գնաց իրա հարեան Աղեայի մօտ և խնդրեց նրանից, որ իրա տղերքին պատժի երկու անգամ արած գողութիւնի համար: Տղերքը սկան երգում ուտել, թէ խաղող չ'են գողացել և հայրը հաւատաց նրանց: | հոնը գնաց նրանց տնից սիրտը կտորած և գնալուց տաւ՝ ո՞վ տղերք, գուք շատ տարաբախտ կը լինէք աշխարհքի մէջ: Ի՞նչ խօսքը (մարդարեւ ութիւնը) կատարեցաւ: Պատիկ գողերը իրանց վատ սովորութիւնը չըթողին, վերջը խաբեքայ մարդիկ դառան, և իրանց կեանքը թշուառութիւնով վերջացրին:

Ե. Երանայի նորիցէլը:

Գարբիէլը ծնողքը բաւական հարուստ էին և հնդուր համար նա հնպիսի բաներ ունէր, որ ուրիշ տղերքը չ'ունէին: Շատ անգամ ծնողքը տանում էին նրան իրանց հետ դքսանք անելու (մանդալու) կամ բարեկամների տուն, որ նա ուրախ ժամանակ անցկացնի: Այժմ էն քաղաքումը մէկ նոր բան լինէր, զորօրինակ՝ բերած լինէին մեծ մեծ չըտեսած անասուններ, կամ օրկիւնների տեսարան, կամ սաղ ածող, և այլն, ծնողքը տանում էին Գարբիէլին, որ նա տեսնի կամ լսի հնպիսի նոր բաները: Նրանք յոյս ունէին, թէ նա ուսումնարանումը աւելի կը հետեւի, որ իրա աշխատութիւնովը և մտադրութիւնովը ծնողաց պարտքը վճարի նրանց այսպիսի լաւութիւնների համար: Բայց անմիա Գար-



րիկը նրանց յոյր չբեատարեց : Աս անշա՛ն սիրեց խողալը  
և միշտ հետեւում էր աշխատանքից հեռանալ կամ փախչել :  
Մկանայ (չ'ուղելով) էր գնում նա ուսումնարան և հնգուր  
համար երկար ժամանակ քուչեւումը թրեմ էր դալել պա-  
րապ մինչև ուսումնարան հասնելը , և ուսումնի ժամանակն  
էլ դուրս էր գնում բակից և քուչի գրան մօտ խողում էր  
իրա նման ծայլ տղերանց հետ : Թեպէտ ծնողքը այս բա-  
ները գիտէին, բայց Քարբիկը միշտ զանազան պատճառ-  
ներ էր ապել և միշտ խոտանում էր էլ չ'անել : Իրա դա-  
սերը, որ նա պէտք էր ամը պատրաստէր, կամ խկի չ'էր  
սերտում, և կամ սերտում էր այնքան անկատար, որ վար-  
ժապետը միշտ անբաւական էր նրանից : Մի մէնակ սիրում  
էր խողալը և մանգալը . սաղ սհաթներով քուչեւումը վա-  
ղում էր շներէ ետեւից , կանգնած մտիկ էր անում (Թա-  
մաշայ էր անում) զննարներէ (սողաթներէ) վարժութիւնին,  
և կամ պարապ տեղը այս կողմը այն կողմը մտիկ աւալով :  
Եթէ քուչումը մէկ կռիւ լինէր կամ խոսվութիւն , յա-  
տուկ կարելի էր իմանալ, թէ Քարբիկը կն տեղ կը լինի :  
Ըստ անգամ ուսուցիչը նրան նախատում էր, և ասում էր,  
Թէ քո ժամանակը քեզանից դողանում ես, հնգուր հա-  
մար որ յիմարութիւնով կորցնում ես նրան, և քո ուս-  
ման և աշխատանքի համար նշանակած սհաթները դորձ ես  
ածում զըօսանքի կամ պարտադրաութիւնի մէջ : Քարբի-  
կը տարիքով մեծացաւ , բայց տարիքի հետ չ'աւելացան  
նրա գիտութիւնը և խելքը , և վարժապետի մարդարեւ-  
թիւնը , թէ նա երբէք բանի պէտքական մարդ չի դառնալ,  
կատարեցաւ : —

Դ . Փող փեցնող պապ :

Մեծորպը իրա մանկանցը պղտիկուց սոխոցրել էր իրանց  
աշխատանքով փող հաւաքել : Տօներէ օրերը և ամէն ու-  
սումից պարապ ժամանակը նրա տղէկերը բաներ էին կա-  
րում կամ գործում և հայրը առնում էր փողով նրան-  
ցից նրանց կարածները կամ գործածները : Արա տղէքը  
փայտից կամ թղթից զանազան բաներ էին շինում և

Մերոպը նրանցից էլ առնում էր շինած բաները, և թէ լաւ և խտակ էին լինում շինած: Եւսպէս բաներով մանկուհիքը միշտ իրանց համար փող ունէին և կարող էին մխտել ինչ պէս իրանց սիրտը ուզէր: Բայց հայրը միշտ խորհուրդ էր տալի նրանց փողը խարջել օգուտով և պահելով: Մարիամը և Մէքսէյը, պղտիկ մանկուհիքը Մակարի, լուծ էին իրանց հօր խրատը և հաւաքած փողով առնում էին իրանց համար դանազան հարկաւոր բաներ, զորօրինակ՝ թուղթ, գրիչ, մատիտ, գրիչ կարելու դանակ և մկրատ: Ինչպէս մեծ ուրախութիւն էր լինում նրանց համար, երբ որ նրանք իրանց աշխատանքով փող էին ստանում և ինչպէս ուրախութիւնով էին մտիկ անում էն բաներին, որ առնում էին իրանց փողով: Բայց Մերոպի մեծ տղան Տիգրանը լաւ չէր պահում, իրա փողերը բանացնել չէր իմանում: Բիշն տեսած բանը և ամէն ինչ որ առաջի տեսնելու էր հաւանում էր, ուզում էր՝ առնել: Կնդուք համար շատ անգամ առնում էր էնպէս բաներ, որ էն ժամանակը նրան հարկաւոր չէին, կամ թէ խիտ պէտքուհան չէին: Օրօրինակ՝ նա տներ մէկ հատ լաւ գրիչ կարելու դանակ, բայց եթէ տեսնում էր մէկ ուրիշ դանակ աւելի լաւ կ'ըլտ, էն սհաթին առնում էր, և ինչ որ ուզում էին, տալիս էր, և էս պատճառովն նա միշտ որիշներից թանկ էր առնում: Իսկ երբ պէտք էր լինում առնել շատ հարկաւոր բան, էն ժամանակը նա փող չէր ունենում և հարկադրեալ պարտքի էր առնում կղբօրներից կամ քուրերից: Արջը հայրը սաստիկ հրամայեց նրանց, որ Տիգրանին պարտքի փող չլսան: Եւն ժամանակը նա խնդրում էր իրա հօրից կամ մօրից, որ նրան փող բաշխեն: Բայց միշտ պատասխան էր ստանում նրանցից, թէ սովորիք պահելով բանեցնել փողերդ, և մի՛ առնիր երբէք անօրուտ կամ անպէտք բաներ: Եթէ էգպէս կ'անես, քեզանից խակի չի պակասիլ քեզ հարկաւոր բանը: --



Է. Քարեգործ տղայ :

Մտակալ քաղաքի մօտումը անցեալ տարի մէկ սագ գիւղ էրվեցաւ, հնդուր համար որ քամիի սաստիութիւնից կրակը պատում էր ամէն տները չորս կողմից և զեղացիքը չ'էին կարանում մէկ մէկու օգնել : Ընելն քան ութսուն մարդ, որոնց մէջ կային հիւանդներ, ծերեր, կանայք, մանկունք և աղքատ մշակներ, մէկ քանի սհաթումը զրկուեցան իրանց տներից, հագուստից և ամէն ապրուստից : Ասիծալն էր տեսնելը էս ողորմելի մարդկանցը իրանց աղքատ և հեւանդ տղերքով, որք փետանում էին ցրտից, (հնդուր որ էս կրակը պատահեցաւ աշունքի վերջին), որք անքում էին, լաց էին լինում, էս կողմը էն կողմը էին ընկնում և իրանց համար կենալու տեղ էին փնտաւում : Ին տեղն քարեգործ քահանան, որ ինքն էլ իրա ունեցածը կորցրել էր, չ'էր մտք անում իրա զլուխը ազատելու համար և շտապում էր օգնել ողորմելի մարդկանցը, որք բոլոր նրա չորս կողմը պատած անքում էին և լաց էին լինում : Ինդուր համար նա գնաց ման եկաւ մօտիկ զեղերումը և քարոզելով հետեւեցաւ էն ողորմելի մարդկերանցը տեղաւորել ողորմած մարդկերանց աներումը . ամէն տեղ նա հաւաքում էր փող, հաց, շոր, և լրագիրներումը (գաղթիցներումը) տպեց այս զարհուրելի կրակի պատմութիւնը : Կրա աշխատանքը և հետեւութիւնը դարդակ չ'անցիպցան. ամէն տեղերից ըսկասն ուղարկել նրա մօտ օգնութիւն փողով, հացով և շորերով և էս պատուելի քահանան քաժանում էր սղորմելի մարդկերանցը ուրախութիւնով, արդարութիւնով և ըզգուշութիւնով : Ինք ժամանակը եկաւ նրա առն մօտիկ գիւղից մէկ պղտիկ տղայ : Մախենալով մտաւ նա քահանայի առնը, և ասաւ՝ ես մէկ խնդիրը ունիմ՝ ձեզանից, տէր տէր, եթէ դուք չ'էք բարկանալ : Ըստ, սիրելի, պատասխան առաւ քաղցրութիւնով քահանան. ի՞նչ կարեմ՝ ես անել քեզ համար, ես պատրաստ եմ : Ընէ. դուք չ'է պէտք ինձ օգնէք, ասաց պղտիկ տղան . ես միայն խնդրում եմ, որ դուք էս փողը և էս հին շորերը վեր առնէք ինձանից ողորմելի այրւածների համար : ՂՂմարիա է, Թէպէտ էս շատ

փոքր բան է, բայց ես աւելի ոչինչ չ'ուշիմ'. ես շատ կրցան-  
կանայի մէկ օգուտ բան անել մեր տղարմելն այրւածների հա-  
մար. ես շատ ցաւում եմ նրանց համար: Իմ քոյրս, որ ա-  
մենեկին ոչինչ բանով չի կարող օգնել, ասում էր ինձ,  
որ ես այս փոքր բանով ձեզ մօտ չըգամ'. բայց ես չ'ուզեցի  
իմ միտքս փոխել, եկել եմ էս տեղ և խնդրում եմ մեր  
առնէք այս փոքր ընծայաբերութիւնս: — Դու շատ լաւ ես  
արեւ, սիրելի՛ որդի իմ, պատասխան տուեց քահանան, և  
քողար արտասունքը վաղեցին աչքերիցը: Ընկն տուած բանը,  
ինչ որ խտակ սրտով է տրւում, իրա գինը ունի. ուրեմն  
բունն էլ գին ունի. մի՛ կողցնիր երբէք քս այդ ագնիւ քչ-  
գացմունքը. հետեւիր լաւութիւն անել ինչ բան կարող ես.  
քս հօգին միշտ կ'ուրախանայ և Մտուած քեզ կը վար-  
ձատրի: —

բ. Կարգով և խորով կենող պայ:

Մեծնի ծնողքը պատուաւոր և խելօք էին: Մրանց  
տունը Թեպէտ փոքր էր, բայց ամէն բանը կարգով էր պա-  
հած և խտակ. հնդուր համար որ Մեծնի մայրը չ'էր սի-  
րում որ տան բաները էս կողմն էն կողմը ցրուած լինին և  
գեանի (պօլե) վրա աղբ լինի կամ ուրիշ կեղտոտ բան: Ընա-  
ւօտը ամէն բանից առաջ նա աւելում էր իրա փոքրիկ տունը,  
կարգում էր կողինքը և ուրիշ բաները և պատահանները  
և դուռը բաց էր անում, որ տան օդը խտակուի: Կարելի՞  
էր որ Մեծնը անկարգ մեծանար և խտակութիւն չըսիէք,  
երբոր մայրը նրան բարի օրինակ էր ցոյց տալի: Մրանից ե-  
րևում է, Թէ ինչքան հարկաւոր բան է, որ մանկունքը պղտի-  
կուց սովորեն կարգին և խտակ կենալ: Օգործինակ՝ Մե-  
ծնը երբէք չ'էր կամենալ որ ուսումնարան գնայ առանց մա-  
գիւրը սանդղելու, ուրիշ անկարգ աղերքի պէս. երբէք չ'էր  
Թօղնիլ որ ցեխոտ չեքիէքը (կոշիկները) մնան սաղ օր ա-  
ռանց սրբելու. կամ Թանաքով կեղտոտած ձեռքերը քսել  
իրա շորերին, ինչպէս անում են շատ անկարգ աղերք: Եւ  
միշտ դնում էր ուսումնարան մագիւրը սանդղած և ձեռքերը  
խտակ լուացած. նրա հագուստը միշտ լինում էր խտակ և



Թափ տուած, կոշիկները խտակ սրբած. խակ նրա դրբերի մէջ երբէք չ'էր կարելի տեսնել մէկ Թանաքի կէտ կամ խաղ : Նա երբէք իրա գրական չ'էր գձում սեղանի վրա և Թանաքը բանասցնելուց շատ դժոյշ էր լինում. նրա քթի աղու էր միշտ իրա մտա էր լինում : Այս խտակութիւն և կարգ սիրող և պահպանող Արմօնը ուրախութիւն էր իրա ծնողաց և վարժապետների համար : —

Թ. Սրտիտո :

Մարտիտոյ ծնողքը տուին նրան մէկ շատ հարկաւոր նամակ (բարեազգիւր), որ տանի փոշոք գցի : Ճանապարհին պատահեցաւ նա Պետրոսին և ուրիշ տղերանց : Պետրոսը ամէն դարգահ բանի համար կռիւ էր անում, և մանաւանդ Մարտիտոյ հետ, որ ինքն էլ բարկացող բնութիւն ունէր : Այս անգամին էլ սկսան նրանք կռիւ անել իրարու հետ, հնդուր համար, որ ոչ մէկը չ'էր ուղղում միւսին ճանապարհ տալ որ անցկենայ : Կռիւ անելու ժամանակը Մարտիտոյ վեր գցաւ նամակը, ստըով կոխեց վրան և հնայէս կեղտ տեց, որ վայել գրածը չ'էր կարժացուիլ և ծրարը պատռեցաւ : Ի՞նչ անի հիմի : Եթէ տուն գնայ և բոլոր պատահածը պատմի, նրան կըպատժեն, հնդուր համար, որ նրա հայրը շատ խիստ մարդ էր, և մանաւանդ այս անգամին յատուկ ասել էր նրան, Թէ էս գիրը լաւ տար փոշոք, սա ինձ համար շատ հարկաւոր գիր է : Մարտիտոյ մտքումը գրաւ մէկ յիմար բան, որ սուտ խօսելով այս փորձանքից ազատուի. և հնդուր համար, երբոր հայրը հարցրուց գրի համար, նա համարձակ պատասխան տուաւ, Թէ գիրը ուղարկեց : Բայց էգ սուտը ասելու ժամանակը նրա սիրտը դողաց : Երբ որ տասը օրը անցկացաւ և գրի պատասխանը չ'եկաւ, Մարտիտոյ հայրը ինքը գնաց փոշոք իմանալ, Թէ գիրը յատուկ ուղարկած է, Թէ չէ : Ինչպէս նա զարմացաւ և սիրտը դող բռնեց, երբ որ փոշտի վրբերից իմացաւ, Թէ գիրը ամենեւին բերած չէ : Մարտիտոյ ախանայ հարկադրեցաւ ասել, Թէ ինչ պատահեցաւ գրին, Նա երկար ժամանակ չ'էր ուղում ճշմարիտը ասել, բայց յետոյ, երբ որ հայրը

Սօստացաւ ներել նրան, և թէ բոլորը ճշմարիտ կ'առի, ևն ժամանակը նա բոլորը ասաւ : Ինչքան փոշխման էր Մոդրէասը այդ սուտ խօսելու համար, երբոր խմացաւ, թէ և թէ ևն ժամանակը զար տուն և ճշմարտոր ասէր հօրը, կ'աղատէր նրան մեծ կորուստից և իրա սիրտը մեծ նեղութիւնից, ևնդուր համար, որ ևն ժամանակը կարելի էր նոր դէր գրել : Եւ բանից յետոյ նա հաստատ դրեց իրա մտքումը միւսանդամ խիստ սուտ չ'ասել, աւելի լաւ համարելով սասանալ իրան արժանի պատիժը, քան թէ սուտ ասելով միսս տալ : Բայց շատ ժամանակ քաշեց, որ հայրը նրան չէր հաւատում, և էս բանը շատ դառն էր նրա համար : —

Ժ. Ո՛ր որ իրա կամքով մտնում է գորշանսի մէջ, նա ևն գորշանից կ'ելորէ :

Մերայելը էր որդի աղքատ ծնողաց : Արա մայրը մեռաւ ևն ժամանակը երբ որ նա երեք տարեկան էր : Հայրը բոլոր օրը գնում էր ծառայութիւն անելու և ևն պատճառաւ Մերայելը կրմնար անաբուսնչ և բոլորովն կրկտանար, և թէ մէկ հարուստ և բարեգործ մարդ չ'ըմբռանէր նրան իրա տուն և չ'պահէր իրա որդւոյ պէս : Բայց Մերայելը շատ չէր ուրախացնում իրա երկրորդ ծնողին. նա անհրնազանդ էր, ծոյլ էր և անհանդիստ : Շատ անգամ բարերարը խրատում էր նրան և երբեմն պատժում էր : Մերայելը աղքատ էր, բայց շատ կարճ ժամանակ Մանից աւելի վասնդուոր էր նրա անզուշութիւնը, նրա համար ոչ մէկ ծառ բարձր չէր, ամենի վրա համաձակ վեր էր իջնում, իրա քաջութիւնը ուրիշ տղերքին ցոյց տալու համար, ամէն բարձր տեղից համարձակ թռչում էր ներքեւ : Մերջայէս էդ անզուշութիւնը իրաւ նրա մահի պատճառը : Ետեցէր էս գարհուրելի պատմութիւնը և հետեկցէր որ սա ձեզ համար զգուշութիւնի օրինակ դառնայ : Մէկ օր Մերայելը խաղ էր անում ուրիշ տղերքի հետ. նրանք շատ վաղեցին բարձր տանգիտից վերեւ ներքեւ : Վերջը Մերայելը ուզեց էլի ևն բանը անել, որ իրան սաստիկ արդեւած էր և որ նա շատ անգամ արել էր : Ի՞նչ կ'սխընկած անդուտի



Թե երբի վրա, վերելից ներքեւ գալ: Ո՛հ, երանի՛ր Թէ  
էդ ըտպէին նա միտքը բերէր իրա բարեբարի և երկրորդ հօր  
խրատները, որ նրան միշտ արգելում էր էդ բանը: Բայց  
տաքացած խողովումը նա միտքը չբերաւ ոչ ինչ, կախ ըն-  
կաւ սանդխտի վայտի վրա, յանկարծ մէկ կողմը ծռուե-  
ցաւ, վեր ընկաւ բարձրից, գլուխը ջարդուեցաւ և էն ըտպէին  
մեռաւ: —

Ժա. Ճշմարիտ պոպ :

Կոտանդինը խաղում էր իրանց դռան մօտ: Մէկ գը-  
րայի կանչեց նրան և խնդրեց, որ նա սպասի փոշտի գալուն,  
և ինչպէս հեռուից տեսնի, խփոյն իմաց տայ նրան: Կո-  
տանդինը մեծ ուրախութիւնով յանձն առաւ կատարել էս  
խնդիրը, էնդուր համար որ բարետիրա տղայ էր: Կախ-  
կոյն վաղելով գնաց մինչև քաղաքի դուռը և մէկ բարձր  
տեղ կանգնեցաւ, որ հեռու տեսնի փոշտի ճանապարհը:  
Կէս սհաթ աւել սպասեց Կոտանդինը: Ին ժամանակը  
էնտեղից անց էր կենում Գրիգորը. սա ինչպէս տեսաւ  
Կոտանդինին, ձայն տուեց՝ արի դնանք միասին. էն տեղ  
մեր ընկերները խաղում են: Կոտանդինը պատասխան տու-  
եց, Թէ ամենեւին չեմ կարող դնուլ քեզ հետ, Թէ և  
սիրտաշատ ուզում է. էնդուր համար, որ խօստացել եմ  
դրածինն հասեղ սպասել փոշտի գալուն, որ նրան իմաց աամ:  
Մինչև երբ պէտք է մնաս էստեղ արեգակի աակումը, հարց-  
րաւ Գրիգորը. քեզ էդ խիի հարկուոր չէ, և բաց յայն-  
մանէ դու բաւական սպասել ես, արի դնանք: Բայց Կո-  
տանդինը հաստատ մնաց իրա խօսքի վրա, Թէ և Գրի-  
գորը շատ խնդրեց և վերջը ծիծաղեցաւ էլ նրա վրա:  
Կոտանդինը մտքին էր պահել իրա հօր խօսքերը, որ  
իրան միշտ ասում էր, Թէ ճշմարիտ մտքը պէտք է իրա  
տուած խօսքը հաստատ պահել և կատարի: Թիպէտ նա էլի  
սող կէս սհաթ սպասեց էն տեղ, և արեգակը նրան շատ  
նեղացրուց, բայց ի՛նչ մեծ ուրախութիւն կլաւ նրա հա-  
մար, երբոր նա հեռուից տեսաւ փոշտը և վաղելով գնաց  
իմաց տուաւ դրացիին: Գուր ի՛նչ կ'անելէք եթէ ձեզ էլ  
պատահէր սյսպիսի բան:

Ժք. Ով որ բարի խորհուրդն ակնն չի դնել, նա կըպատժուի:

Մէկ շատ ցուրտ օր Մովսէսը ուսումնարանից գնում էր տուն: Երկու օր էր, որ շատ ցուրտ էր, և նա ուրիշ տղերքի հետ անցկենելուց տեսաւ որ դետի ջուրը սառել է: Եկէք, տաւ նա ընկերներին, եկէք գնանք սառուցի վրա: Եկէնքր էն սհաթին համաձայնեցան և սկսան ներքեմ գընալ նեղ ճանապարհով, որ տանում էր դետի մօտ: Են ժամանակը կնտեղից անց էր կենում մէկ ծեր մարդ, որ տաւ նրանց՝ տղերք, ուր էք գնում, մի՛ գնար սառուցի վերայ, նա դեռ ևս բաւական հաստ չէ և ձեզ չի կարող բռնել, կրկտարուի և դուք ջուրը կրթախուէք: Ես լսելով ամէնքը կանգնեցան և վախեցան առաջ գնալ, մէնակ Մովսէսը ակնն չըդրեց ծերի խօսքերին և գնաց սառուցի վրա: Ես ծիծաղում էր միւս տղերքի վրա և ասում էր՝ ամօթ է ձեզ, ամօթ, վախկոտներ, դուք սիրտ չունէք: Ենչ կայ էս տեղ վախենալու: Բայց դեռ ևս երեք օտք չէք փոխել սառուցի վրա, յանկարծ սառուցը կտարւեցաւ և նա ընկաւ ջրի մէջ մինչև բերանը: Եկէնքը դուաւով վախան էն տեղից և Մովսէսը կրխեղաւ էր, եթէ էս ձայները լսելով չըվազէք օգնելու և չազատէք նրան էն ծեր մարդը, որ բարեսիրտ լինելու պատճառաւ, չէր հեռացել էն տեղից: Մովսէսը սաստիկ դողում էր, և կտառի պէս դոյնը վախած էր երեսից, և չէր կարանում խօսիլ: Թհպէտ էն սհաթին օգնեցին նրան և ատքացրին, բայց նա շատ հիւանդացաւ և երեք շաբաթ մնաց կողնքումը պառկած: Երբ որ նա առողջացաւ, հայրը ասաց նրան՝ մտքիդ պահէր էս կանոնը, Ով որ բարի խորհուրդը չի լսիլ, նա կըպատժուի: Բայց եթէ էդ փորձութիւնը չըպատահէր, սառուցը չըկտարուէր և Մովսէսը ջուրը չընկնէր, պէտք էր որ միւս տղերքը ամտոսէին, թէ կնչի լսեցին ծեր մարդի խօսքը: —

Ժդ. Կարիք օրտայ բարեխաճ:

Եւքրանդըրը յետ եկաւ ուսումնարանից և ասաց իրա մօրը՝ մայր իմ, լսեղձ՝ Երկուրցը, որ ոչ հայր ունի, ոչ մայր,



շատ հիւանդ է . և էն մարդիքը , որ նրան վեր են առել  
իրանց տանը պահելու , թողել են նրան մէկ սենեակի  
(օթախի) մէջ և ոչ տէրու թիւն են անում նրան , ոչ հոգս  
են քաշում : Շատ մեղքս դալիս է խեղճ Ախիլը , և ես  
ցանկանում եմ շուտ շուտ գնուլ նրան տեսնելու , եթէ  
գուք հրաման կրտաք :— Շնորհաւ , սիրելի՛ սրղեակ , պատաս-  
խան տուաւ մայրը , պէտք է և լաւ բան է օգնել ընկերին  
կարիք ժամանակը . բայց զգոյշ կացիր , և առաջ խմայլի  
թէ ի՞նչպէս հիւանդու թիւն է նրա հիւանդու թիւնը , դիպ-  
չնդ է , թէ չէ , որ գու ինքդ էլ վասնզի մէջ չընկնես .  
Աղէքսանդրը էն բոպէին վաղեց , խմացաւ և եկու յայա-  
նեց մօրը , թէ Ասիոլայի հիւանդու թիւնը դիպչող չէ . նա  
սխաւ ամէն օր գնալ իրա հիւանդ ընկերի մօտ , նստում  
էր մէկ քանի սհաթ նրա կողինքի մօտ , ինչ որ նրան պէտք  
էր լինում բերում էր և երբեմն գիշերն էլ մնում էր նրա  
մօտ մէկ քանի սհաթ : Աբբօր Ախիլայը սխաւ առող-  
ջանալ , Աղէքսանդրը կարգում էր նրան ուրախացնելու հա-  
մար մէկ քանի երես լաւ դրքերից և բերում էր նրա հա-  
մար զօրութիւն տուող կերակուրներ , որ նրա խնդիրքով  
եփում էր մայրը : Մէկ օր Աղէքսանդրի ընկերներից մէկը  
տաւ նրան՝ գու շատ յիմար տղայ ես , որ երկար նստում  
ես հիւանդ Ախիլայի կողինքի մօտ , ես ամենեւին չեմ գնալ  
նրա մօտ :— Մի՞թէ քեզ համար մտիթարութիւն չէր լինիլ ,  
պատասխան տուաւ Աղէքսանդրը , եթէ դու հիւանդ լի-  
րէիր , ամէնքը քեզ թողնէին և մէկ ընկերդ քեզ մտիթա-  
րէր , հոգս քաշէր քեզ համար և միշտ գար քեզ մօտ : Քիչ  
ժամանակից յետոյ Ախիլը բողբոլմն առողջացաւ և սըր-  
տանց շնորհակալ էր Աղէքսանդրից նրա արած օգնութիւնի  
համար : Ի՞նչքան ես ուրախ կըլինէի , ասում էր նա , եթէ  
կարենայի իմ շնորհակալութիւնս քեզ յայտնել մէկ բա-  
նով , սիրելի՛ Աղէքսանդր . բայց ես աղքատ եմ և չեմ գի-  
տում , թէ ինչ պէտք է անեմ քեզ համար : Մէկ փոքր  
ժամանակից յետոյ , մէկ օր Աղէքսանդրը մտաւ իրա փո-  
քրը պարտէզը (բաղչան) , որ ինքը իրա ձեռքով անկել էր ,  
կարգել էր և պահում էր : Ինչքան դարմացաւ նա երբոր  
տեսաւ , թէ բոլոր անպիտան խտաբը քաղած են , մանր ա-

ուները (ջրանցքները) հաւասարած են և զանազան ծաղկունքներով պարտէզը լքցրած է: Մաջէր կարանում հասկանալ, թէ էս ինչպէս է իլել, էնդուր համար որ երեկ երեկոյ նա իրա պարտէզը էսպէս զարդարած չըթողաւ: Առաջ նա կարծում էր, թէ իրա ծնողքն են արել էս բանը իրան ուրախացնելու համար, բայց հարցնելով տեսաւ որ ոչ ծրնողքը և ոչ ծառայքը ոչինչ չ'են իմանում: Արջապէս Աղէքսանդրը իմացաւ մէկ հարեանից, թէ երախտագէտ (լաւութիւն չըմուտացող) Աիկոյը առաւօտը շատ վաղ բերաւ և անկեց էս ծաղիկները: Ես ժամանակուանից սկսած Աղէքսանդրը և Աիկոյը հաստատ բարեկամ դառան և իրանց կեանքն էլ չ'էին խնայում մէկ մէկու համար:

Ժգ. Կաւոտէր:

Արշակը միշտ կուլում էր իրա եղբօրների և ընկերների հետ: Եթէ նրա պղտիկ քոյրը նրա մէկ բանին ձեռք էր տալի, նա բարկանում էր, կուլում էր և շատ անգամ ծեծում էր նրան: Երբոր նրան տանում էր ուսումնարան կամ ուսումնարանից բերում էր տուն, անդադար կալի էր անում նրան, երբեմն պատճառ բերելով, թէ շատ ծանր է գընում, երբեմն թէ շատ շուտ է գնում, շատ անգամ տանում էր անխնայ քաշելով, և թէ նա չ'էր ուզում գնալ նրա հետ: Եթէ քոյրը նստում էր մէկ տեղ, Արշակը նրան ասում էր՝ վեր կաց էս տեղից, ես եմ ուզում էս տեղ նստել. և եթէ նա իրա կամքով չ'էր վերկենում, նա ծեծելով քշում էր նրան: Եղովտի բաներ էլ տնում էր նա ուսումնարանումը, և վերջապէս էնքան զգուեցրել էր ամենքին, որ ոչ ոք չ'էր ուզում նստել կուլորար Արշակի մօտ: Մա էս բաները իրա համար պարծանք էր համարում և պարծենալով ուրիշներին էլ պատմում էր, և մեծ յոյս ունէր, թէ ամենին կարող է յաղթել: Ամենից աւելի տանջում էին նրա ձեռքից մանր տղեքքը կամ ուժ չունեցողները, որք չ'էին կարանում նրան յաղթել, նամիշտ ծիծաղում էր նրանց վրա և շատ յիմարութիւններ էր անում, փողոյներումն էլ (բուջէքումը) շատ անգամ էր



պիսի բաներ էր անում , ըսյց որովհետև հնաեղ պատահում էին իրանից աւելի ուժով տղերք , հնդուր համար նրա երեսը միշտ ջարդած էր լինում : Մէկ օր հսպէս կռւի ժամանակը նրա գլխին մէկ տղայ հնպէս խփեց , որ նա երեք շաբաթ հիւանդ պառկեցաւ , և գլխի պատուածի տեղը մընաց բոլոր կեանքը : Ըսյց էս փորձանքիցն էլ չընրատուեցաւ կռւասէր Արշակը : Երբոր նա մեծացաւ , մէկ օր սաստիկ բարկացած կռւելու ժամանակը , հնպէս խփեց մէկ մարդու , որ սպանեց , հստուր համար նրան բռնեցին , պատժեցին և նա իրա բոլոր կեանքը անցկացրուց Սրբիբունը ծանր մշակութիւնի մէջ : Տեսէք թէ ի՞նչպէս վատ բաներ են դուրս գալի կրուասիրութիւնից և բարկութիւնից :

ԺԵ. Չոր պոքր :

Մէկ ուսումնարանումը երկու տղերք կային , որոց ծընողքը հոգս չ'էին քաշել նրանց վարքը ուղղելու համար , և հնդուր համար նրանք ուրախութիւն էին համարում ամէն բանը փչացնել և ամենին ձանձրացնել (բեղբեցնել) : Մեղանների և աթոռների վրա նրանք թաքուն փորում էին դանակով զանազան ձևեր , իրանց մօտ նստող աշակերտների տետրակները թանաքով կեղտոտում էին և նրանց գրչները ճեղքում էին կամ թաքնում : Փողոցներումը նրանք աւելի վատ բաներ էին անում : Միբզ կամ պտուղ ծախողների ամանները գիտութիւնով շուռ էին տալի կամ տան ետև թախկացած նրանց վրա քար և ցեխ էին գծում : Արեկոյին երբ որ նրանք ման էին գալի փողոցներումը , մեծ փայտերով խփում էին պատուհաններին , որ տան մէջը լինողներին վախացնեն , կամ դրան փոկրիկ զանգակները քաշում էին և իսկոյն փախչում էին : Մէկ օր այսպիսի չարութիւն անելու ժամանակը նրանց բռնեցին և սաստիկ պատժեցին էն պատժով , որին նրանք վաղուց արժանի էին :

ԺԶ. Անբաւան :

Մարտիրոսի ծնողքը շատ հարուստ էին և շատ բարե-

սիրտ. և որովհետև Մարտիրոսից աւելի որդի չ'ունէին, էն դուր համար նրա ամէն ուղածը կատարում էին, և նա ամէն բանը ունէր՝ լաւ շորեր, լաւ կերակուրներ և ամէն տեսակ խաղալիք: Բայց Մարտիրոսին չ'էր կարելի բռնել բանով բաւականացնել: Եւ երբէք չ'էր ուրախանում ունացած բանի վրա, միշտ դանում էր նրանց մէջ մէկ պակասութիւն և միշտ պահանջում էր աւելի լաւը: Օտորինակ, եթէ նրա համար կարում էին նոր շորեր, նա կամ կոճակները չ'էր հաւանում, կամ ասում էր թէ նեղ է կարած, կամ լին է, կամ երկայն է, կամ կարճ է: Եթէ ծնողաց հետ դնում էր մանդալու, անդադար զանգատ էր անում կամ շորից, կամ ցրտից, կամ տաւում էր, թէ շատ հեռու է ճանապարհը, և համարեւ թէ ամէն բոլի ասում էր՝ ան, երբ կրհասնենք: Իսկ եթէ դնում էին մէկ տեղ, նա կրկին չ'էր հաւանում էն տեղը և ասում էր որ ծնողքը տաննն նրան ուրիշ տեղ: Իսպէս բաներով Մարտիրոսը իրա անբաւականութիւնով իրան էլ զրկում էր ուրախութիւնից, նեղանում էր և ուրիշներին էլ նեղացնում էր: Երա համար ուրախութիւն չ'էր կեանքի մէջ, և ո՛ր կ'ուզէր ընկերութիւն բնել պայպիսի անհաւան տղի հետ: Ին պատճառով նա երբէք ուրախ սիրա չ'ունէր և երբէք չ'էր զուարճանում իրա ունեցած բանով: Կ'ուղէ՛րք դուք էլ նրա նման լինել:—

ԺԷ. Բարեւորք:

Չմտաւայ մէկ սաստիկ ցուրտ օր Մահարը և Լ'րտեմը անց էին կենում տալից. ճանապարհին տեսան նրանք ձիւնի վրա պառկած մէկ անձանօթ մարդ, որ երևում էր թէ շատ խոր քնով քնած է: Մահարի սիրտը ցաւեց նրա համար և հասկանալով, թէ նա կարող է սառչիլ էս տեղ, գնաց նրա մօտ և սկստ զարթեցնել: Եւ շարժեց անձանօթ մարդուն, բայց նա չըզարթեցաւ:— Դու շատ երկար ժամանակ կըշարժես դրան, ասաւ Լ'րտեմը ծիծաղելով. դա չէ զարթիլ, էնդուր համար, որ հարբած է. թող դրան և գնանք, շատ ցուրտ է:— Ըէ, պատասխան տուաւ Մահարը, եւ չ'եմ կարող սրան հսպէս թողնել. շատ կորելի սր էս



խեղճ մարդը ստոյն . թէ և սա հարբած էլ լինի , բայց էլի մարդ է , և հնուկս մարդ է , որին պէտք է մինք օգնենք : Ինչ որ ձեռքիցս կրգաց , ես ամէն բանը կ'անեմ , որ ազատեմ սրա կեանքը : — Ինչ կամենաս արա՞ , ասաց բարկաթիւնով Արտեմը . ես չեմ կանգնիլ էս տեղ և չեմ ստոյն : Դստակեանքն սա գնաց : — Ինչ ժամանակը Մակարը պատկած մարդուն ծածկեց ձեռով , հնդուր համար որ լսել էր , թէ ձիւնը տաքացնում է , և շուտով վազեց մօտիկ դիւղը , որ սայլ բերի : Սրա բազուկից պատահեցաւ մէկ բարետիրտ դեղացի , որ դնում էր քաղաքից : Սրա օգնուած թիւնով քիչ ժամանակի մէջ կիսամեռ մարդուն շնչի բերին և Մակարը ուրախ ուրախ վազեց իրա տուն : Դուք ի՞նչ էք միտք անում Մակարի վրա . և ի՞նչ էք ասում Արտեմի համար : Արանցից որի՞ն կ'ուզէք աւելի նմանիլ :

Ժբ. Արեւոյ (Վահագն) աղջիկ :

Կատարինէի դայեակը (երեխայ պահող կնիկ) շատ սնտուկապաշտ էր , և շատ անգամ նրան պատմում էր սուտ պատմութիւններ զարհուրելի տեսիլքների վրա , և նա սովորել էր քնել ճրագով և մէնակ քնել չէր կարողանում . էստուրից նա վախկոտ իլաւ : Արբոր նրա տասը տարին լրացաւ , մէկ օր պատահեցաւ , որ նրանց տանը ամէնքը հիւանդացան , և հայրը ուրիշ քաղաքում էր . հնդուր համար Կատարինէին պէտք իլաւ մէնակ քնել : Սրա համար մեծ դժուարութիւն էր մանաւանդ էն ժամանակը , երբոր մայրը չըկամեցաւ որ նրա սենեակի (օթախի) մէջ մնայ վառած մում , և մայրը կարծում էր , թէ Կատարինէն , որ այժմ մեծ աղջիկ էր , կարող է քնել մ'թնումը : Սա շատ ցանկանում էր քնել հիւանդների մօտ , բայց մայրը չըկամեցաւ , որովհետեւ հիւանդութիւնը կարող էր նրան էլ դիպել : Կայ լինելով գնաց Կատարինէն իրա սենեակը , շուտով հաննց շորերը , պատկեցաւ և վախից ծածկեց գլուխը բարձի տակ : Ժամանակ առ ժամանակ հանում էր նա գլուխը բարձի տակից , որ շունչ քաշի և վախենալով մօտիկ տայ , թէ ի՞նչ կայ տան մէջ : Գանկործ նրան թուեց , թէ դրան վրա մէկ

սպիտակ երկայն բան կայ կանգնած: Օտր հուրերով գլուխը  
 փաթաթեց վերմակի (եօղանի, լեհերի) մէջ և քրտինքը  
 ծածկեց նրա բոլոր մարմինը: «Աս չըկարաց երկար ժամանակ  
 մնալ հնպէս և վերջուպէս համարձակեցաւ գլուխը դուրս  
 հանել. բայց կրկին տեսաւ, որ սպիտակ բանը ոչ թէ մնայն  
 կանգնած է դրան մօտ, այլ և շարժուում է: Ինչ ժամա-  
 նակը սկսաւ Աստարինէն բարձր ձենով գոռալ և հն ըո-  
 պէին մայրը մօտաւ ներս: — Ի՞նչ իլաւ քեզ, Աստարինէ,  
 քնած ես, թէ չէ: Ի՞նչ, մայր իմ, մայր իմ, մէկ սպի-  
 տակ բան է: ... Ես լաւ գիտեմ, որ քո աչքին միշտ երե-  
 ում են հրաշքներ, ասաւ մայրը: Խելքդ գլուխդ հաւաքիր.  
 Ինչիցն ես վախեցնում: — Քննելով տեսան որ սպիտակ  
 հրաշքը սպիտակ երեւոյրիչն է իլել, որ կախ արած էր  
 դրան վրա և լուսնեակի շքը ընկել էր վրէն: Մայրը դը-  
 րան մօտ կանգնած սկանջ է իլել դնում, թէ Աստարի-  
 նէն քնած է, թէ չէ. և երբ նա դուռը բացել է, երես-  
 սրբիչը սկսել էր շարժիլ: Աստարինէն ամուսնեցաւ իրա եղբ-  
 խայրական վախկոտութիւնից, և հն ժամանակից յետ նրան  
 միւսանգամ հրաշքներ չ'էին երևում:

ԺԹ. Բարեկրկն գոռոցք:

Ասհագը շատ հիւանդ էր և նրա մայրը երեք գիշեր  
 չ'էր քնած և նրստած էր նրա կողինքի մօտ: Արա տատն-  
 երկու տարեկան Մարիամ քոյրը վախեցնում էր, որ մայրը  
 այնքան անքուն մնալով ինքնէլ չըհիւանդանայ, և հն պատ-  
 ճառով խնդրեց որ իրան հրաման տայ չորրորդ գիշերը պա-  
 հել հիւանդ եղբորը. բայց գորովադուրթ մայրը չ'էր կա-  
 մենում նրան այդ հրամանը սուլ մէկ հն պատճառաւ,  
 որ Մարիամը ինքն էլ տկար էր, և երկրորդ հնդուր, որ  
 վախեցնում էր թէ նրա քունը չըտանի և Ասհագը չըմը-  
 նայ առանց օգնականի: Երբոր երեկոյ իլաւ հայրը հար-  
 կադրեցաւ պառկել քնելու, հնդուր համար որ նրա աչքերը  
 դադրածութիւնից փակուում էին: Թէպէտ Մարիամը իրա  
 մօր հրամանովը պառկեց քնելու, սակայն սերը և հոգսը  
 չըթողին նրան քնելու: Եւելով թէ մայրը խորը քնի մէջն



է, նա կամաց կամաց վերկացաւ տեղից, վեր առաւ իրա ձեռագործը և նստաւ գեանի վրա հիւանդ եղբօր կողինքի մօտ: Նա մեծ ուշադրութիւնով մտիկ էր անում եղբօրը, և երբսր նա շարժում էր կամ բան էր ուզում, նա խիղջն կատարում էր ուղածը: Այսպէս անցաւ համարեան ողջ գիշերը և ի՞նչքան Վարիամը ուրախանում էր, որ կարաց իրա մօրը էն գիշերը հանգստութիւն տալ:

Իս բանից յետոյ շատ ժամանակ չ'անցաւ մայրն էլ հիւանդացաւ, և թէպէտ շուտով առողջացաւ, բայց շատ տկար էր: Բժիշկը, Վարիամը մօտ, ասաւ, եթէ հիւանդը կարանայ ամէն օր քիչ քիչ գինի խմել, շուտով ուժի կը դայ: Բայց այս խեղճ կնիկը ո՞ր տեղաց կարող էր գինի գտնել: Ահազգի հիւանդութիւնը նրան շատ թանկ նրստեց: Վարիամը լսեց, թէ իրանց կացած տանը, մէկ ուրիշ կենսող, մարդ է փնտռում, որ կտորած վայտերը տանի սառնատուն: Նա խնդրեց որ իրան յանձնեն էդ գործը, և խստացաւ կատարել ինչպէս պէտքն է: Զորս սհաթի չափ աշխատելից յետոյ նա ստացաւ էնքան փող, որ կարող էր իրա մօրը համար քիչ գինի գնել: Թէպէտ նա շատ դադրեցաւ այդ անտփոր աշխատանքից, բայց երբ որ ստացաւ իրա վարձը, էնպէս շուտ վազեց, որպէս թէ այն օրը ամենեւին աշխատանք չ'էր արել: Ի՞նչքան ուրախանում էր նա, որ իրա ձեռաց աշխատանքով կարաց գնել իրա մօր համար այս զօրացուցիչ խմելիքը: Իսկ մօր սիրտը այնքան շարժեցաւ Վարիամը այս որդիական սիրոյն վրա, որ լաց էր լինում ուրախութիւնից, Ա՛խ, ինչ լաւ կըլինէր եթէ ամէն մանուկ այնպէս մտածէր, ինչպէս որ Վարիամը:

Ի. Ինչի՞նչ կարծիք:

Գինեվաճառ Մելերի կրպակից (գուքնից) գողացել էին շատ շեշերով զանազան գինիներ, և նա չ'էր կարանում գողին գտնել: Մէկ օր նրա որդի Թորոսը եկաւ տուն շունքը կտրելով և պատմեց, թէ յատուկը գիտէ, ով է գողացել գինիները կրպակից — Ո՞վ է, հարցրաւ հետաքրքիր հայրը: — Մեր փորրիկ Սարգիսը: Ենդուր համար, որ ես էս

սհաթիս տեսոյ, որ նա երկու շիշ ձեռին վախենալով դուրս  
եկաւ կրպակից: Փոքրիկ Սարգիսը երկար ժամանակ Մել-  
լերի տանն էր էս բանից առաջ, բայց նորերումս դուրս էր  
եկել, և որովհետև նա աղքատ աղայ էր, վասնորոյ Մել-  
լերի տանը նրան օգնում էին: Ես պատճառաւ Մելլերը  
շատ զարմացաւ երբոր լսեց թէ Սարգիսը նրա տնից բան է  
գողանում և երբէք չ'էր ուզում հաւատալ, բայց թորո-  
ւր էնպէս հաւատացնում էր, մինչև որ հայրն էլ սկսաւ  
կարծիք տանել Սարգսի արարքի վրա: Մելլերը կանչեց Սար-  
գսին իրա մօտ, խորը մտիկ առաւ նրա երեսին և հարցրուց՝  
քու խղճմանը իստակ է թէ չէ: Ես հարցնելու ժամա-  
նակը, կարծես թէ, Սարգիսը խառնեցաւ և կարմրեց:  
Ճշմարիտը պատասխան տուր, ասաւ Մելլերը: — Ես ամե-  
նեկն չեմ իմանում, ասաւ Սարգիսը կապիապէտով, թէ  
ես ի՞նչ վատ բան եմ արել: — Բո երեսը մեղադրում  
է քեզ, ասաւ Մելլերը և բարկութիւնով մտիկ արաւ ե-  
րեսին, էն օրը դու իմ կրպակումս իլըլ ես թէ չէ. երկու  
շիշ գինի տարել ես, թէ չէ: Սարգիսը չըկարաց չէ ասել,  
բայց երբ նրան սկսան յայանապէս մեղադրել, թէ նա գու-  
ղացել է կրպակից երկու շիշ գինի, նա առանց վախի սկը-  
տաւ հաւատացնել, թէ մեղաւոր չէ, և յատուկ արդա-  
ւոցրուց գլուխը: Եւ մէկ մէկ սրտամեց, թէ էն օրը տա-  
նում էր իրա մօր համար երկու շիշ գարեջուր և տարաւ  
գրեց կրպակումը, մինչև որ դնաց օգնելու իրա մէկ ընկե-  
րին տանել մեծ ծանր քթոց, որ նա չէր կարանում մէնակ  
տանել: Բայց երբոր նա յետ էր գալի, մէկ անկարգ աղայ  
սկսաւ նրան ծաղր անել և էնքան ետեւից վալեց, մինչև որ  
նա մտաւ կրպակը: Կրպակից դուրս դալուց նա վախենա-  
լով մտիկ էր անում էս կողմը, էն կողմը որ տեսնի, թէ գու-  
ցէ էն ետեւից եկող աղան մէկ տեղ թախկացած լինի: Մելլերը  
հարցրուց էս բաները Սարգսի մօրից և յատուկ իմացաւ,  
թէ նա ճշմարիտ է ասել: Են ժամանակը նրա սիրտը շատ  
նեղացաւ, որ նա անմեղ և իստակ ծառայող Սարգսին մե-  
ղադրում էր այսպիսի վատ բանումը: Ես անիրաւութիւնը  
մտաւցնելու համար նա ընծայեց Սարգսին նոր շորեր, խկ  
իրա որդուն իրատեց այսպէս՝ միւսանգամ դժոյշ կացիր, որ



առանց բաւական պատճառի ոչ որի վաւ վատ բան չը խօսես, հնդուր համար որ դու ինքդ այժմ տեսար, թէ ինչ պէս մարդուս աչքը խաբւում է:

Իս. Հեռաբերի աղջիկ:

Մատաւիան շատ հեռաբերի աղջիկ էր և նրա ծնողքը շատ անգամ նրան պատժում էին էս սովորութիւնի համար: Եթէ փողոցումը լսում էր նա մէկ ձայն, էն սրհամ թին վազում էր պատահանի (փանջարի) մօտ տեսնել թէ ինչ են անում: Մէկ օր նա էնպէս շտապով վազեց, որ գլուխը խփեց շուշն, կտարեց և երեսը ջարդեց: Փողոցներումը հնքան շտապով էր վազում տեսնել, թէ ինչն համար ժողովուրդը հաւաքած են մէկ տեղ, որ ձեռքից կորցնում էր իրա զորձածը կամ ուրիշ բան: Մէկ օր քիչ մնաց որ նրան մահ էր պատահում. նա անդգուշութիւնով կանգնած մտիկ էր անում թէ ինչպէս են կապում եղը: Յանկարծ կատղած եղը կարեց կապերը և վազեց Մատաւիայի վրա: Մատաւիան լիզտպատու վազեց մտաւ մէկ տուն և ազատեցաւ, բայց նրա առջևի ղենջակը եղը խլեց իրա եղջիւրներով (արդերով): Հեռաբերը թիւնը շատ անգամ հարկադրում էր նրան ուրիշներին դռներից և պատահաններից ականջ դնել, և նա շատ անգամ երկկոնները կանգնում էր պատահաններին տակը լսել, թէ ի՞նչ են խօսում տան մէջ: Բայտէս ականջ դնելու ժամանակը մէկ օր նրան պատահեցաւ փորձանք: Տանտէրը բռնեց նրան, լաւ ծեծեց և արձակելուս ասաց՝ միւսանգամ ականջ մի՛ դնիր, եթէ ոչ, սրանից վատ պատիժ կըստանաս:

Եր. Բանտի աղջիկ:

Շուշանը սղտիկուց մեծ սէր ունէր ուսում առնելու և հարկաւոր գիտութիւններ ստանալու: Երբ որ նա մէկ նոր բան էր տեսնում, հնքան չէր հանդստանում, մինչև որ լաւ տեղեկանում էր. իսկ եթէ իրա մտածմունքովը չէր կարանում հասկանալ թէ ինչն համար պէտք է էն բանը,

և թէ ինչի՞ համար կն տեսակ է և ոչ ուրիշ տեսակ, նա կնքան հարցնում էր մինչև որ լաւ հասկանայ: Աստուծոյ թիւնով զնում էր ուտում առնելու, և շատ վատ եղանակին էլ ճանապարհի երկարութիւնը նրան չէր վախեցնում: Աստուծոյ թիւնով էր ամէն նոր խրատական գրքի վրա, ուրիշ մանր աշակերանների նման չէր շուռ ապի միայն թղթերը, այլ կարգում էր ուշագրութիւնով և լաւ միտք անելով, և կնքուր համար և թէ նրան հարցնում էին թէ ի՞նչ է գրած կն գրքումը, շուտով պատասխան էր տալի: Ամէն գործումը, մանաւանդ կարգալուծը, նա շատ հմուտ էր, և աւելի լաւ սովորելու համար նրան տուին մէկ երեւելի կար կարողի մօտ օգնական, որ յանձն առաւ նրան սորվեցնել կն պայմանով, որ նա մէկ բոլոր տարի կանուխ առաւօտանից մինչև գիշեր կար կարի կամ գործի նրա համար առանց վարձի: Արք որ էս դառը տարին անց կայաւ, նա կնքան լաւ սովորել էր, որ ոչ թէ միայն կարողանում էր իրան պատուով պահել, այլ և իրա հիւանդ մօրն էլ ծերութիւնի ժամանակը պահում էր: Որովհետեւ բանասիրութիւնը միշտ հարկադրում էր նրան ծանօթութիւն ունենալ միայն խելօք մարդկանց հետ, որմեցից կարելի էր հարկաւոր բան սովորել, կնքուր համար նա պահպանեց իրան զանազան յիմարութիւններից և ամէն խելօք մարդիք նրան սիրում էին և պատուում էին: —

Իգ. Բարի գոհացման:

Այսօճը շատ բարեսիրտ տղայ էր: Արա համար մեծ ուրախութիւն էր լինում, եթէ նա կարողանում էր ուրիշներին բաւականութիւն տալ, և շատ անգամ իրան զրկում էր միայն կնքուր համար, որ կարանայ ուրիշներին ուրախացնել, մանաւանդ իրա եղբորներին և քուրբերին: Աթէ նա լուծ էր տարաբար մարդկանց համար մէկ բան, նրա սիրտը նեղանում էր կարեկցութիւնից, և շատ անգամ, երբ որ հայրը սեղանի վրա պատմում էր մէկ տարաբար պատմութիւն, Այսօճի աչքերը լքուում էին արտասուքով: Անկ որ հայրը սրամեց մէկ հօշակարի համար,



որին Մատնը շատ լաւ ճանաչում էր, Թէ նա իրա կնկա-  
նով և երեխերբով շատ դառն վեճակի մէջ է : Իմ շատ  
մեղքս գալիս են էդ մարդիկը , ասաց հայրը , էնդուր հա-  
մար որ նրանք տանջուում են բողբոլիին անմեղ , և միայն  
էն պատճառով , որ հաւատացին վաւ մարդկերանց : Հիմի  
էն խեղճ մարդուն ոչ որ բան չի ապի էնդուր համար ,  
որ նա կաշի էլ չ'ունի , և նրա ամէն լաւ բաները ծախած  
են : Եթէ ես ունենայի մէկ փոքր աւելի փող , ես նրան  
պարտք կըտայի և նա կրկին կ'ուղղուէր : Մատնը էս ամէն  
խօսքս լսում էր մեծ մտադրութիւնով : Ղաշից յետոյ նա  
գնաց իրա հօր մօտ և ասաց՝ հայր իմ , եթէ ես կամենայի  
տանել խեղճ Մարտինի մօտ ( կօշկակարի անունը ) արծա-  
թի մանէթը , որ ինձ ընծայել է կնքահայրս , դուք հրա-  
ման կըտայի՞ք ինձ : Հայրը սկսաւ մտածել , էնդուր հա-  
մար որ գիտէր , Թէ Մարտինը էս մանէթը չի կարող յետ  
տու . սակայն Մատնը էնքան խնդրեց , մինչև որ հայրը  
կամք տուաւ : Կարծես Թէ Մտնը երբէք էնքան ուրախ չ'էր  
իլել , ինչպէս էն ըսպէին , երբ որ նրան հրաման տուին տա-  
նել իրա արծաթի մանէթը խեղճ Մարտինի մօտ : Մար-  
տինը շատ կաշի չ'էր կարող առնել էնքան քիչ փողով ,  
բայց Մատնի հայրը երաշխաւոր իլաւ նրա համար և նա բա-  
ւական գործ գտաւ իրա համար : Փոքր ժամանակումը էս  
մարդի գործերը էնպէս լաւ գնացին , որ նա իրա կողինքն  
էլ , որ աղքատութիւնի ժամանակը գրաւ էր գրել , հա-  
նեց գրաւից և ապահովացրուց իրա ապրուստը , Ի հարկէ  
ամէն տղայ չ'ունի արծաթ մանէթ , որ կարանայ Մատնի  
նման ընծայել , բայց ամէն տղայ կամ աղջիկ կարող են դո-  
նեա՛ մէկ փոքր բանով օգնել ատարաբախտ մարդուն և նը-  
րան մխիթարութիւն տալ : —

իդ . Ի՞նչ է նշանակում պրիմուլը :

Սոլումներ վատ սովորութիւն ունէր , որ միշտ տրան-  
ջում էր և բարկանում էր : Եթէ նա կարծում էր , Թէ  
մէկը իրան վնաս է տուել , շարունակ մէկ քանի օր խռո-  
վում էր , բարկանում էր նրա վրա , չ'էր խօսում նրա հետ

և պատասխան էլ չ'էր տալի նրա հարցմունքներին, և էն պէս բարկացած էր մտիկ անում, որ կարծես թէ ամէնի հետ ուղում էր կռւիլ: Ըստ ժամանակի էր անցկենում մինչև որ նա կռիլն սկսում էր խօսիլ: Այսպիսի անբաղարարութիւն անում էր նա ոչ թէ մէնակ եղբօրներին, քուրերին և ընկերներին հետ, այլ և իրա ծնողաց հետ, եթէ նրանք մէկ բանի համար պատժում էին նրան:

Այս վատ սովորութիւնը փոխելու համար հայրը հըրամայից բոլոր ամենցիքին, որ նրանք, եթէ Սոլոմոնը մեւս անգամ էլ կը բարկանայ կամ կրտորանջայ մէկի վրա, նրա հետ էլ հնպէս վարեն. իսկ եթէ նա էլ չի անիլ, ամէնը պէտք էր մէկ հնքան ժամանակի էլ, ինչքան որ նա խռով էր կացել, աւելի մնային և նրա վրա բարկանային: Արք որ մէկ քանի անգամ հսպէս արին, Սոլոմոնը տեսաւ թէ ի՞նչքան վրաս է քաշում իրա էս սովորութիւնիցը, և իսպառ փոխեց իրա վարքը:

### Ին. Ասխարհ:

Մէկ բոշայ կնիկ եկաւ մէկ գիւղ և ժողովուրդի համար թուղթ բացանելով փող էր հաւարում: Ըստ մարդիկ հնքան շուտ հաւատացող և կարճամիտ էին, որ հաւատում էին էս խաբերայ կնիկի խօսքին: Այս ամէն մէկին հնպէս բաներ էր ասում, որ նրան հաճոյ էր: Մէկին ասում էր, թէ մեծ շահ կը ստանայ, միւսին՝ թէ դանձ (խաղինայ) կը գտնի, և այլն: Եսպէս բաներ ասելու համար նրան շատ փող էին տալի: Ինչ ժամանակը Գաւառագետը լսեց նրա համբարը, և որովհետեւ այսպիսի խաբերայութիւնները սաստիկ արգելած են, հնդուր համար էն կընկան բռնեցին և պահապաններով տարան քաղաք: Այն նա յիշաւ ի գիտէր գալիքը իմանալ, քի, մարդարէութիւն անել, պէտք էր որ իրա գլխին գալու տարաբախտութիւններն էլ իմանար և փախչէր: Սակայն շատերը հաւատացին նրա ասած խօսքերին, հնդուր համար որ ցանկանում էին, որ նրա ասածները ճշմարիտ լինին. և էս պատճառով շատերը ատարաբախտեցան, հնդուր համար որ, զորօրինակ, էն մար-



դը , որին նա ասում էր , թէ գտնձ կը դտնի , չէր աշխատում և յոյս ունէր թէ առանց իրա աշխատելու կը հարբտանայ : Դատ երկտր ժամանակ էն զիւղումը մնացին նրա խարէութիւնի վաստարեր հետեւանքը : —

Իդ . Փողով խաղալու :

Ստեփանը երկտր ժամանակ մէկ հարուստ մտրդի մտտայգեպանութիւն էր անում և նրան գովում էին նրա աշխատասիրութիւնի , հմտութիւնի և հաւատարմութիւնի համար : Աս շատ շտորհակալ էր իրա վիճակիցը և աւելի ոչ ինչ չէր ցանկանում , միայն թէ մինչև իրա մահը էնպէս լաւ մնայ , որովհետև իրա տէրը սիրում էր նրան և պատւում էր : Սէկ որ շտապով մտաւ նրա այգին Միտոնը և ուրախութիւնով ասաց , թէ վիճակումը ( լտտերէյումը ) տարել է 500 մանէթ : Հիմի ես ոչինչ բան պակաս չ'եմ ունենալ , բարձր ձէնով ասաց նա . ես էլ հիմիկայ պէս էնքան աշխատանքով չ'եմ ձարիլ ինձ համար ապրուստ , այլ դուրս կը գամ իմ աղայի մտտից (նա էլ Ստեփանի աղայի մտ էր ծառայում) , փոքրիկ առուտուր բաց կ'անեմ և լաւ կ'ապրեմ : Քեզ էլ խորհուրդ կը տամ , Ստեփան ընկեր իմ , դու էլ փորձիր քո բախտը վիճակումը : մի թէ էն աւելի լաւ չի լինիլ , երբոր մենք ինքնեքս կը վիճենք մեր աղաները . և ի՞նչ կը վիճի մեզ մեր ծերութիւնի ժամանակը . ո՞վ կը հոգայ մեզ համար , ո՞վ տէրութիւն կ'անի մեր տիրութիւնի ժամանակը , եթէ մենք միշտ ծառայ մընանք : — Ստեփանը գլուխը շարժեց , և չըզիտէր , թէ ինչ պատասխան տայ . բայց Միտոնը էնպէս հաւատացրուց նըրան , թէ անպատճառ վիճակումը կը տանի , էնպէս զեզեցիկ ցոյց տուաւ նրան անկախութիւնը , որ Ստեփանի սիրտը ուզեց մէկ քանի մանէթով փորձել իրա բախտը : Աս վեր առաւ մէկ համարի (նոմերի) փոքրիկ մասը , և առաջին վիճակ դձեւումը ոչինչ չըտարաւ : Երբ որ նա սկսաւ տըրել , Միտոնը խրախոյս (սիրտ) տուաւ և ասաց թէ պէտք էր մանր մանր կտորներ վեր առնել շատ համարներումը (նոմերներումը) և պէտք է էնքան ժամանակ շարունա-

կես գրուելը, մինչև որ տանես 500 մանէթ :

Ստեփանը չէր կամենում 'ի զուր կորցնել իրա փողը և հնգուր համար կրկին գրուեցաւ : Եսպէս շարունակեց նա շատ անգամ, և ամէն անգամ տանուլ էր տալի : Արջ ջուպէս իրա սեփական փողերը աւարտեցան . բայց նրա սիրտը ուզում էր շարունակել հը խաղը, որովհետև հաստատ կարծում էր, թէ պէտք է մէկ օր տանի : Այլ ի՞նչ արաւ նա փող ձարելու համար : Այս սկսաւ իրա տիրոջը խաբել այդ զիւր պտուղներն ծախսուելը, որ առաջ ողջից հաւատարիմ ծառան էր. (սե՛ս, ինչքան փոխեց նրա բարբը խաղալու ցանկութիւնը) : Բայց նրա խաբէութիւնը շուտով յայտնուեցաւ և սղան նրան դուրս գծեց իրա մօտից : —

Այն ժամանակը նա գնաց իրա բարեկիւր Միտօնի մօտ, որ իրա տարած փողերը լաւ չէր պահել, և միշտ շարունակում էր խաղը, թէպէտ և շատ ժամանակ էր որ ո՛չինչ չէր տանում : Միտօնը պարտքի տակ էր ընկել, և վերջապէս փախել էր իրա հայրենի երկրից : Ստեփանն էլ սրիշ ձոր չքգտաւ, բայց միայն հեռանալ իրա հայրենի տեղից, որովհետև նրան իբրև խաբէբայ մարդու և գողի, ոչ որ չէր ուզում վեր առնել ծառայելու . և նա մտաւ յետին աղքատութիւնն մէջ : Ո՛վ որ իրա աշխատանքով, իրա քրտինքով չե ուզում փող վաստակել, նա վերջը տարաբաղտ կրկնի : —

### Ի՛նչ . Ստեփանաշխատիւնն :

Միմօնը հնրան շուտ հաւատացող էր, որ ամէն լսած բանին հաւատում էր, միտք չ'անելով ճշմարիտ է, թէ սուտ : Այս շուտ հաւատալը նրան մտախապաշտ արաւ : Այլ թէ մէկը նրան ասէր, թէ այս ինչ կամ այն ինչ տանը հրաշք է երևում, նա հն սհաթին հաւատում էր և ուրիշներին էլ պատմում էր հնպէս, ինչպէս մէկ հաստատ բան . և եթէ մէկը ասէր, թէ հն տանը, որի վրա նստի և կանչի բոլ թռչունը (բայիզուշը), կամ որի առաջևը շունը ոռնայ, անպատճառ մէկ մարդ կը մտնի, նա հաստատ հաւատում էր : Մէկ օր նա վեր ընկաւ և ստը քարին քսուե-



լով քերուեցաւ: Փոխանակ բժշկին յոյց տալու և խնդրելու որ դեղ անի, նա լսեց մէկ պառաւ կնիկայ խօսքը, որ նրան խորհարդ տուաւ քերուած ոտի վրա դնել ջրախտտի տերեւեր: Եւ հաստատ յոյս ունէր, թէ հդ անելով նրա սարկառողջանայ, որովհետեւ պառաւ կնիկը ասաց թէ էս դեղով շատերին առողջացրել է, և հնդուր համար Սիւմնը հաւատում էր նրա խօսքերին և ուրիշ դեղի համար միտք չէր անում: — Բայց Սիւմնի վէրքը (եարան) աւելի մեծացաւ և շուտով փոխուեցաւ կէր ցաւ: Ին ժամանակը նա հարկադրեալ դնաց բժշկի մօտ, որ ուրիշ հնարք չբացաւ առողջացնելու, բայց միայն կտրեց նրա սար. և Սիւմնը շատ ուրախ էր, որ հղբով աղատուեցաւ և չմեռաւ:

Մտախաղաշառթիւնը շատ մեծ մեծ տարաբախառթիւնների աղբիւր է. բայց ի՞նչ անենք, որ շատ մարդէք Սիւմնի նման են:

Իր. Աշխատանքների և ծուլանքների պարտիք:

Տրդատը էր որդի հարուստ վաճառականի: Արա հետ միասին կենում էր Պետրոսը, որ էր որդի պղնձգործի: Արիւսն էլ համարեալ թէ մէկ հասակի էին, երկուսն էլ մեծանում էին միասին և Տրդատի հայրը սիրում էր Պետրոսին իրա որդիի պէս և ոչ թէ միայն ստանցնում էր սեղան իրա մօտ և հազցնում էր, այլ և նրա ուսման համար էլ փող էր տալի ուսումնարանում: — Թէպէտ Պետրոսը շատ մեծ ընդունակութիւն չուներ, և հնդուր համար ինչ որ սովորում էր, մեծ նեղութիւնով էր սերտում, սակայն նա շատ աշխատասէր էր: Սե՛ծ մտադրութիւնով նա հաւաքում էր իրա մարումը ամէն ուսուցչի ասածները, և ինչ որ ուսումնարանումը դաս էին տալի, նա տանը մեծ աշխատանքով սերտում էր և կրկնում էր. բայց յոյսմանէ ինքը առանց ուրիշի ասելու միշտ պատրաստում էր իրա դասերը: Իսպախ աշխատելով նա շուտով հասաւ իրա ընկերներին, որոնք նրանից աւելի ընդունակութիւն ունէին: Ամէնքը սիրում էին նրան և ասում էին, թէ նրա հայրը բախտաւոր կրկնի այսպիսի որդուց: Իսկ Տրդատը խելօք չէր

և ուսումնարանումը իրա վարժապետներին աւելի պատիւ  
չ'էր տալի։ Խաղալը, ձիու վրա հեծնելը, ձուկը սրալը և  
ուրիշ հասկնի զբօսանքը նա ուսումնաց աւելի էր սիրում։  
Երբ որ նրան յանդիմանում էին, նա ասում էր՝ ես պէտք  
է վաճառական դառնամ, իսկ վաճառականութիւնի համար  
շատ դիտութիւն պէտք չէ։ Եթէ ես սովորեմ կարգաւ,  
գրել և թուարանութիւն, ինձ համար շատ բաւական է,  
և էնդուր սովորելու համար դեռ ժամանակ շատ ունիմ։  
Խալկէս անցնում էին տարին տարիի ետեկց, և որովհետեւ  
նա կարծում էր միշտ, թէ դեռ ժամանակ շատ ունի, էնդուր  
համար կարգալը, գրելը և թուարանութիւնն էլ շատ վատ  
էր սովորում։ Ի հարկէ, նրա հայրը շատ ուրախ կըլնէր,  
եթէ նա աշխատասէր լինէր, բայց ստիպել չ'էր ուզում. և  
բայ յայնմանէ ինքն էլ կարծում էր, թէ նրա վիճակի  
համար շատ աւելի բան իմանալ պէտք չէ, էնդուր համար,  
որ որդին ամէն հարկաւոր բանը կ'անենայ, երբ որ ինքը  
նրա համար կըթողնի լաւ կարգած կարուած (միւլք)։ Բայց  
նրանք երկուսն էլ սխալում էին, էնդուր համար որ միտք  
չ'էին անում, թէ անօգուտ բաների վրա ժամանակ անց-  
նելու սովորութիւնը շատ մեծ վատութիւններ առաջ կը-  
բերի, քան թէ հասարակ ուսում չ'առնելը։

Երբ որ Տրդատը հասաւ էն հասակին, որ պէտք էր ու-  
սումնարանից դուրս դար, հայրը կամեցաւ նրան տան և  
առուտուրի կառավարութիւն սորվեցնել և սկսու նրան  
յանձնել զանազան գործեր. բայց Տրդատը աւելի լաւ էր  
համարում իրա սովորական զբօսանքը։ Փոխանակ արտը գը-  
նալու և ստիպելու մշակներին, որ լաւ բանեն, նա հեծ-  
նում էր իրա ձիուն և գնում էր քաղաք իրա բնկիբներէ  
մտա, խնջոյք և հացկերպթ էր տալի նրանց, իսկ մշակները  
ինչքան կամենում էին պարտալ էին մնում։ Թեպէտ հայրը  
շատ յանդիմանում էր նրան էս բանի համար, բայց ոչինչ  
չ'օգնեց, և խեղճ ծերը մեռաւ ցաւելով իրա որդու ան-  
կարգութիւններէ վրա։ Ին ժամանակը Տրդատը լիակատար  
իշխան դառաւ բոլոր հօրական կայքին և ինչպէս ուզում  
էր էնպէս էր կառավարում իրա կամրով. — Մէկ առակ  
կայ ասած՝ թէ ինչպէս օրօրոցումը, էնպէս էլ գերեզմա-



նումը կըլինի: Տրդատը մնաց առաջուայ տէս անկարգ. կէ նում էր առանց միտք անելու վաղուան համար, և իրա գործերը կառավարելու ամենեկին հոգս չ'էր քաշում: Եւ պիտի բաներով ելկու տարումը ոչ թէ մէնակ քանդեց և վեչացրոց բոլոր կայքը, այլ և էնքան պարտքի տակ ընկաւ, որ վերջապէս նրա անշարժ կայքը ծախեցին ածրդով (հրապարակաւ): — Այն դրածի աղետական գնեց էդ կալուածքները, և Պետրոսը, որ էնքան ժամանակ էն աղետականի տան կառավարիչն էր, և որ իրա աշխատասիրութիւնով և փող պահելովը իրա համար բաւական հարստութիւն էր հաւաքել, էն կալուածքը վեր առաւ աղետականից կապալու (իջարով): — Եւ խած կալուածքի գինը բաւական չ'իլաւ բոլոր պարտքերը հատուցանելու համար, և էնգուր համար Տրդատը պարսպ ման եկող և թափառական կրդառնար, և թէ Պետրոսը, իրա երախտագիտութիւնով և կարեկցութիւնով, վեր չ'առնէր նրան իրա տուն և չըպահէր:

Եւ աշխատասիրութիւնը և չափաւորութիւնը շատ փորձանքից պահում են. իսկ պարսպութիւնը ամէն տեսակ մեղքի պատճառ կրդառնայ:

### ԻԹ. Քաղցրեղէն:

Ազգազղինէն շատ վատ սովորութիւն ունէր ամէն տեւրիղէնի և խմելու բաների համը տեսնել, ինչ որ ձեռքը ընկնէր: Եւստուր համար շատ անգամ ծնողքը նրան պատժում էին, էն պատճառի որ քաղցրեղէն սիրելը ոչ թէ միայն ինքն իրէն վատ բան է, այլ և սովրեցնում է մարդուս անչափաւոր լինել ամէն ցանկութիւնի մէջ: Ոչ մէկ տեսակ պատիժ չ'էր կարանում նրան զսպել, երբոր նա սղում էր քաղցր բան ուտել. նրա ձեռքից պարտեղի դուռը էնքան ժամանակ կողպած էր լինում, մինչև որ պառզիները բոլորը հաւաքէին. էնգուր համար որ նա ամէն ձեռքը ընկածը քաղում էր, թէ և խակ լինէին: Եւսակ խնձորները, տանձերը կծում էր և յետոյ դէն էր գցում. և էնքան մնաս էր տալի պարտեղին, ինչքան որդուները: Եւ մեծ հընարբով թարսուն մտնում էր կաթը պահելու տեղը, և սե-

բը ուտում էր: Աստուծոյ կարծում էին, թէ էդ բանը կա-  
տան է անում և հնդուր համար դուրս դնելին կատարին:  
բայց շատով խնայոն, թէ Մազգազէնէն է դանում կաթի  
տան բանալիքը: Արեւին զարմանալի չէ, որ ճնողը չ'էին  
հաստատում նրան և ամէն բանը կողորում էին նրանից:  
Մէկ օր նա դիմիի համն էլ անաւ, որ հայրը կողորած  
պահում էր պահարանումը, բայց հարբեցաւ և շատ սաս-  
տիկ հիւանդացաւ:

Մէկ օր նա մէնակ նստած էր տանը (էնպէս ժամանակը  
նա ստիտարար բանեցնում էր իրա ուտելու համար). վար-  
ձից, թէ ո՞ր պահարանն է բաց կամ ո՞ր տեղ են պահած  
բանալիքը: Գանկարծ տեսաւ, որ պահարանի գլխին դրած է  
մէկ աման. խնայն ուզեց աննել, թէ ինչ կայ էն ամա-  
նի մէջ ուտելու: Աս դրեց սեղանը պահարանի մօտ, բայց  
որովհետեւ էլի ցածր էր, անդանի վրա էլ դրեց աթոռ, և  
բարձրացաւ վեր առաւ սմանը: Վանի մէջ մէկ ստիտակ  
բան կար մանր շաքարի նման. նա մատով համը վարձից,  
տեսաւ որ քաղցր է, և սխաւ տղաչաւ թիւնով ուտել:

Գանկարծ մայրը մտաւ տուն: Մազգազէնէն էնպէս  
վարեցաւ, որ տարերը դողցին և քիչ մնաց որ պէտք էր  
վեր բնիկէր սթաղից: Բայց մօր վախը աւելի ստատիկ իլաւ,  
երբոր տեսաւ, թէ Մազգազէնէն ուտում էր մահադեղը,  
որ դրած էր ճանձերի համար: — ,, Տարաբնիտ աղձիկ,  
էդ ի՞նչ ես անում, գոչեց մայրը: ,, Իսկոյն ներքե տաւ  
աղձիկան, ծառային սեղարկեց բժշկին կանչելու, և նրան  
տաւեց կաթը խմելու, որ սիրար խառնի և վեր սծի, և  
ամէն հնարքը գործ սծեց, որ ազատի նրան մահուան ասն-  
ջանից: Ետ չ'անցաւ Մազգազէնէն սկաւ զգալ ստատիկ  
վարացաւ և հնպէս դողաց, որ բարբ դրոշխը լսեցին: Բը-  
ժիշկը եկաւ, հրամայեց աւելի կաթը խմեցնել և արիշ  
դեղ էլ տուաւ. բայց երևի թէ Մազգազէնէն շատ էր  
կերել մահադեղից. հնդուր համար որ թիւրիս կենդանի  
մնաց, բայց խելքը գլխից թաւաւ և բարբ անգամները դո-  
ղում էին: Բճա՛ւ էնպէս Մազգազէնէն քաղցրեղէն սիւնը  
համոքիւ թէ անձնատղան տղաւ նրան: Այլ որ առանց մը-  
տածելու չար ստիտար թիւններին կըհետեի, էն ստիտար



Թխենները նրան կըհասցնեն չար վտխարներ:

Լ. Բարձրագոյնի քանիչը լաւ էն է:

Փարբիկ Գալուստը ուրախանում էր երբ որ անջում էր անասուններին: Այս կարծում էր, թէ իրաւունք ունի էն պէս բանով ուրախանալ, երբ որ իրան պատահում էր մէկ անասուն և 'ի հօրիկէ երբ որ անասունը իրանից պակաս ուժ ունէր: Բռանց միտք անելու, թէ անասունն էլ մեզ նման զգում է ցաւ, նա շատ անգամ էնքան անխնայ անջում էր նրանց, որպէս թէ նրանք նրա մեծ թշնամիներն էին, թէ և նրանք ոչինչ փաստ չէին անում նրան:

Այս բանում էր բղբներին, թերով կայում էր ոտքից մէկ վայտի վրա և էնքան պտոյտ էր տալի, մինչև որ դորմելէքը բոլորովն ուժից ընկնում էին: Բնակող դորտներին, որ փոքր ինչ հարկաւոր էլ են մեզ, նա բւեւում էր (միտով ծախում էր) և էնքան ուրախանում էր նրանց անանջաբով, մինչև որ նրանք երկար և գառն տանջաբով մեռնում էին:

Բնակից աւելի նա իրա հնարքները բանեցնում էր ասնջելով փոքրիկ շանը, որ իրան ընծայել էր իրա հօր եղբայրը: Բայր որը քաշելով ման էր ածում նրան, և որիչներին ցոյց տալու համար, թէ նա էս շան տէրն է, ծեծում էր նրան, ոտքով խիւււմ էր և ականջներից քաշում էր էնքան, մինչև որ օտար մարդիք էլ յանդիմանում էին նրան հասուր համար: Չի հեծնելու ժամանակը, էնքան քշում էր, որ ձիերը աստակում էին և ծառաների հետ էնքան վատ էր վարում, որ մէկ քանի լու ծառաներ չուղեցին նրա մօտ կենալ, և դուրս գնացին նրա հօր անից: Բայց ծնողքը ներում էին նրան էս բաները կնդուր համար, որ նա միակ որդի էր: Այլ զայնպէս երբ որ նա մեծացաւ և սկսաւ ինքը կառավարել իրա դործերը, ամէնքը կարծեցին, թէ նա աւելի խելօք կրվարուի, բայց նա շարունակում էր առաջուպ պէս, կնդուր համար որ ասած է' ինչպէս օրօրացումը կրլինի, կնպէս էլ գերեզմանումը: Բնակիցի հետ անդադար կոււում էր էնքան, մինչև որ միշտ հա-

տուցանում էր էն վնասները, որ արել էր ուրիշներին, և բոլոր իրա կեանքը անցուց անհանգստութիւնի մէջ:

Բարեսիրտ մարդը պարմած կրկին իրա անասունին էլ, իսկ անողորմ մարդու սիրտը սչարի համար չի ցուել. և առակ է ասած՝ չար մարդը ճանձով կըսկսի, մարդով կըվերջացնի:

Լա. Անդգուշութիւն:

Ո՛վ որ ճանաչում էր Սոփիային ամէնքը նրան անուանում էին անպէտք և քեղեմամբ: Ազգայի անունը պատուաւոր անուն է, թէ չէ: Երբ որ կրկարգար էս փոքրիկ պտմութիւնը, ինքներդ կարող էք ասել, թէ արժանի՞ էր նա էս անունին, թէ չէ:

Մեկ օր նսած էր նա սեղանի առաջին և դուռ էր օրինակից, որ ուսուցիչը տուել էր նրան տանը դրելու համար: Յանկարծ նա լսեց որ մէկ մարդ ձիով եկաւ և կանգնեցաւ դրացիի տան մօտ: Սոփիան չըկարաց համբերել հետաքրքրութիւնից, իսկոյն վազեց և էս շտապելու ժամանակը վեր դցեց թանաքսմանը և աթոսը: Դասուարք թափւեցաւ սեղանի վրա, յետոյ գեանի վրա: Սոփիան շատ վախեցաւ, երբ որ տեսաւ թէ ինչ արու իրա անդգուշութիւնով: Հիմի ի՞նչ պէտք է անի, որ ծնողքը չըտեսնեն: Իսկոյն վեր առաւ նա առաջին ձեռքը բնիած աղուխը և սկսաւ թանաքը սրբել, բայց միտք չ'արաւ առաջ մտիկ տալ, թէ ինչ աղուխ է: Ետոյ տեսաւ թէ էն իրա հօր վրէ աղուխն է: Առաջ նա վսխեցաւ, այժմ՝ աւելի ևս: Այս պատահեցաւ առաջի անգամը, և նա ուրիշ ճար չը գտաւ, բայց եթէ ճշմարիտը ասաց իրա մօրը և նրան ուրիշ ոչինչ չ'արին, բայց միայն յանդիմանեցին: Սոփիան խոստացաւ միւսանգամ զգոյշ կենալ, բայց միւս օրը կրկին փորձանք պատահեցաւ: Երբ որ մայրը ճաշ էր պատրաստում, հրամայեց նրան, որ վեր տանի վաւարանի վրայից փոքրիկ կաթոն (ղաղանը), սրի մէջ ջուր կար, ջուրը թափի և կաթոնն իրան տայ: Սոփիան դնաց, բայց փոխանակ վեր աւանելու ջրով կաթոնն, նա վեր աւաւ էն կաթ-



սան, որի մէջ կար հաւարած կերակուրի իւղ, և պատու-  
հանից թափեց: Եւ ժամանակը պատուհանի մօտից անց  
էր կենում մէկ լաւ հագնուած կին և էս եփած իւղը  
թափուեցաւ նրա գլխին և բոլոր շրթերը ապականեց: Աինք  
եկաւ Սոփիայի մօր մօտ յանդիմանելով և նախատելով  
պահանջեց իրա շրթերի գինը: Եւ անգամը Սոփիային սա-  
տիկ պատճեցին: Ի՞նչ կարող էր նա ասել իրան արդա-  
բացեալու համար և ինչով կարող էր ազատուիլ: Ատաս-  
տացաւ աւելի զգոյշ լինել և ինչ որ անում է, առաջ լաւ  
մտածել: Մէկ շաբաթ անցկացաւ, նա մէկ հարկաւոր բան  
էր շինում, բայց ժամանակը քիչ էր մնացել: Արմեցաւ  
շուտով վազել խահանցից ստան, բայց լաւ չընկատեց դեա-  
նի վրա դրած ամանը, որ ինքը լեցրել էր ջրով և դրել  
էր, սօքը խփեց նրան, վեր ընկաւ և բերանը խրվելով ա-  
մանին երկու ատամը կտորեց: Ո՞վ էր մեղաւոր էս բանումը:  
Ատ լաց էր լինում և գանգատ էր անում իրա անզգու-  
շութիւնից, որովհետեւ էս երկու կտորած ատամները շա-  
տոգեղացրին նրա կերպարանքը: Այժմ երևում էր, թէ էս  
ատորաբախտութիւնից յետոյ նա կըխրատուի և յիրաւի նա  
մէկ քանի շաբաթ զգոյշ էր, բայց յետոյ սկսաւ կրկին մո-  
ռանալ: Մէկ օր նա օգնում էր իրա մօրը շրթերին ութոյ  
քսելով: Ատ դրաւ արթուիկի (ութոյի) մէջ տաքացրած եր-  
կաթը և կամեցաւ դնել ափսէի վրա: Մայրը նստած էր  
նոյն սեղանի մօտ և զրկած ունէր իրա սասն ամսական ար-  
զին: Արեխան խաղում էր ձեռքով սեղանի վրա և էն բո-  
պէին ձեռքը դրել էր ափսէի վրա: Անդգոյշ Սոփիան ա-  
ռանց մտիկ անելու դրաւ տաքցրած երկաթը երեխայի ձեռ-  
քի վրա: Արեխան աղէոգորմ գոչելով սկսաւ լաց լինել,  
խփ Սոփիան վախից մնաց անխելքի պէս: Արեխայի բոլոր  
ձեռքը այրուեցաւ և ողորմելին տանջում էր անտանելի ցա-  
ւով: Սոփիան էնքան լաց չէր լինում նախատանքից և պատ-  
ժից, որքան սրտի նեղանալուց, ատենելով թէ ի՞նչ տարա-  
բախտութիւնի պատճառ դառաւ: Եւ օրից յետոյ սկսաւ բո-  
գոյշ լինել և թէպէտ չըկարաց խփոյն իրան ուղղել, բայց միշտ  
մաքին պահելով և շարունակ հետեւելով, փոքր փոքր սո-  
վորութիւն շինեց իրա համար զգուշութիւնը և վերջապէս

բողոքովին ազգութեցաւ :

ԼԷ. Սարգսի լեզու :

Շարիփովին շատ լաւ աղջիկ կրէինէր , եթէ մէկ մեծ պակասութիւն չ'ունենար , որ նրան պատճառում էր շատ նեղութիւն և ամօթ : Իս պակասութիւնն էր — լեզու խառնելը (խառնարարութիւնը) : Սա ոչինչ չ'էր կարանում ծածակ պահել . ինչ որ լում էր կամ իմանում էր ուրիշ ներքեց , իսկոյն պատմում էր և երբէք չ'էր կարանում լուսկենալ : Ինչ որ դրացիների տանը պատահում էր , նա բոլորը գիտէր , կնդուր որ միշտ նստած էր պատահանի մօտ կամ գրան մօտ , և ինչպէս որ տեսնում էր մէկ ծանօթ մարդ , էն սհաթին սկսում էր պատմել ամէն լսածը կամ դրացիների վրա կամ իրա ծնողաց վրա կամ առ հասարակ տանեցիքի վրա : Ինչ որ ուսումնարանումը պատահում էր նա բոլորը պատմում էր , և եթէ աշակերտների մէկին պատժում էին , նա ամէն պատահող մարդու պատմում էր և պատմելու ժամանակը կնքան աւելացնում էր , որ սրած գործը միշտ երևում էր շատ մեծ : Իս վատ լեզուի համար ամէն ընկերները նրան չ'էին սիրում , և միայն իրա նրամանները նրա հետ ընկերութիւն էին անում : Իս տեսնելով նա շատ նեղանում էր , բայց չ'էր հեռուում էս վատ սովորութիւնը թողնել : Իս որ նա մեծացաւ , պէտք իլաւ որ դնայ ուրիշների տուն ծառայելու , կնդուր համար , որ նրա ծնողքը շատ աղքատ էին : Մշտն օրերը նրա ծառայութիւնից շատ բաւական էին լինում , կնդուր համար , որ նա շատ ինտակ էր և աշխատասէր . բայց շուտով իրա չար լեզուով բոլորին կռեցնում էր և վերջապէս կնքան զրկեցնում էր , որ նրան դուրս էին գձում : Իսպէս էր լեւում նրան ամէն տեղ , ուր նա ծառայում էր և վերջապէս կնքան վատ անուն ստացաւ , որ էլ ծառայելու տեղ չ'ըզաւաւ : Իս պատճառով նա էլ չ'ընտրաց իրա քաղաքումը մնալ և գնաց ուրիշ քաղաք . բայց որովհետե կնտեղ էլ իրա սովորութիւնը չ'ըմտաւ , կնդուր համար հասաւ էն դառն վիճակին , որ իրա օրտկան հացը հագնե դանում



էր դառն մշակութիւնով :

ը. I — խօսք սփռած է խորի խամային :

Այն օր աշակերանները ուսու մտարանումը լաւ չ'էին պատ-  
րասեւ իրանց դասերը և ուսուցիչը պատասից նրանց էս անց-  
քը, որ պատահել է Մարտիանի մօտ մէկ քաղաքումը :

Այն երիտասարդ (Ջահել) գիւղացի անունը Մարտիան  
էր լաւ որդի փառ հօր, և դեռ ևս իրա հօր կենդանութիւնի  
մասնաճակը յանձն առաւ վարել և ցանել իրանց անասն  
թողած արօք, որ կարանայ իրա ձերացած մօրը պահել :  
Որդիական սէրը հարկապից նրան էս ծանր բանը յանձն  
առնել, էնդօր համար, որ նրա հայրը պարտքեր շատ էր  
թողել : Տրամաթիւնով վեր էր կենում Մարտիանը առա-  
ւօտները և հոգսերով պապում էր երեկոները : Թեպէտ  
դրացին ինչպիսիք նրան խօսք տուաւ օգնել նրան երկիրը  
վարելու, բայց սով կրտար խեղճ Մարտիանի փող, որ սեր-  
մեր առնի ցանելու համար : Աս շատ բաներ միտք արաւ :  
Փող խնդրել նա չ'էր ուզում, էնդօր համար, որ սր տե-  
ղաց կարող էր նա հատուցանել, երբ որ առանց էն էլ  
նրա պարտքերը շատ էին : Յանկարծ նրա միտքը բնկաւ մէկ  
բան : Աս մտածեց, թէ կարելի է դաշտի միտն մօտ գանի  
պահած ցորեն : Ախաւ միտքել և իրա բախտից գտաւ մէկ  
բուն, որի մէջ էնքան ցորեն կար, որքան իրան պէտք էր :  
Յորենները ամբողջ էին և շատ յարմար ցանելու համար :  
Ինչպէ՞ Մարտիանը մէկ ծանր հոգսից ազատուեցաւ : ուրախ  
զնայ յայտնեց իրա դրացին, թէ գաւել է ցորեն և նա  
խոստացաւ օգնել նրան ցանելումը : Այն օրը զնայ նա  
իրա արօք և լաց լինելով սկսաւ ցանել, որովհետեւ նրա  
միտքը դեռ շատ դառն էր : Աս մտածում էր, թէ ի՞նչ  
կրկնի իրան, իրա ձերացած մօրը, իրա քուրիքին և եղբոր-  
ներին, եթէ էս ցորենը դուրս չբայ : կարելի է աւելի լաւ  
կրկնել, եթէ նա ծառայէր ուրիշ մարդկանց մօտ, քան թէ  
արտ ունենար և էքրան պարտք : Բայց յանկարծ նա ու-  
րախացաւ և սփի եկաւ : միտքը բերեց էն ուրախարար ու-  
տանաւորը, որ մտնկութիւնի մասնաճակը ոտքիւ էր, ուրիշ

արտասանելով յանի, արտասանելով իր հոգին, : Դա ոտանաւորը նա  
 համեմատեց իրա կեանքի հետ : Դա մտածելով նա զգաց  
 մէկ մեծ ուրախութիւն և ինքն իրան ասաց՝ իմ արտա-  
 թիւնի արտասանքներս էլ, և թէ Լ'ստուած կամենայ, ու-  
 ռախութիւնի արտասանք կը գտանան, երբ որ հնձելու ժա-  
 մանակը կը գոյ : Ես յոյս կ'ունենամ լաւ վիճակի և ինչ  
 որ ձեռքիցս կը գոյ կ'աշխատեմ առանց վատութիւնի : Լ'մէն  
 օր նա միտք էր անում էս ոտանաւորի վրա և միթիթարում  
 էր : Լ'ստուած յաջողեց. նրա հոգն թաւա իլաւ և շու-  
 տով նրա գործերը հնդկս լաւացան, որ կարաց մէկ ձի առ-  
 նել : Դն ձիւն օգնութիւնով նա վարում էր իրա արտը,  
 իսկ ձմեռը նրա վրա բեռներ էր կրում ուրիշների համար  
 և վարձ էր ստանում : Դս ձին նրան կնքան օգուտ էր տա-  
 լի, որ նա շուտով կարաց մէկ ուրիշ ձի էլ գնել, և քիչ  
 ժամանակից երբոր ձի էլ. բոլոր պարտքերը հատոյց և ե-  
 րեք չորս տարումը պարտքերը վճարեց և իրա համար միտ  
 հաւաքեց : Երկար ժամանակ ապրեց Լ'ստուածը հանգարտ  
 և հարուստ, և ծերութիւնի ժամանակը իրա քաշած նեղու-  
 թիւնների վրա խօսելուց միշտ կրկնում էր՝ , ո՛վ որ արտա-  
 սանելով իր յանի, արտասանելով իր հոգին, :

ԼԷ. Փորձա-Նիւն :

Մէկ արհեստաւորի որդի, անունը Ստեփան, էր առողջ  
 և տասնը չորս տարեկան ժամանակը ունէր կատարեալ մար-  
 դու հասակ : Նրա երկու եղբայրները քարաաշ էին, և Ստե-  
 փանն էլ կամեցաւ նրանց արհեստը սովորել, և կնդուր  
 համար նրան էլ ծնողքը ուղարկում էին նրանց հետ ըս-  
 նելու : Դասեղ անգաղար տեսնում էր նա անհանգիստ և  
 կոպիտ մարդկերանց, որ անգաղար կուսում էին և ծեծ-  
 ւում. և եթէ կարճ ժամանակի հաշուում էին, սկսում  
 էին երգել զանազան վատ երգեր. բայց յայնմանէ օղին  
 (էրաղը) միշտ դրած էր նրանց առաջը սեղանի վրա : Փոքր  
 ժամանակից յետոյ սկսան նրանք Ստեփանին էլ հարկա-  
 զրել, որ նրանց հետ խմի : Նա առաջ չը կամեցաւ խմել,  
 կնդուր համար, որ մէկ անգամ համը անտաւ և բոլորովին



ուշաթափուեցաւ . բայց ընկերները ծիծաղում էին նրա վրա ,  
և նրանցից մէկը ստայ՝ լսիր , հղբոյր . և թէ ուզում ես լաւ  
քարտաշ լինել , պէտք է սովորես երազ խմել : ( Ռոյնչ էք  
կարծում . Ճշմարիտ էր ասում : ) Արտիճեաւ էս բանը շատ  
անգամ կրկնում էին նրան , վերջը հասացրին էն աստիճաւ  
նին , որ Ստեփանը սկսաւ երազ խմել . թէպէտ առաջ  
չէր հաւանում , բայց փոքր ժամանակումը նա էլ էնպէս  
էր խմում , ինչպէս իրա ընկերները : ( Ա՛ւր բան էր էս : )  
Ստեփանը նկատեց , որ ուրիշ քարտաշներէ բերանումը ծխե-  
ղէգն ( չիրուխ ) կայ . վասն որոյ կարծեց , թէ ծխախոտ ( թիւ-  
թիւն ) ծխելն էլ լաւ քարտաշ լինելու համար անպատճառ  
պէտք է : Ինչուր համար շուտով ճարեց իրա համար ծը-  
խեղէգն . բայց առաջ շատ տանջուեցաւ մինչև որ սովորե-  
ցաւ առանց դժուարութիւնի քաշել : Շատ անգամ էն-  
պէս սիրտը խառնում էր և զլւում էր , որ մտքումը դնում  
էր միւսանգամ չըքաշել . բայց ընկերները էնքան ծաղր էին  
անում նրան , որ նա կրկին սկսում էր և վերջապէս սովո-  
րեցաւ ծխախոտ քաշել : Այժմ Ստեփանը իրան համարում  
էր կատարեալ չափահասակ մարդ , էնուր համար , որ կա-  
րանում էր ամէն բանը անել , ինչ որ ուրիշները անում էին :  
Բայց փոքր ժամանակից յետոյ սկսաւ հասկանալ , թէ առ-  
ողջ չէ . երեսի զուարթ կարմիր գոյնը թուաւ , ինքը լղարեցաւ ,  
ծուլացաւ և միշտ անբաւական էր . ախորժակը ( իշտահը ) կա-  
պուեցաւ , ստամոքսը շատ անգամ չէր կարողանում մարտէլ  
կերած կերակուրը , որ առաջ նրան ոչինչ վնաս չէր տալի .  
երբեմն զլուխն էր ցաւում , երբեմն փորը . շատ անգամ դո-  
ղում էին նրա ձեռքերը և սուքերը : ( Ռոյնչ էին պատահում  
Ստեփանին էս ախորժութիւնները : ) Մէկ քանի անխելք մար-  
դիկ խորհուրդ էին տալի նրա ծնողացը , որ երբեմն նրան փոքր  
էրազ տան խմելու : ( Այս խորհուրդը ինչո՞ւ լաւ չէր ) : Մտանք  
կարծում էին , թէ եդ հնարքով նա կ'առողջանայ , բայց ա-  
ւելի թուլացրին , և Ստեփանը ցանկանում էր մտանալ էս  
կարձ՝ ժամանակումը անցկոյրած կեանքը : ( Օտրմանալի՞ է  
որ Ստեփանը երբէք կատարեալ առողջութիւն չի ունենալ : )  
Բայց էս դեռ ևս չէր բաւական , որ կարձամիտ Ստեփանը  
հասնի յետին անառուկութիւնի : Մէկ կերակի որ , երբոր

պարսպու թիւնից չ'էր իմանում թէ ի՞նչպէս անցկացնի իրա ժամանակը, ակաւ որ իրա ընկերներէից մէկ քանխոր գնում են պանդոկ, որտեղ էն ժամանակը սաղ էին ամում : Ստեփանը կարծեց, թէ հետեղ զուարճարի կըլինի և գնաց : Արա ընկերներէից մէկ քանխոր նստած էին մէկ ցածր և մութ տանը և սաստիկ խմում էին. և որովհետեւ խմելու հետ միասին ծխախոտ (չիբուխ) էլ էին քաշում, վասնորոյ բոլոր տունը լքցրած էր ծխով : Այն ժամանակից յետոյ մէկը առաջարկեց թուղթ խաղալ, ամէնքը ուրախու թիւնով համաձայնեցան և Ստեփանին էլ հրաւիրեցին, որ ոչինչ չ'էր հասկանում խաղալովը . հնդուր համար մէկը յանձն առաւ իլաւ սովորացնել, և Ստեփանը մինչև երեկոյ լաւ սովորեցաւ խաղալը : Մէս կիրակի նա էլի գնաց նոյն պանդոկը և ակաւ, որ թուղթ էին խաղում փողով : Աստեօթ համարեց չըխաղալը, մանաւանդ, որ առաջի խաղալովը տարեւ էր : Այս անգամին էլ տարաւ Ստեփանը և շատ սիրեց խաղը . բայց միշտ հնալէս բախտաւոր չ'էր, ինչպէս ասածի խաղումը . շատ անգամ նա տանուլ էր տալի մէկ արտի, երկու արտի, որ պահած էր ունենում իրա ուտելիքի համար, և էս պատճառով բոլոր օրը քաղցած էր մընում : Ահա հարկէ էս բանը նրան ակործ չ'էր, բայց նա չ'էր կարողանում թողնել խաղը, հնդուր համար, որ թէպէտ քանիցս անգամ ինքն իրեն ասում էր՝ էլ չ'եմ գնալ պանդոկը և չ'եմ խաղալ, բայց եթէ դալիս էր ընկերներէից մէկը և առաջարկում էր, նա էն սհաթին գնում էր : Այսպէս անհալով, թէ տանուլ տուածը յետ կըտանի՝ նա գնում էր պանդոկ խաղալու . բայց ի՞նչ արամու թիւնով էր վերադառնում իրա տուն, երբ որ կրկին տանուլ էր տալի կամ ոչինչ չ'էր տանում : Այսպէս խաղալը մէկ օր զցեց նընդան հնալիս փողի կարիքի մէջ, որ չ'էր իմանում թէ ինչ անի փող ճարելու համար, և էն ժամանակը նրա միտքը բնկաւ զարհուրելի գործ, իմ, մէկ բան գողանալ էն անից, որ տեղ նա բանում էր : Աս գողացաւ մէկ չուխոյ (մահուդ) կապոյ և արծաթի գդալ . բայց իրա խղճտանը շատ տանջում էր իրան : Ո՛հ . . . լաւ կըլինէր որ նա քաղցած մընար կամ ողորմութիւն խնդրէր, քան թէ էս բանս անէր :



Երբ որ նա կամեցաւ Էն դժար ծախել . նրան կարծիք տանելով բռնեցին, գողութիւնը յայտնուեցաւ և նա երկար ժամանակ մնաց բանտումը : Եւ բանը շատ կոտրեց նրա բնութիւնը . Էն օրից յետ նա երբէք բոլոր սրտով չ'էր ուրախանում և երբէք չընտրաց իրա վիճակը լաւացնել : Տեսէք, թէ ի՞նչ տեղ է հասացնում խմբիք և խաղ սիրելը , որոնց համար ասում են , թէ ուրախացնող են և զուարճացնող :

ԼԵ . Լ՛նչնորհակալ աշակերտ

Թէպէտ Լ՛նտօնի ծնողքը տուել էին նրան ուսումնարան , բայց չ'էին մտիկ անում , թէ նա միշտ գնում է , թէ չէ : Եւ շատ անգամ ոչ էր գնում , և երբեմն բողբոջին չ'էր գնում ուսումնարան . Եւ թէ վարժապետը հարցնում էր . թէ մըր էր , պատասխան էր ստանում , թէ հայրը ուղարկել էր Լ՛նտօնին իրա կրօնի ( գլխաւոր ) , կամ թէ Լ՛նտօնը հիւանդ էր , կամ թէ Լ՛նտօնը էսօր շատ հարկաւոր բան ունէր տանը : Ի հարկէ վարժապետը շատ անբաւական էր , որովհետեւ ի՞նչպէս կարելի էր յոյս ունենալ , թէ Լ՛նտօնը յառաջագիմութիւն ցոյց կըտայ , երբ որ նա Էնքան անգամ չ'էր գնում ուսումնարան . Բայց վարժապետը աւելի բարկանում էր , մէկ էն պատճառի՝ որ Լ՛նտօնը բոլորովին ոչինչ էր համարում ուսումը , երկրորդ՝ որ նա առանց ստիպելու չ'էր սովորում . և երրորդ՝ որ նա չ'էր սիրում ուսումը , մանաւանդ երբ որ քիչ սովորեցաւ կարգալ և գրել . որովհետեւ էս տղան Էնքան յիմար էր , որ կարծում էր , թէ մեծ լաւութիւն է անում վարժապետին , երբ որ աշխատասէր է լինում . իսկի չ'էր մտածում , թէ էն իրա յատուկ պարտաւորութիւնն է և ուսումը իրա օգուտն է : Եւ պատճառով նա մտա անց կացրուց իրա չորս տարին , որ ուսումնարան էր գնում , և շատ քիչ բան սովորեցաւ :

Մէկ օր Լ՛նտօնը եկաւ ուսումնարան և յայտնեց վարժապետին , թէ էլ չի գալ : Վարժապետը զարմացաւ և հարցրուց՝ մի թէ քո հայրը քեզ ուրիշ ուսումնարան է տալի : Եւ պատասխան տուաւ Լ՛նտօնը , ես էլ չեմ կարգալու :

ես տանը պէտք եմ : Հատ զարմանում եմ , ասաց վարժապետը . թէպէտ դու չորս տարի է որ դպիտ ես ուսումնարան , բայց էդ ժամանակումը մէկ շաբաթ չի անցել , որ երեք կամ չորս օր յետ չըմնայիր , և ինքդ էլ աւելի աշխատասէր չ'էիր : — Հայրս սուում է , թէ ես բաւական դիտեմ , և նա ինչն էլ մինչև 14 տարին է գնացել ուսումնարան . այժմ ուզում է ինձ տալ մէկ արհեստ սովորելու , որ ինքս ինձ համար հաց գտնեմ : — Ղու ի՞նչ ես կարծում , ասաց վարժապետը . միթէ լաւ արհեստաւորը կ'ուզե՞ր վեր առնել հնախի աշակերտին , որ լաւ չըդիտէ կարգալ , գրել և թուարանութիւն : Այլ դու ինքդ էլ ի՞նչ կ'անես , երբ որ կը դառնաս արհեստաւոր , և քեզ պէտք կը լինի գրել քս հաշիւը կամ ուրիշ բան : — Միտօնը ուրիշ բան չըկարոց պատասխան տալ , բայց միայն , թէ հայրը հրամայել է , որ էլ չըգնայ ուսումնարան :

Վարժապետի ասածները ճշմարիտ էին , բայց չըկարացին փոխել Միտօնի հօր կամօքը : Միտօնը ճարում էր շատ սակաւ հաց իրա արհեստից . խկ եթէ նա մանկութիւնի ժամանակը լաւ ուսում առնէր , ամէն բանը աւելով կ'ունենար : — Այսպէս Միտօնը թողեց ուսումնարանը , քի , էլ չ'իկաւ և իրա վարժապետներից շնորհակալ չ'իլաւ նրանց աշխատանքի և ուսում տալու համար : — Հաւանում էք դուք էս գործը : Ղուք էլ Միտօնի պէս անխելք և անշնորհակալ պէտք է դուրս գաք մէկ օր ուսումնարանից :

ԼԳ. Սապ ամօթ :

Այսպէս մարդիք կան , որք վայելուչ և լաւ բան անելուց ամաչում են , բայց անվայելուչ և վատ բան անելուց չ'են ամաչում , և երբեմն պարծենում էլ են , թէ հնապէս բան են արել , որ արգելած է կամ ամօթ է : Այսպէս բնութիւն ունէր Փիլիպը , որ մէկ վաճառականի որդի էր : Աս երբէք չ'էր ամաչում փողոցներումը անքաղաքավարութիւն անել , դառալ , չարութիւն անել և ընկերների հետ ծեծուիլ . նա չ'էր ամաչում յիշոց տալ և վատ խօսքեր ասել , և պարծենում էր , թէ մէկ օր իրա ընկերներից մէկին ,



որ չէր ուզում նրան ճանապարհ տալ, սաստիկ ծեծեց և վեր գցեց: (Մե՞ թէ հոպիսի գործերը գովելն գործեր են:) Մէկ օր նա համարձակուեցաւ անհնազանդ լինիլ իրա վարժապետին: Հայրը իմացաւ էս բոնը, էնդուր համար որ նա ամէն տեղ պարծենում էր, թէ վարժապետին անկարգ խօսքեր ասացի, կարծելով, թէ վարժապետի խօսքը չը լսելով նա շատ լաւ բան է արել: Հայրը հրամայեց, որ նա վարժապետից ներողութիւն խնդրի և խստամոյց միւսանդամ չ'անել, բայց նա չ'էր կամենում: Նա ամաչում էր իրա վատ գործը ուղղել և կարծում էր, թէ շատ ամօթ բան է ներողութիւն խնդրելը, և աւելի լաւ էր համարում ամէն տեսակ պատիժ ստանալ, քան թէ ներողութիւն խնդրել: (Հաւանում էք էս գործը Փիլիպի: Կարծում էք, թէ պէտք է նրան նմանիլ: ) Ինչ և իցէ վերջը հարկադրեցին Փիլիպին ներողութիւն խնդրել: Բայց նա էնպէս ակամայ խնդրեց, որ կարծես թէ ամօթ բան էր զղջալով իրա պակասութիւնը ուղղել: (Պօք ի՞նչ կ'անէիք եթէ նրա տեղը լինէիք:) Փիլիպի եղբայր Կորապետը, թէպէտ նրանից լաւ վարք ունէր, բայց երբեմն նա էլ ամաչում էր էնպիսի բաներից, որից երբէք ամաչել պէտք չէ: Մէկ օր նրան հրամայեցին սերտել մէկ վտորիկ գեղեցիկ պատմութիւն, դուրս գալ ընկերների առաջ և պատմել նրանց, էնդուր համար որ նա գիտէր ոչ միայն պարզ կարգաւ, այլ և լաւ արտաբերութիւնով ասել: Բայց Կորապետը ամաչեց, և առաջ չ'էր ուզում դուրս գալ աշակերտների առաջ, թէպէտ և միշտ հնազանդ էր վարժապետին: Երկար ժամանակ պէտք իրաւ նրան խրատել և յորդորել, և վերջապէս վարժապետը շատ բարկացաւ, մինչև որ կարաց նրան ասել տալ պատմութիւնը: Բայց ասելու ժամանակն էլ Կորապետը գլուխը կռացրել էր և էնպէս ծանր էր ասում և անկարգ, որ վարժապետը շատ անբաւական մտաց նրանից: Հիմի պէտք էր նա ամաչէր, որովհետեւ իրա գործը լաւ չը կատարեց, իսկ առաջ ի՞նչ կար ամաչելու:



ԼԵ. Մ. դէքանդէ Կանոն:

Եւրբ որ Մ. դէքանդըրը լաւմ էր ալքերի կամ սրիշ տեսիլքների պատմութիւն, բոլոր գիշերը չէր քնում, որովհետեւ շատ վախկոտ էր. և թէպէտ ծնողքը և վարժապետները նրան հասկացնում էին, թէ ինչքան յիմար բան է ալքերից վախենալը, բայց նա չէր կարողանում սրտից հանել վախը: Եւրբ որ մեծացաւ, նրան տուին աշակերտ մէկ հիւանի (գիւրգարի) մօտ, որ հրամայեց նրան քնել վերնատանը նրա երկու սրբուց հետ: Եւ աղերքը խնդոյն հասկացան, թէ Մ. դէքանդըրը վախենում է ալքերից և մէկ օր խօսք կապեցին իրանց մէջ նրան խաղ առնել (օյն գալ): Եւ գիտաւորութիւնով նրանցից մէկը երեկոյին ասաց, թէ դադրած է և ուզում է վաղ քնել. բայց իրա եղբօր հետ խօսել էր, որ կ'երթայ Թախ կրկենայ Մ. դէքանդրի անկողնակալի (կարավաաի) տակը, և երբ Մ. դէքանդըրը կրգոյ կրպոսկի, նա առաջ շղթաներ կըշարժի և յետոյ վրէն կըծածկի սպիտակ կտաւ, յանկարծ դուրս կրգայ և կ'երթայ նրա անկողնակալի մօտ: Իսկ եղբայրը պէտք էր սենեակի դուռը կողպէր, որ Մ. դէքանդըրը չընտելի: (Ի՞նչ էք կարծում էս խորհուրդի համար): Ինչպէս որ խօսած էին, էնպէս կատարուեցաւ. և վախկոտ Մ. դէքանդըրը շղթաների ձայնից էնպէս վախեցաւ, որ սառը քրտինքը ծածկեց բոլոր մարմինը. նա սկսաւ գոռալ, բայց պատասխան չըկար: Եւ ժամանակը նրա վախը հասաւ յետին աստիճանը. նա վերկացաւ տեղերից և կամեցաւ վախչել, բայց սպիտակ տնսիւրը եկաւ կանգնեց առաջին և ձեռքիցը բռնեց: Մ. դէքանդըրը լեզուն կապուած և խելքը կորած առանց ձայն հանելու վեր ընկաւ դեմնի վրա: Սերջապէս անկարգ տղերքը սեսան, թէ ինչ են արել իրանց յիմար հանակոյիլը և հեռուում էին հաւատացնել Մ. դէքանդրին, թէ նա խաբուած է. բայց ժամանակը անցել էր: Մ. դէքանդըրը պառկած էր նրանց առաջին անշունչ: Յուսահատուած սկսան նրանք օգնութիւն կանչել իրանց ծնողացը, որք վաղելով եկան և շատ դժուարութիւնով ուշաթափ Մ. դէքանդրին կարացան շունչի բերել. բայց նա շուտ խելքի չ'եկաւ. վախից ընկաւ



ողորմելին սաստիկ ջերմի մէջ : Երկու տղերքը շատ փոշխման էին իրանց արածից , որովհետեւ չէին կարծում , թէ էդ պէս վատ կրվել ջանայ : Հայրը սաստիկ պատժեց նրանց և ամենայն հնարքը բանեցրուց , որ Բլէքսանդրին թողնուլ տայ իրա առանց պատճառի վախը :

Ը. ՂԶմարտուկեանը ունէր Բանից լաւ է :

Սահակը տասներկու տարեկան էր , երբ որ նրա հայրը վախճանեցաւ : Ոչ ոք չըմտաց , որ նրա համար հոգս անէր , որովհետեւ հիւանդ մայրը չէր կարողանում իրա ձեռքի աշխատանքով նրան պահել : Եւրդուր համար Սահակը յանձն առաւ ինքը իրա համար ապրուստ ձարել , որ ծանրութիւն չըլինի իրա մօրը : Ես գիտեմ կարգալ , գրել և թուարանութիւն , միտք էր անում նա . մի՞ թէ ես աշխարհումը ինձ համար ճանապարհ չ'եմ գտնիլ եթէ աշխատասէր կըլինիմ և ճշմարիտ : Աս մնաս բարով ասաց իրա մօրը և դնաց մօտիկ քաղաքը , ուր կենում էր նրա հօր բարեկամ մէկ հարուստ վաճառական : Սահակը դնաց նրա մօտ , պատմեց իրա դառն վիճակը և խնդրեց օգնութիւն : Բանայն ջերմեռանդութիւնով կրճառայեմ ձեզ առաւօտուանից մինչև երեկոյ , ասաց նա , եթէ դուք վեր առնէք ինձ ձեր տուն : Սուրադեանը (անուն վաճառականին) շատ ուրախութիւնով խոստացաւ վեր առնել իրա տուն էս որք աղին , միայն եթէ կրխոստանայ հաւատարիմ և ճշմարիտ ծառայել : Սահակը հնպէս իստակ սրտով խոստացաւ , որ Սուրադեանը հաւատաց նրան , վեր առաւ իրա տուն և սկսաւ մանր գործեր յանձնել նրան , որոնց մէջ Սահակը կարճ ժամանակումը կարաց յոյց տալ իրա հաւատարմութիւնը և հողացողութիւնը , և Սուրադեանը ոչինչ պատճառ չէր գտնում նրանից անբաւական լինելու : Բէտի հաւանում էր նա Սահակի իստակ սիրտը , որով նա շատ անգամ ինքը իրանից գանգատ էր անում , երբ որ մոռանում էր մէկ բան . նմանապէս սիրում էր նրա ջանքը , սրով նա հետեւում էր միշտ բան սովորելու , կարճ ժամանակումը էս սղան էնքան հաւատարմութիւն յոյց տուաւ իրա բարեբարին , որ նա իրա դրան բանա

լիքներն էլ թողնում էր Սահակի մօտ: Մէկ խօսքով Սահակը շատ բաղդաւոր կրկնէր, եթէ նրան անհաշտ թշնամի չըղառնար տան կառավարիչ կնիկը, որ ամէն տեսակ հետեւում էր չար խօսել նրա վրա և տունից դուրս գծել, որովհետեւ նա դառել էր հնազանդ պահպան, որի մօտ էս կնիկը իրա առաջուայ սովորութիւնով չ'էր կարողանում տիրոջ ծախսովը հրաւիրել իրա բարեկամներին: Սահակի բաղդն էր, որ Սուրբաբանը կասկածոտ մարդ չ'էր և հնդուր համար միշտ նկատում էր Սահակի լաւութիւնը և հնքան չ'էր հաւատում, մինչև որ բաւական պատճառ չ'ունենայ իրա միտքը փոխելու: Ես պատճառով նա չ'էր հաւատում պառաւ կառավարիչի չարախօսութիւնին, բայց զգուշութիւնի համար աւելի նկատում էր Սահակի վարքին և շատ անգամ փորձում էր նրա ճշմարտութիւնը: Որովհետեւ երբէք չ'էր տեսել նրա մէջ ստու թիւն, զիսանորոյ կարծիք չ'էր տանում, թէ նա կրխարի իրան: Դատ անգամ, երբ որ ուղարկում էր նրան բաներ առնելու, զիստութիւնով աւելի փող էր տալի: Բայց Սահակը միշտ ամբողջ (թամամ) յետ էր բերում աւելցածը և շատ անգամ սուրբական գնիցն էլ էժան էր առնում: Մէկ օր Սուրբաբանը զիստութիւնով թողեց իրա հին քսակի մէջ մէկ արծաթ մանէթ, որպէս թէ մտաւցած է, որ տեսնի, թէ Սահակը կըպահպանի<sup>9</sup> իրա ճշմարտութիւնը, թէ վեր կ'առնի իրա համար: Սահակը դատաւ էն մանէթը էն ժամանակ, երբ որ Սուրբաբանի միւս ծառան էլ սենեակումն էր: Ընչա՛ լաւ գիւտ, ասոց սերտխանալով ծառան. հո փողով մենք կարող ենք էսօր լաւ սերտխտութիւն անել, սիրելի Սահակ, ես կարծեմ, որ դու էնքան յիմար չ'ես լինիլ, որ յետ տաս հո մանէթը աղային: Ընպատճառ կըտամ, ասոց Սահակը, հնդուր համար որ էս մանէթը նրանն է, և ոչ թէ մերը: Երբ ճիտանիրը արգելում է մեզ թարցնել, և ես չ'եմ ուզում, որ իմ խղճմտանքս ծանրանայ: Ես ասելով նա խկիցն տարաւ մանէթը Սուրբաբանի մօտ, որ էնքան սերտացաւ, մինչև ընծայեց նրան էն մանէթը: Են օրուանից յետ Սուրբաբանը բոլորովին հաւատաց նրան, և որովհետեւ ինքը սրգիք չ'ունէր, վասնորոյ իրա մեռնելու ժամանակը ճշմարիտ և հաւատարիմ Սա-



Հակին կարգեց ժառանգ բոլոր իրա՛կայքին :

ԸԹ. Մանգիան անհոգաւելան :

Գրեգորի հայրը շատ խիստ մարդ էր, բայց ճշմարտա-  
տէր : Աս անգաղար հրամայում էր իրա սրգուն աշխատել  
և շատ քիչ ժամանակ էր տալի զբօսանքի համար . որով  
հետև նա միտք էր անում, թէ շատ օգուտ բան է, որ պղ-  
տիկ սղերքը իրանց մանկութիւնից սովորեն միշտ աշխատանք  
անել և աշխատութիւնը իրանց համար ծանր չըհամարեն,  
և հնդրով ժամանակով հեշտ կրկնի իրանց համար ամէն  
միճակի ծանրութիւնը քաշել : Գրիգորին մէկ քանի ըն-  
կերներ ունէր, որոնք լուսննդամ չէին : Աս ընկերները նրա  
զլուխը մօցրին, թէ հայրը շատ խիստ է վարւում նրա հետ  
և թէ նա պարտական չէ ամէն հրամանքը դուռս կատա-  
րել : Իդպէս ապրելով քո կեանքդ էլ քեզ համար ուր-  
խութիւն չէ, ասում էին նրանք . քեզ արգելած է շաբաթը  
մէկ անգամ էլ, կիրակի օրն էլ, անից դուրս դալ, ասաց  
մէկը : Եթէ ես քո տեղը լինէի, ասաց միւսը, ես վաղուց  
էն կ'անէի, ինչ որ շատերը արել են, և կ'երթայի աշխար-  
քումը ինձ համար դարձ ճարելու . շատերը էսպէս բանով  
իրանց համար բաղդ են գտել . նորումն էլ ես ըսցի, թէ  
մէկ մարդ էզպէս բանով մեծ հարստութիւն է գտել Պե-  
տերբուրգումը : Յիմար կրկնես, եթէ կըթողնես, որ էսպէս  
տանջին քեզ : Գրիգորը էս ամէն յիմար խօսքերը և դա-  
տողութիւնները հաւաքեց իրա գլխումը, և վախաւ իրա  
ծնողքի մօտից . և որովհետև բաւական հաւաքած լիող ու-  
նէր, վասնորոյ կարծում էր, թէ ոչինչ բան չի պակասիլ  
իրան . — Մէկ առաւօտ վաղ հաւաքեց նա իրա բոլոր վա-  
ղերը և սկսաւ ճանապարհ դնալ, բայց սիրտը դողաց, ու-  
րովհետև հասկանում էր, թէ մեղաւոր է ծնողաց մօտ :  
Սակայն իրան մխլթարում էր էն դորդակ յուսով, թէ  
բաղբաւորութիւն կըդանի և էն ժամանակը շուտով կը-  
սաանայ իրա ծնողքից ներողութիւն : Մէկ քանի օր դնաց  
նա հեռու, բայց երբ որ տեսաւ, թէ իրա վաղերը պակա-  
սում են, շատ վախեցաւ : Սկսաւ խնդրել, որ իրան մէկը

վեր առնի ծառայելու : Բայց ոչ ոք չ'իւր կամենում վեր առնել , կնդուր համար , որ հասակ չունէր և տկար կազմուածք ունէր : Այսու ամենայնիւ Վրբիգորը շարունակում էր իրա ճանապարհորդութիւնը , կնդուր համար , որ վախենում էր իրա հօրից և ամուսնում էր յետ դալ տունն : Արջուպէս քաղցածութիւնը հարկադրեց նրան խնդրել մէկ գեղացիից , որ իլ ան վեր առնի ծառայ , և գեղացին ուրախութիւնով վեր առաւ . բայց ծանր մշակութիւն էր անել տալի և կնուպէս վատ և քիչ կերակուր էր ստեղծում , որ Վրբիգորը չըկարաց համբերել : Այն ժամանակը նա խելքը դրուիւր հարուրեց , դառն արատանքով զղջաց և մաքին դրեց , ինչպէս որ լինի , գնալ տուն իրա հօր և մօր մօտ : Յետին թշուառութիւնի մէջ , դեղնած , ուժից ընկած և կտրած շարքով եկաւ նա իրա քաղաքը և սարսեց մինչև երեկոյ , որ մ'ընտով զնայ իրա ծնողաց տունն : Հայրը առաջ չըճանաչեց նրան և վախեցաւ նրա սղորմելի վրձակից . յետոյ բնկոյաւ նրան սղորմած սրտով , բայց խիտա բարկանալով : Մայրը ուրախութիւնի արատանք էր թախում կորած և կրկին զանուած սրդոյ համար : Նշմարիտ զղջումով ասում էր Վրբիգորը , թէ արժանի չէ սրդի յիշուիլ , և առանց արտունջի յանձն առաւ իրան արժանի պատիժը : Պատիժն էլ կն էր , որ բաւական ժամանակ նրան սրդելած էր հօրը և մօրը հետ սեղան նստիլ և կամ նրանց մօտ լինիլ , ոյլ պիտք էր նստիլ և ոչխատիլ առանձին սենեակումը : Արտնից յետոյ Վրբիգորը մտայաւ իրա ընկերներն յիմար դատողութիւնները :

Խ . Ինտայտութիւնի և Ժլայտութիւնի մէջ զանազանութիւնը :

Անկ վարբիկ քաղաքի կառավարութիւնը ընտրեց մէկ քանի քաղաքացիք , որ ման գան ամէն աները և միող հարուրեն կն քաղաքի աղքատ ընտանիքին բաժանելու համար : Իս քաղաքացիքը ման դալով մէկ օր առաւ օտը վաղ և կան մէկ հարուստ գիւղացիի տուն , Արանց դալու ժամանակը գիւղացին ձեանայի մօտ էր կանգնած , և նրանք լսեցին , թէ նա ինչպէս բարկացած անարգում էր իրա ծառային կնդուր



Համար, որ նա դիշերը թօնը դրուան էր թողել անձրեկ տակը և չէր դրել ցամաք տեղ : — Ըննե՛ տեղ ենք եկել Հա , ասաց մէկ քաղաքացին միւսին . երեւի սա շատ ժլատ մարդ է . հասեղ մենք ոչինչ չենք կարող ստանալ : — Փորձենք , ասաց միւսը , և գնացին մօտ : Տանակերը ուրախութիւնով առաջ եկաւ և խնդրեց , որ տուն հրամանն Պարնալու ժամանակը նրանք յայանեցին , թէ ինչէ են եկել : Վիւզացին ուրախութիւնով ստորագրեց մեծ գումար և խստացաւ ամէն տարի էս ժամանակին նոյն գումարը հատուցանել : Քաղաքացիքը զարմացան , և շնորհակալ լինելով չըհարացին թարցնել , թէ երբէք յոյս չունէին հագնախօգնութիւն ստանալ , որովհետեւ լսեցին , թէ ինչպէս կաւում էր նա հնքան ճնչին բանի համար , որով նրանք կարծեցին , թէ նա շատ ժլատ մարդ է : — Արովհետեւ ես միշտ հոգս էի քաշում ամէն բանի համար , պարսնայք , պատասխան տուեց գիւղացին , հնդուր համար ես այժմ հնքան կարողութիւն ունիմ , որ կարող եմ ուրիշներին էլ օգնել : Այ՛ ամաչեր բան պահելից , և հո մի՛ համարիր ժլատութիւն . ամաչիր միւյն ժլատութիւնից : Քարերարութիւն անելից մի՛ վախչիր և բարերարութիւնը վաւուրութիւն մի՛ համարիր : Բայց բարերարութիւն արա՛ յարմար ժամանակին և մեծ զուշութիւնով :

### Խա. Փեմակ :

Մամիկոնեանք ունէր չորս զաւակ՝ Մերայէլ , Պետրոս , Հեղինէ և Ըննա : Մէկ օր ասաց նրանց՝ սրբէք , ով որ ձեզանից վաղը վեր կըլինայ վեց սՀաթին առանց զարթեցնելու , նրա համար տօն կը լինի : Մանկուքը զարմացած տկանջ էին դնում : — Ի՞նչ տօն կը լինի . հայրիկ , ասաց Հեղինէն . — Ղու իրա ժամանակին վեր կայ , ասաց հայրը , ինքդ կըտեսնես ինչ տօն կը լինի : — Ես կըզարթեմ վեց սՀաթից առաջ , ասաց Հեղինէն , առանց ձեր զարթեցնելու : — Ես էլ , ես էլ , ասացին միւսները : — Վիշերայ տասը սՀաթը խիտեց . հասաւ ժամանակը , որ նրանք գնան քրնելու : Ըմէրը իրանց ծնողաց ձեռքը համբուրելով ասացին

Բարի գիշեր և ամէն մէկը ասաց՝ կրօնսնէք, հայրիկ, որ վաղը վեց սհաթին ես վեր կացած կը լինիմ: Արանք պատկեցան քնելու և ամէնը քնելից առաջ կրկնեց Վեցի կէտը, վեցի կէտը: Միքայելը գրեց ևս իրա անկողնակալի (կարավառի) վրա՝ վաղը վեց սհաթի կէտին Միքայելը վեր կը կենայ: Ա՛հա՛ քեզ ապացոյց, թէ մարդս ամէն բան կարող է անել, ինչ որ սրտով կամենայ: Միւս առաւօտը ինչպէս վեցերորդ սհաթի առաջին քառորդը խիսց, մանկունը վեր կացան, հագնուեցան և դարս եկան իրանց սենեակից առանց խօսելու, որովհետեւ ամէն մէկը կարծում էր, թէ ինքը առաջ է վեր կացել. բայց համարեա թէ ամէնքը միտան հաւարուեցան սեղանատանը: Բարի՛ լոյս, ասում էին նրանք մէկ մէկու. այժմ՝ տեսնենք ի՞նչ ատն է պատրաստել մեզ համար մեր հայրը:

Արանք գնացին հօր մօտ: Ա՛հա՛, ասաց նա, երևի թէ, երբ հայրը ատն է խօսատուում, սրբուց համար դժուար է վաղ վերկենալը: Ուրեմն ես էլ իմ խօսքս կը կատարեմ: Բայց, սրբիք, առաջ կատարեցէք ամէն պարտաւորութիւնները, ինչ որ անում են լաւ մանկունը առաւօտը վերկենալուց յետոյ: Արանք գնացին, երեսները լուացին, բերանները մարբեցին խտակ ջրով, գլուխները սանդրեցին, աղօթք արին և կրկին եկան հօր մօտ: Ա՛նան անհամբերութիւնից հարցնում էր, երբ կը լինի ատնը: — Ա՛հա՛ ձեզ ատն, ասաց հայրը, ծածկելով նրանց գլխին մարբիկ գդակներ պզնձի թելից շինած մալի պէս ծակ ծակ, որ ծածկում էր աչքերը, քիթը, բերանը և բոլոր երեսը, իսկ մնացեալ մասը գլխի ծածկուում էր մահուդով: — Ձիմի հասկանում էք, հարցրաւ Միքայելը մուսներին. ես կարծում եմ, որ էս օր մեր հայրը կամենում է մեզը հանել: — Երաւի, հղպէս է, ասաց հայրը. դաք ի՞նչ էք կարծում, լաւ ատն չէ՞: — Ա՛ն, ինչպէս գեղեցիկ ատն է, ասացին ամէնքը, և վաղելով գնացին հօր ետեւից, որ նմանապէս ծածկեց իրա գլխին էն գդակից և ամէն մէկին տուաւ մէկ մէկ բան տանելու: Պետրոսին տուաւ կրակբանը (մանդալը) վաւած գործով: Միքայելին մէկ կապ ախտինդ (խոտ), աղձկներին երկայն դանակներ, նրանց ետեւից հայրը և մօյրը տանում



էին մաղ և ամաններ :

Եկան պարտէզը և տօնը սկսու : Հայրը բաց արաւ յ անկը , որ տեղ կենում էին մեղրաճանճերը , և փեթակները վեր առաւ իրանց տեղերից . յետոյ վեր էր առնում մէկ կապ ափսինդ , դնում էր վառած ածուխի վրա և ծուխը մօտեցնում էր փեթակներին : Երբոր մեղուները մութից վախան Թաչելով , հայրը առաջ կտրեց մեղրամամը , դարսեց մաղի վրա , և յետոյ կտրեց և հանեց մեղրը մեծ մեծ կտորներով , Խոնչ ուրախութիւն էր : Մեղրը տարան տուն , մանկուները հաւաքուեցան , իսկ մայրը բերաւ սպիտակ հաց , կտորեց , կտորներէ վրա քսեց մեղը և տուաւ մանկանցը : Հայրը նմանապէս եկաւ և ասաց՝ որդիք , ձեզ համար էլ տօն կը լինի . քսեցէք մեղրը հացի վրա և կերէք : Բայց ոչ որ խորխոխին ձեռք չտայ : Լմինքը լսեցին հօր խօսքը , բաց ՚ի Լննայից : Կա շատ ուզում էր խորխոխի համը տեսնել . դնաց սեղանի մօտ ամանի մէջից մէկ կտոր խորխոխ վեր առաւ և բերանը դրաւ : Յանկարծ կնպէս գոռաց նա , որ բոլոր ամն մէջ լուսեցաւ ձայնը : Եղբայրները և քոյրը սկսան վախենալով հարցնել — Ի՞նչ իլաւ քեզ , Լննա ջան : Հայրը և մայրը վաղելով եկան և նմանապէս հարցրին ի՞նչ իլաւ քեզ Լննա : Բայց Լննան բերանը բռնած գոռում էր և չէր կարողանում խօսել : Մայրը բաց արաւ նրա բերանը և մտիկ տուաւ : Բայց ի՞նչ տեսաւ . . . մէկ փոքրիկ մեղրաճանճ նստած էր նրա լեզուի վրա և իրա խայթը ցցել էր լեզուի մէջ : Քեպէտ մայրը էն սհաթին վեր առաւ մեղրաճանճին , բայց սրբմեղի աղջկայ լեզուն կնպէս ուռաւ , որ նա բոլոր օրը ոչինչ չըկարաց ուտել : — Միւս տղերքը կերան իրանց մեղրը հացով , որ նրանց շատ ախորժ թուեցաւ և Պետրոսը ասաց , թէ շատ հաւանում է էս տօնը : — Հեղինէն դուրս մտիկ արաւ պատուհանից և տեսաւ , որ իրանց դրաձիի աղջկի Մարիամը անց էր կենում : Խեղճ Մարիամ , ասաց նա . նրա հայրը մեղրաճանճեր չ'ունի և չի կարողանում տալ նրան սպիտակ հաց մեղր քսած : Մայր իմ , մայր իմ , չի՞ կարելի Մարիամին տալ մեղրով հաց : — Մեծ ուրախութիւնով , որդեակ իմ , ասաց մայրը , և տուաւ նրան մէկ ամբողջ հաց մեղրով , իսկ Հեղինէն վա-

գելով տարաւ տուաւ Մարիամին : Ինչպէս ուրախացրուց  
նա էն աղջկան. ինչպէս նա շնորհակալ էր Հեղինէից : Ինչ  
ժամանակը Հեղինէի համար մեղքը աւելի քաղցր թուեցաւ :

Խբ. Ի ճաշի շինուից :

Կամսարականի լճակումը շատ մանր ձկներ կային : Երբ  
որ հայրը կամենում էր ուրախացնել իրա որդիերանցը, տա-  
նում էր նրանց լճակի մօտ : Բլի՛ն մէկը վեր էր առնում  
մէկ կտոր սև հաց, բերում էր և մանր կտորներով զձււմ  
էր ջրի մէջ և ձկները սկսում էին ուտել էն կտորտանքը :  
Ինտեղ նստում էին նրանք երկար ժամանակ և մտիկ էին  
անում, թէ ինչպէս ձկները խաղում էին, ինչպէս մանր  
մեծեղները թռչտում էին ջրի երեսին և ինչպէս գորտերը  
հանում էին գլուխները ջրից և կրկին մօնում էին ջուրը,  
երբոր տղերքից մէկը մօտենում էր լճակին : — Մանկունքը  
շատ անգամ խօսում էին իրարու հետ՝ ան եթէ մէկ ան-  
գամ պատահէր մեզ բռնել էս ձկներից մէկին, կամ էս  
գորտերից, որ մօտիկից տեսնէինք. բայց Կամսարականը չէր  
թողնում նրանց, (Իրաւունք է էս չթողնելը : Ինչ կարծում  
եմ որ իրաւունք է. մանկունքը գորտ չ'են, ձուկը չ'են և  
նրանց նման չ'են կարող կենալ ջրի մէջ. իսկ եթէ տղան  
ջուրը ընկնի, էն ժամանակը լաւ կը լինի : Ինչպէս էլ ձկան  
համար է ջրից գուրս իլա՞ծ ժամանակը : ) Մէկ օր Կամսար-  
ականը ասաց իրա որդիերանցը՝ ուզում էք գնալ լճակի  
մօտ : Ուզում ենք, ուզում ենք, ձայն տուին ամէնքը, և  
վաղեցին հօր ետեից : Կոտանդինը վաղեց առաջ և ուղեց  
առաջ հասաւ լճակի մօտ : Ինչպէս հասաւ լճակին, խկոյն  
յետ դարձաւ և սկսաւ գոչել՝ Սասիլ, Եղեաբէթ, Գա-  
րիա, մեր հայրը հանակ է անում, շուտով եկէք : Բլի՛նքը  
վաղեցին ով ինչպէս կարաց, և տեսան որ բոլոր ջուրը  
թողած էր լճակից և յատակումը շարժում էին մեծ և  
մանր կենդանիք : Մէկ տեղ շարժում էր մեծ ձուկը, միւս  
տեղ ուրիշ ձուկը հետեւում էր մօտեւել ցետի մէջ. ուրիշ  
մանր ձկներ, գորտեր, զեւուռներ, որդներ, և այլն, ծած-  
կել էին բոլոր լճակի յատակը : Ինչ ժամանակը պէտք էր



տեսնելու տղերանց ուրախութիւնը . մէկը ձայն էր տալի՝  
հայրիկ , տեսէք ինչ մեծ գորտ է . միւսը՝ Ղաւրիա , Ղաւ-  
րիա , տես ինչ մեծ խեցեղեափն է : Աղիտաբէթը գոչում էր՝  
ո՛ր է կարող ինձ համար հանել էն ճիճուն , այ , էն ճի-  
ճուն , կտտանդին , որ մեծ ձկան մօտ է , նրա թւերի  
ծայրերը դեղին են : Ա՛րջապէս կտտադինը ասաց՝ արիս հայ-  
րիկ , եթէ դուք ուղում էք մեզ ուրախացնել , հրաման  
տուէք մեզ մանել լճակի մէջ : Արանից յետոյ միւսներն էլ  
սկսեցին խնդրել՝ սիրելի հայրիկ , հրաման տուէք , մենք  
ձկներ կրբաննիք , խեցեղեափններ և գորտեր , կարծենք որ  
շատ ուրախ կը լինենք :— Ղահայէք , ասաց հայրը , բայց ա-  
ռաջ հանեցէք ձեր կոշիկները և գուլբերը . հանեցէք ձեր  
փարտիքը և բարձրացէք ձեր շորերի թւերը , որ չաղտո-  
տէք : Ի՛նչ տեղ գրած են ստիպալիներ (սեփեթներ) . դուք  
կարող էք նրանց մէջ ձկներ հաւաքել . մէկ սակառի կայ ,  
որի մէջ պէտք է գձ.ք խեցեղեափններ , խկ ուրիշ ամաններ  
մէջ դձէք գորտեր , ճիճուններ և ուրիշ ինչ որ կրդանէք  
ցիխի մէջ :— Ի՛նչ ուրախութիւն իլաւ : Ի՛նչոր սհաթ է  
քաշում , երբ որ նրանք հանում են շորերը քնելու ժամա-  
նակը . խկ այժմ մէկ բոպէի մէջ ամէնքը պատրաստ էին ,  
և ինչպէս հայրը հրաման տուաւ , խկոյն վողեցին լճակի  
մէջ : Եւ ի՛նչ մեծ ուրախութիւն էր : Ինչպէս մէկը բռ-  
նում էր կամ մէկ ձուկը , կամ մէկ գորտ , կամ մէկ  
խեցեղեափն և կամ ճիճու , խկոյն ուրախութիւնից գոչում  
էր և խնայ էր տալի միւսներին : Արիւս սհաթ հրաման  
տուաւ նրանց հայրը զբօսանք անել էս զուարճութիւնով .  
յետոյ ծափ տաւեց և հրամայեց նրանց դուրս գալ լճակից .  
բայց դուրս գալը հնապէս շատ չ'իլաւ , ինչպէս մանեւր . ա-  
մէնը ուղում էր էլի մէկ բան բռնել . մէկը ձայն էր տալի  
էլի մէկ խեցեղեափն , միւսը՝ էլի մէկ ձուկը , սիրելի հայրիկ .  
բայց հայրը ասաց՝ մէկ , երկու , երէք , և էս նշան էր թէ  
որդիքը պէտք է հնազանդին : Յետ այնորիկ նրանք ամէնքը  
գարս եկան լճակից , բայց ինչի՞ նման էին . ամէնքը ցիխտ  
և աղտոտ : Կայրը վազուց զխաէր , որ հսպէս կը լինին , և  
հնգուր համար հրամայել էր բերել խտակ շապիկներ և  
ուրիշ շորեր : Հայրը աստաւ նրանց սղբերի մօտ . էնտեղ

նրանք լուացին իրանց սօքերը, ձեռերը և երեսները. յետոյ ամէն մէկը վեր առաւ իրա շապիկը, վարտիքը և շորերը, գնաց մէկ թուփի ետև և հնտեղ շորերը վտխեց:

Այժմ, որդիք, ստաց հոյքը, դուք բռնեցիք էսօր շատ ձկներ. բայց տեսնենք էն գերիներէ՛ համար էլ լա՛ն է, թէ չէ:

— Ի աւ է, ասացին ամէնքը:

Հոյքը: Դուք կարծում էք, թէ նրանց համար էլ էն պէս հեշտ է շունչ քաշել սահառիների և ամանների մէջումը, ինչպէս ջրումը:

Կոտանդինը: Ես չեմ կարծում:

Հոյքը: Աւրեմն ստիճառով թիւն է երկար տանջել նրանց. Սանուէլ (այս էր ձկնորսի տնուհը, որ ջուրը թողել էր լճակից) թեր էտեղ ամէնը, ինչ որ բռնեցին աղերքը. մենք կըլսուենք նրանց վրա: Դուք, որդիք՝ Կոտանդին, Սանուէլ, Եղիսաբէթ և Դարիա, և դու սիրելի կին լմ, նստեցէք ինձ մօտ և ասացէք ճշմարիտ կըլսուիմ, թէ չէ: Կոտանդին, երբ մարդս հրաման ունի սպանել անասունին:

Կոտանդինը: Երբ որ նա վնասում է մեղ:

Հոյքը: Աւրեմն ես երբէք պէտք չէ սպանեմ կովին, որովհետև կօլը ինձ վնաս չէ տալի:

Կոտանդինը: Կովին մենք սպանում ենք էնգուր համար, որ նրա միսը ուտում ենք:

Հոյքը: Աւրեմն ես կորոշ եմ սպանել անասունին, երբ որ նա ինձ վնասում է, կամ երբ որ պէտք է նրա միսը ուտեմ: Բայց ինչի՞ համար են սպանում կէտ ձուկին. նա վնաս չէ տալի և նրա միսը չեն ուտում:

Կոտանդինը: Ճշմարիտ է, բայց նրա իւղը պէտք է մարդուն:

Դարիա: Սպորներն էլ:

Հոյքը: Աւրեմն երկու պատճառ կայ, որ մարդու համար մեղք չէ անասուն սպանել. մէկ՝ երբ որ նրանք վնաս են մեր կեանքի համար, և երկրորդ՝ երբ որ օգուտ են բերում իրանց մեռնելից յետոյ: Հրամայեցէք բերել էստեղ դատաստան անելու բոլոր մեր գերիներին՝ տեսնենք իրաւունք ունենո՞ւք նրանց սպանելու: Ե՛հա երկու սահառի լեքը ձրկնեքով. էս ձկները մեզ վնաս տաւել են:



Լճէնք: Ո՛չ :

Հարբ: Օգուտ կը լինի՞ մեզ , եթէ մենք սրանց սպանենք :

Կառանդիւնք : Կը լինի . էնդուր համար որ մենք կ'ուտենք սրանց միտք . սրանց միտք շատ համեղ է :

Հարբ: Մի և նոյնը կարելի է ասել միս ձկնորսի և խեցգետիններէ համար . կարելի՞ է ուտել սրանց միտք :

Դարբա: Փորձելու մայրիկ , ելի՛ւ սրանց . դու կը տեսնես , թէ ինչպէս համեղ են :

Հարբ: Ուրեմն էս խեցձերը պէտք է ամէնքը մտնեն : Բայց սրովհետեւ մենք բարբիս միասին մէկ անգամու մը չ'ենք կարող ուտել , էնդուր համար , դու Սամուէլ , մնացածներին ամա սահառ ինների՞ մէջ , որ յասուի շինած են ձկնորսի և խեցգետիններէ համար : Ի՞մ կինը կը հոգայ , որ սրանք ամէն որ ուտելք ստանան : Լա՛յժիմ կարգը հասաւ պարսն գորտերին . սրանք մեզ վրաս առե՛լ են , թէ չէ :

Լճէնք: Ո՛չ , ո՛չ :

Հարբ: Օգուտ կը լինի՞ եթէ մենք սպանենք սրանց . կամի՞ք որ ձեր մայրը հրամայի տապալել սրանց ձեզ համար :

Եղեա՛նքիւնք: Փիւ . ես չեմ ուտիլ գորտեր : Դու չե՞ս ուղում , Դարբա :

Դարբա: Թանջ ուրիշները ուտեն գորտեր . ես սիրում եմ խեցգետիններ :

Հարբ: Ուրեմն թո՛ղ կենդանի մնան գորտերը :

Եսպէս էլ վճռեցին կենդանի թողնել բոլոր ճիճուներին և զետուներին : Յետոյ Կամսարականը վեր աբաւ ամէն մէկ տեսակից մէկ մէկ հաս , ցոյց առաւ որդւոցը և պատմեց , թէ ի՞նչպէս են նրանք կենում , ի՞նչ են ուտում և ինչի՞ համար պէտքահաս են մեզ :

Երբոր էս ամէնը վերջացաւ , հայրը ասաց՝ հի՛մե , ո՛ր դէք , սրովհետեւ էս ամէն անատունները մեզ ոչինչ վրաս չ'են անում իրանց կեանքովը , և իրանց մահոյն էլ ոչինչ օգուտ չ'են բերիլ , ուրեմն թողնենք սրանց ազատ :

— Լա՛յժիմ , այն , ձայն տուին ամէնքը . կըսէս անենք :

Լն ժամանակը ամէնքը կրկին գնացին լճակի մօտ և իրանց չեա տարան ամանները , սրանց մէջ կային զանազան

կենդանիք, և թափեցին լճակի մէջ : Ուրախաւ թիւնին վերջ չըկար : Ինչպէս ուրախանում էին նրանք տեսնելով , թէ ինչ ուրախաւ թիւնով սկսան կենդանիքը ազատ թռչտակ և սողալ :

Ժամանակը հասաւ տուն գնալու , բայց ճանապարհ ընկնելից առաջ հայրը հարցրաւ Արամանդինին՝ մինք ինչի՞ համար կրկին թողինք էս կենդանիներին լճակի մէջ , ապրելու թէ մեռնելու համար :

— Ի հարկէ , ապրելու համար , պատասխան տուեց Արամանդինը :

— Ուրեմն մենք պէտք է հոգանք , թէ ինչով պէտք է նրանք ապրին : — Իստակից յետոյ հայրը հրամայեց վազել էն ծակը , որ տեղաց դուրս էր գնացել ջուրը , և շուտով ջուրը կրկին սկսաւ հաւաքուիլ :

Արանց խօսելու ժամանակը մայրը առաջուց գնացել էր տուն , պատրաստել էր լուռ ճաշ , և հրամայել էր ևս եփել ձկներ և խեցգետիններ : Որովհետեւ տղիքը բաւական ժամանակ մնացին բաց օդումը , կնդուր համար ամէն կերակուրները նրանց շտապխորժ թուեցան :

Ճաշից յետոյ ամէնքը գնացին հօր մօտ , ձեռքը համբուրելին և ստացին շնորհակալ ենք ձեզանից , հայրիկի , դուք էսօր մեզ համար պատուական տուն արիք :

Եւզ . Պէտք է խաղալ երացան գէտով :

Մէկ որտարդ գնաց մէկ օր որս անելու . բայց որովհետեւ ոչինչ չըլլատահեցաւ նրան , որ սպանի , նա տուն եկաւ և քաշ արեց լքցրած հրացանը (թիւֆնիկը) պատի վրա միւս դարդակ հրացանի մօտ : Մէկ երիտասարդ տղայ 13 տարեկան , որ կենում էր որտարդի հետ մէկ տանը , եկաւ կոշիկները սրելու համար : Արաման ժամանակ էր որ ուզում էր որտարդ գտնուի , և եթէ գտնում էր հրացան , խիղիս սկսում էր խաղալ , թէ և ամէնքը շտապեալով էին կգտվորութիւնը նրան թողնուլ սալ ծեծելով և սպառնալով : Իստակամն էլ նա չըկարաց համբերել և վեր առաւ պատից հրացանը , քաշեց չախմախը , թողուց և արձակեց հրացանը : Արաման արտաքինաւ թիւնից պատահեցաւ լքցրած հրացանը :



ցանք. գնդակը (գիւլլան) անցաւ պատուհանից և դիպաւ մէկ փոքրիկ աղջկայ: Ինչ աղջիկը թէպէտ վեր կացաւ վեր ընկած անդիցը և անցկայցաւ մէկ քանի քայլ տերալով, բայց աւելի չըկարաց առաջ գնալ և կրկին վեր ընկաւ: Ինչ ժամանակը նրան օգնութիւն հասաւ կառավարը: Աղջկան դրին կողմերէ մէջ և իսկոյն ձիւռնոր մարդ ուղարկեցին քաղաք բռնաբիշի բերելու. բայց նա կէս սհաթից մեռաւ առանց օգնութիւնի: Արիտասարդը, որ խղճմտանքից տանջուած էր, վեր ընկաւ պատուհանից պարտիզի մէջ և փախաւ. բայց միւս օրը բռնեցին նրան, և իրա անզգուշութիւնի պատճառով, որով մարդասպան դառաւ, երկար ժամանակ մտոց բանտումը: Արջն էլ նա երբէք չէր կարողանում հանգիստ մնալ, և նոր համար որ բոլոր կեանքումը չըկարաց իրա մարցից հանել ևն զարհուրելի պատահումները:

Խոր. Էնչոյն խաղաղութիւնը և անարգութիւնը:

Մէկ աղքատ այրի կնոջ որդի անունը Մարկոս, պղտիկ ժամանակից չար էր, անհնազանդ և անզգայ: Արա հայրը, որ նրան սաստած էր պահում, մեռաւ ևն ժամանակը, երբ որ Մարկոսը 5 տարեկան էր. իսկ մայրը կնքան փախկասիրտ էր, որ չէր կարողանում պատժել չար Մարկոսին նրա անհնազանդութիւնի համար: Արա կարծում էր, թէ բաւական է քաղցը խօսքերը և խրատները, բայց անզգամ որդին չէր հասկանում: Ըտտ անգամ արտասուներով խրնդում էր նրանից մայրը, որ չըթռչէ և չըգնայ բարձր բաների վրա և կնքրով իրա կեանքը չըզօծի վտանգի մէջ. բայց ինչպէս մայրը հեռանում էր նրա մօտից, նա իսկոյն սկսում էր էլի թռչտակ, բարձրանալ առաջւոյ պէս, և շատ անգամ տուն էր գալի կնքէս թուլացած և դադրած, որ խեղճ մայրը վախենում էր մտիկ տալով նրա երեսին: — Բանի անգամ խրատում էր նրան մայրը քրտնած ժամանակը ջուր չըխմել. բայց նա չէր կարանում համբերել և իսկոյն ջուր էր խմում ևն ժամանակն էլ, երբ որ քրտնքը վազում էին երեսիցը: Արա ի՞նչ իլաւ էս ամէն բանի վերջը: Մէկ շաբ օր նա տուն եկաւ սաստիկ քրտնած և լաց լինելով ա-

սոց, թէ կողքը ցաւում է և սիրտը խառնում է: Սխալացած մայրը 'ի դուր աշխատեց օգնել նրան, բայց որովհետեւ նրա գուարը սաստկացաւ, նա բժիշկ կանչեց: Բժիշկը լաւ հարցութիւնք անելով և մարմնին մտիկ տալով, յայտնեց, թէ Մարկտը սաստիկ թուջելով շատ վտանգաւոր ստիտ է կտաբել: Կարող էր երեակայել ձեր մտքումը, սիրելի' մանկունք, թէ ի՞նչպէս վխտեցաւ նրա խեղճ մայրը: Թողնենք դեռ ևս են խարժերը (ծախսերը), որ նրա յիմար անհնազանդու թիւնի պատճառով քաշեց խեղճ մայրը: Լաւ էր, որ բարեսիրտ բժիշկը բան չ'տուաւ կտորած սեղը կապելու համար: Բայց էս չ'էր նրա միջնակ և ողջեց մեծ տարաբախտութիւնը, որ նա բերաւ իրա գլխին իրա չարութիւնով: Եւտով սիրաւ նրա կուրծքը ցաւիլ և առողջութիւնը թուլացաւ: Աս կարող էր իրա մօրը ծերութիւնի ժամանակը օգնել նրան, խի պիտի նա պատճառ դառաւ իրա մօր անարարախտութիւնն և տրամու թիւնին:

Ըստդէք, ի՞նչ օգուտ բան էք քողում էս պատմութիւնից: Արպիտի խողերից դուք հեռու կրկենաք: Ի՞նչ բանին տկանջ կրկնէք և ինչի՞ն կրհետելք: Ինչն՞ համար պէտք է կգպէս անէք, և ո՞չ թէ նուանիք չար Մարկտին:

Խե. Թրթուրներն Բոնն:

Մէկ երեկոց Կատարինն իրա մօր հետ ման էր գալի տալուովը, և մայրը սովեցրել էր նրան ամէն բանի վրա մտիկ անել աշտղութիւնով: Հիմի էլ նա կնպէս էր անում: Հանկարծ նա կանդնեցաւ և ձայն տուաւ մայրիկ, որի' հետեղ շուտով և տես թէ ի՞նչ է: Մայրը եկաւ և տեսաւ որ մէկ եղինջի (ճինճառի) թուի բոլորովն ծածկած էր թրթուրներով: Նստած էին տղեղ որդուք մազոտ մէջքերով և հանունջ խողերով մաղերի մէջ: — Սպանե՞մ էս թրթուրներին, ասաց Կատարինն: — Ե՛կ, ասաց մայրը, դու տեսնում ես, որ թրթուրները հաւաքած են եղինջի վրա, ուրիմն սննդոտ են. բայց որ ժամանակ տեսնես նրանց նրստած կեռատի վրա, կամ ուրիշ պողարեր ծառի վրա, էն ժամանակը կարող ես սպանել իբրև վնասարեղ զեռուն:



ներին: Քայց էս որդունքը կարող են քեզ մեծ ուրախութիւն տալ. վեր առ դրանց, տա՛ր տուն, և կերակրի՛ր:

Կատարինէն խեղճն ձեռքը դձեց որ մէկին վեր առնի, բայց խեղճն ձեռքը քաշեց գոչելով, սրովհետեւ միտք չարաւ, թէ եղինջը ձեռքը կը ծակի:— Մի թէ դու չըգիտես ինչպէս պէտք է վեր առնել եղինջը, որ ձեռքդ չըծակի, հարցրաւ մայրը: Կատարինէն մտածեց, հանեց իրա ձեռքի աղլուխը, փաթաթեց նրա մէջ իրա ձեռքը և կտրեց եղինջը: Ուրախութիւնով տարաւ նա թրթուրներին իրանց տուն, դրաւ եղինջով մէկ մեծ շուշայ ամանի մէջ, որ նրան տուաւ մայրը և ամանի բերանը կապեց թղթով:

Մի թէ դու ուզում ես, որ դրանք խեղդուե՛ն, հարցրաւ մայրը:

— Ա՛մենեկն չ'եմ ուզում, որատասխան տուաւ Կատարինէն:

— Ո՛րեմն մանր ծակեր շինի՛ր թղթի վրա, որ ամանի մէջ օդ անց կենայ:

Կատարինէն մօր ասածը արաւ և ուրախութիւնով մտիկ էր անում, թէ ինչպէս թրթուրները ուտում են եղինջը: Միւս օրը, երբ որ Կատարինէն ուտում էր իրա նախաճաշիկը, մայրը հարցրաւ՝ մտապե՛ր ևս քո թրթուրներին, և նրանց էլ տուե՛ր ես էս օր նախաճաշիկ:

— Օ, ասաց Կատարինէն, թրթուրերի ամանը լըքն է եղինջով:

— Քայց մտիկ արա, ասաց մայրը, կարելի է եղինջը չորացած լինի. էս խեղճ կենդանիները չորացած եղինջ չ'են ուտում: Որովհետեւ դու նրանց բերել էս քո տուն հիւր (դճաղ), ուրեմն քո պարտաւորութիւնն է հոգալ նրանց կերակուրի համար և ամէն օր նրանց տալ կանանջ եղինջ. նրանք իրանք չ'են կարող հիմի իրանց համար կերակուր ճարել, էնդուր համար, որ դու զրկել ես նրանց ազատութիւնից:

Սրանից յետոյ Կատարինէն էլ չ'էր մոռանում իրա մանր հիւրերին: Զինգ օր շարունակ տալիս էր նրանց ուտելիք և ուրախանում էր մտիկ տալով նրանց ուտելուն: Ա՛եցերորդ օրը նա ուզում էր նրանց կերակուր տալ, բայց

նի զարմանք . . . երբ որ ուզում էր բայց անել Թուղթը , տեսաւ որ բարձր Թըթուրները կպած էին Թղթին . ետքի ստրերով ոմանք բռնած էին շուշան , ոմանք Թուղթը , և կարծես Թէ միացած էին նրանց հետ : Սպղելով գնաց Սատարինէն իրա մօր մօտ և ցոյց տուաւ կախ ընկած Թըթուրներին : — Ի՞նչ իլլաւ դրանց , սիրելի մայրիկ . ես որբանց ամէն օր բաւական կերակուր էի առլի , բայց սրանք մեռել են :

— Հանգիտ կացիր , պատասխան տուաւ մայրը , սրանք մեռած չ'են , և դեռ քեզ երկար ժամանակ կ'ուրախացնեն . Թո՛ղ մնան կախ ընկած , ձեռք մի' տար դրանց :

Սատարինէն իրա մօր հրամանը կատարեց և զգուշու Թիւնով փակեց շուշայ ամանի բերանը : Ս'լա օրը ինչպէս զարթեցաւ Սատարինէն , իսկոյն վաղեց և տեսաւ որ շուշայի մէջ նոր բաներ է իլել . Թըթուրները կտրել էին , խի Թղթի մրա կախուած էին երկայն մաշկեր , գլխներին մանր պտակ : Սրանք կենդանի էին և շարժում էին : Սատարինէն զարմացած չէր իմանում ի՞նչ անել . յանկարծ ծափ տուեց և զարմացած մնաց անխօս : Սերձապէս ձայն տուաւ մայրիկ , շուտով եկ հասեղ . տես Թէ ի՞նչ են իլել իմ Թըթուրները :

— Ս'քեզ չէի ասում , Թէ Թըթուրները դեռ շատ կ'ուրախացնեն քեզ : Հիմի լաւ մտիկ արա . տես նրբանք հանել են իրանց վրայի մորթը , որ նրանց մօտ կախուած է , և իրանք դառել են ուրիշ կենդանի , որ ասում են կոտորեալ . Թո՛ղ կախ ընկած մնան , և դու ամէն օր մտիկ տուր շուշային . կարելի է շուտով ուրիշ բան էլ կը տեսնես , որ քեզ կըզարմացնի :

Ինչպէս էլ իլաւ : Ժամանակը շատ երկար էր երևում անհամբեր Սատարինէին և նա սկսել էր յոյսը կտրել : Մէկ քանի շաբաթից յետոյ , Սատարինէն մէկ օր գնաց տեսնելու իրա շուշան : Այլ ի՞նչ տեսաւ . . . բարձր շուշան լեքն էր գեղեցիկ Թիթեաներով : — Ընի , մտիկ արա , ինդրում եմ , սիրելի մայրիկ , ասաց նա , ի՞նչ ունիմ ես իմ շուշայի մէջ :

Մայրը ուրախ դէմքով եկաւ , և երբ որ երկուսն էլ



լաւ մախկ արին, ուրիշ նոր հրաշք էլ տեսան : Մէկ թըր-  
թուր, որ դեռ փախուած էր իրա բժստումը, ոտքերով հասնեց  
իրա վրայից և դուրս եկաւ մէջից. նրա թեկերը դեռ փախուկ  
էին և ծալած էին միտանին ինչպէս մէկ թղթի կտոր : Ընտով  
նա սկսաւ վաղել շուշայի վրա և կտիւ ընկաւ թղթից. նը-  
րանք տեսան, թէ ինչպէս բացուած էին նրա թեկերը և  
կէս սհաթումը բոլորովին կարգուեցան : Ինչպէս անցաւ բո-  
լոր առաւօտը մինչև ճաշ, անդադար թիթեռները մէկ մէկու-  
եակից դուրս էին գալի իրանց բժստներէից, և ճաշից յետոյ  
ամէնքը դուրս եկան :

— Այժմ քեզ համար նոր ուրախութիւն կը լինի,  
ատոց մայրը . առ քո շուշայի ամանը, տար պարտեղը, բաց  
արա թուղթը և թող թիթեռներին, որ աղատուին :

Կատարինէն մօր հրամանը կատարեց, և անպատ-  
մելի իլաւ նրա ուրախութիւնը, երբ սր տեսաւ, թէ թի-  
թեռները սկսան դուրս գալ և թռչել մէկ ծառից միւս  
ծառի վրա : Իս բանից յետոյ, երբ որ Կատարինէն գնում  
էր պարտեղը և տեսնում էր սեւագոյն թիթեռն սեւաւ սեւաւ  
նաշխերով, միշտ ասում էր՝ կարծեմ որ դու իմ շուշայ  
ամանի մէջիցն ես :

Եւ, Առ ուն մե անարգիւր ո՛ր վիճակից ուղտմ է լինի :

Մէկ քաղաքական ուսումնարանումը կարգում էին գե-  
ղացիքի տղերք էլ : Քաղաքացիքի տղերքը միշտ կարծում  
էին, թէ իրանք գեղացիքի տղերքից լաւ են, իսկ գեղացիքի  
տղերքը ծիծաղում էին քաղաքացիքի տղերքի վրա : Իս բա-  
ները հնքան երկարեցան, որ վերջը կուխ բացուեցաւ : Ար-  
ժապետը խնայաւ էս բանը և պարզ մեկնեց նրանց, թէ  
ինչքան յիմար բան է հսպէս վարուիլը : Գաւթ ամէնքդ գեռ  
մանկուէք էք, ասում էր նա . և երբէք չ'էք կարող իմա-  
նալ, թէ ի՞նչ վիճակումը կը լինիք ժամանակով : Կարելի  
է որ շատ քաղաքացիքի որդէք իրանց համար ապրուստ ճա-  
րեն գիւղումը, և շատ գեղացիքի որդէք իրանց համար հաց  
ճարեն քաղաքումը : Ինձ համար աշխատասէր և բարի վարքով  
աղան ամենից լաւն է, ի՞նչ վիճակից ուղտմ է լինի : Մենք  
ամէնքս մարդէք ենք, վեղ ամենքիս Բրտուած է սառ ը'եւ

և ամէնքի վրա հաւասար ողորմած է : Եւ միտք արեք . եթէ իսկի մէկ մարդ չըկամենար էն գործով պարապել , որ մարդիկ հասարակօրէն վայելուչ չ'են համարում , ի՞նչ մեծ դժուարութիւններ կը քաշէինք մենք :

Բայց էս անխելք տղերքը ականջ չըգրին էս խօսքերն : Երանք պատմեցին էս բանը իրանց աներումը և երկու կողմիցն էլ գանուեցան հնազանդ ծնողք , որք իրանց տղերքէ նման էին հասկանում բանը : Կուրք և անբաւականութիւնը հասաւ էն աստիճանը , որ քաղաքացիք չըկամեցան թողնել գեղացիքի որդիներանցը գալ քաղաքի ուսումնարան : Են ժամանակը դիւզացիքը խօսք կապեցին , որ մէկ մտքը ժամանակ պիտի բան չըտանեն քաղաք : Երկու կողմից անբաւականութիւնը սաստկացաւ , և քաղաքացիքը և դիւզացիքը միմեանց յիշոց էին տալի : Ես պատճառով շուտով երեւեցաւ մեծ պակասութիւն և բաները խառնուեցան : Քաղաքացիքը արեւը չ'ունէին , ուրե՛մ հաց էլ չ'ունէին : Մտք թաղները չ'ունէին արջառ մարթելու համար . փողօցներումը չըկար ո՛չ կաթը , ո՛չ ձու , ո՛չ խոտ , ո՛չ փայտ և ո՛չ ուրիշ շատ հարկաւոր բաներ , որք բերում են գեղերից քաղաք ծախելու համար : Գեղացիքի համար էլ էս կռիւնները մեծ միտք բերին : Ղշմարտա է , թէպէտ նրանք ամէն շատ հարկաւոր բաները ունէին , բայց շատ էին հաւարում էն ուտելիքէն բաները , որ նրանք առաջ տանում էին քաղաք ծախելու . էս բաներից շատը փչացան և վթեցան , որից նրանք միշտ փող էին ճարում : Շատ բանումը սկսան շուտով պակասութիւն քաշել , որ առաջ էն բաները շատ էժան առնում էին քաղաքումը , հնդուր համար , որ քաղաք բերում էին շատ ազրանք . և երբ սկտք իլաւ հատուցանել դարբինին , դերձիկին և մշակներին , էն ժամանակը թէպէտ նրանք շատ աւելորդով ունէին հաց , կաթը , իւղ , խոտ և փայտ , բայց փող չ'ունէին :

Երկու կողմիցն էլ տեսան , որ քաղաքացիքը չ'են կարող կենալ առանց գեղացիքի , իսկ գեղացիքը առանց քաղաքացիքի : Համաձայնեցան որ թողնեն ամէն ծաղրածութիւնը , նախատինքը և պարծենալը :

Եւ մենքը վերջապէս համաձայնեցան , թէ քաղաքներումն



էլ, գեղերումն էլ կան բարի և չար մարդիք, բարեսնունդ  
և անբողաքավար մարդիք, խելօք և յիմար մարդիք. թէ բը-  
նակիչներ պէտք է լինին քաղաքումն էլ, գիւղումն էլ և թէ  
քաղաքացիքն էլ, գիւղացիքն էլ պէտք է կատարեն իրանց  
պարտաւորութիւնները. և էն ժամանակը երկուսն էլ կը  
լինին հաւասար սպասուելի:

ԱՆՏ.Յ.

# Ս Խ Ա Լ Ի Ռ

Երեւ	տող.	սխալ.	տաղիլ.
1.	10.	Ներսիսեան	Ներսիսեան
16.	15.	կազամբը	կազամբը.
16.	27.	դժուա	դժուա
16.	34.	Քիզացիները	Քիզացիները.
33.	50.	ճախվում	ճախում.
39.	18.	Հարցմունքներին	Հարցմունքներին
45.	33.	ըը	օրը.
48.	11.	կորցրած	կորած
53.	20.	վեր էր ընկնում	վեր էր ընկ
55.	15.	սաղ	սաղ.
57.	1.	սաղ	սաղ.
57.	12.	ին	էն
58.	31.	կիզտտած	կիզտտած.
59.	17.	վեր	վեր.
59.	32.	Մորհասը	Մորհասը
66.	20.	աղի	աղի
68.	14.	շքը	շողքը.
68.	50.	հայրը	մայրը.
88.	3.	սաղ	սաղ
92.	29.	վեր	վեր











2013

4983

